Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

UGPGF
52

5/103

Սուքիասյանների Պողոսյանի
ՍԵՐԻԵՐՈՎԿԻՆ
Ստեփանակերտ

2002

ՍԵՐԵՔ
52

ՍՐԲՈՅՆ

ԱՒԳՈՍՏԻՆԵԱՅ

ՀԻՊՊՈՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԱՌԱՆՁՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

ԵՒ

ԱՌՁԵՌՆԱԿԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1858

23175

Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՏԻԿՆՈՋ ՄԱՐԻԱՄՈՒ

ՍՕՖԵԱԼԵԱՆ ԹԸՆԿԸՐԵԱՆՑ

1851 (48 60 41) 52-2001

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Թարգման սրտի սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ զաւրքն Աւգուստինոս Հիպպոնայ հայրապետ՝ Թուի մեզ կարծել, և զմերոյ Հոգերգողին զբանս՝ Թարգման սրտին Աւգուստինեայ։ Զի Թէպէտ յառաջ էր դարուք հնգեքումբք Աւգուստինոս քան զմերս Նարեկացի, այլ որպէս Թէ հոգւով ընԹերցեալ զՀոգի Նորա՝ զնորին խորուԹիւն յայտնաբանեաց 'ի խորին պարզուԹեան իւրում։ և Նարեկացին՝ որոյ չէր տեսեալ զգիրս Աւգուստինոսի՝ ըզ-

նորայն հոգի եբեր յանձին։ Քանզի մի և նոյն աղբիւր սիրոյ՝ հոգի Աստուծոյ յերկոսին տպաւորեաց զնոյն սէր, զնոյն հաստելով սիրտ հրաբորբոք յերկոսեան, կենդանախարուկեալ սիրովն Աստուծոյ։ Ընթերցիր սիրով զերկոսին 'ի սրտի, և ժառանգ լեր մի և նոյն սիրոյ, որ անթարգմանելին է, բայց իմանալի, ցանկալի և ժառանգելի։

Նորին սիրաբուն սրտի է սեպհական՝ ոչ կրկնութեան անդադար՝ նմանաւոր կարծեցեալ բառից և բանից, որպէս 'ի Նարեկն, նոյնպէս և 'ի պիտառութիւնս Աւգոստինոսի։ Թո՛ղ ըզհանգամանս բարբառոյ՝ զոր գրիչն բացադրէ իբրև թարգման լեզուի քան սրտի։ իսկ ձև կրկնութեանն է պարզապէս թարգման սրտի։ զորոյ զթանձր օրինակս զոր ամենայն տեսանես 'ի խօսել մարդկան զառաւել սիրելեաց և զկարի ախորժելեաց։ զի կրկնեն և է-

մեքինեն և չորեքինեն զբանս քաղցրու-
թեան կամ՝ գովութեան, ևս առաւել
կարօտութեան. և ոչ յագին՝ բայց ան-
յագութեամբ։ Ցանկալի է մեզ՝ որպէս
և Հոգեսիրի Աւն տպագրութեան գրոցս
փափաքողն, զի որ ընթեռնուն զմատե-
նիկս զայս աղօթից՝ առնուցուն փոքր
'ի շատէ զքաղցրութիւն սիրոյն Աս-
տուծոյ։

ԳԻՐՔ

ԱՌԱՆՁՆԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ

Մակիսանաս Պողոսեան
ՍԵՐԻԲՐԱԿԵԱՆՑ
Ատրախան

N° 689

Bouquet Lebel Edit. Imp. Paris.

ԳԻՐՔ
ԱՌԱՆՁՆԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ
ՀՈԳԻՈՅ
ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս անպատուոյն քաղցրութեանն Աստուծոյ.

Ա. Ծանեայց զքեզ տէր՝ արտաքին իմ. ծանեայց զքեզ զօրութիւն հոգւոյ իմոյ: Յոյց ինձ զքեզ մխիթարիչ իմ, տեսից զքեզ լոյս աչաց իմոց: Մատիր առ իս խնդութիւն հոգւոյ իմոյ. տեսից զքեզ ուրախութիւն արտի իմոյ: Սիրեցից զքեզ կենդանութիւն հոգւոյ իմոյ: Երևեաց ինձ՝ խնդութիւն իմ մեծ և ափոփութիւն տէր Աստուած իմ՝

կեանք իմ և փառք հոգւոյ իմոյ։ Գոհից զքեզ ցանկութիւն սրտի իմոյ, փարեցայց զքեզ սէր անձին իմոյ։ Գիրկս արկից քեզ փեսայ երկնաւոր՝ ցնծութիւն իմ պատարուն ներքոյ և արտաքոյ։ Ժառանգեցից զքեզ յաւերժ երանութիւն, ժառանգեցից զքեզ 'ի սրտի իմում, կեանք երանաւէտ, անուշակ քաղցրութիւն անձին իմոյ։ Սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ, տէր ամրութիւն իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ։ Սիրեցից զքեզ Աստուած իմ, օգնական իմ, աշտարակ զօրութեան իմոյ՝ և յոյս իմ զուարթարար յամենայն 'ի վիշտս իմ։ Ի քեզ միացայց 'ի բարուոջդ եղելում, զի բաց 'ի քէն չկայ ուրեք բարի. 'ի քեզ յամենաբաւդ ճոխացայց. զի բաց 'ի քէն չկայ ինչ բաւական։ Բաց զախեալ մուտս լսելեաց իմոց՝ հատու բանիւդ քան զամենայն սուր երկայրի՝ լսել ինձ զբանս քո։ Որոտա տէր յերկնից ահագին և բարձրագոչ ձայնիւ։ Խռովեսցի ծով և լրութիւն նորա. շարժեսցի երկիր, և ոչ 'ի նմա բովանդակ։

Բ. Լուսաւորեա զաչս իմ լոյսդ անպարագիր՝ փայլեա զփայլատակունս քո և ցրուեա զնոսա՝ զի մի տեսցեն զնանրութիւն։ Շանթեա և խռովեա զնոսա, երևեսցին աղբերք ջուրց. և յայտնեսցին հիմունք տիեզերաց։ Տուր զօրութիւն աչաց իմոց լոյսդ անտեսանելի՝ զի տեսից զքեզ։ Նորաստեղծեա ինձ հոտոտելիս՝ հոտ կենաց, որ զհեա քո 'ի հոտ խաղոց ընթանայցէ։ Բժըշկեա զքիմս իմ գիտել և խելամուտ լինել և տեսանել որչափ զեղուն է քաղցրութիւն քոյ տէր՝ զոր պահեցեր որոց լցեալ են սիրով քով։ Շնորհեա ինձ սիրտ 'ի խորհել զքեզ. և հոգի սիրել զքեզ. միտս՝ որ ցանգ առ քեզ կանխեսցէ. իմացուն՝ որ զքեզ 'ի միտ առնուցու միշտ, 'ի քեզ յարեսցի անապակ զուարճութեամբ։ Նա և սէր իմաստուն՝ որ անդուլ զքեզ սիրեսցէ։ Ո՞վ կեանք՝ որում կեան ամենեքեան, որ կեանս շնորհէ ինձ. կենդանութիւն իմ, որով կեամս, և առանց նորա մեռանիմ. կեանք որով յառնեմ, և առանց նորա կորնչիմ, կեանք՝ յոր խըն-

դամ, և առանց նորա տագնապիմ։ Կեանք կենդանատու, քաղցր և սիրելի և անմոռաց. խնդրեմ զքեզ, ո՞ւր ես։ Ո՞ւր գտից զքեզ. զի առ յինէն նուազեալ 'ի քեզ հաստատեցայց։ Մերձ կաց առ հոգւոյ իմում. մօտ առ սրտիս. հուպ բերանոյս, և ականջացս, կանխեա ինձ յօգնութիւն. զի սիրով քոյ թաղկանամ, զի առանց քո մեռանիմ, և յառնեմ երկրպագեալ քեզ։ Հոտ քո զիս բժշկէ, յիշատակ քո ապաքինէ զիս. բայց ես յագեցայց յերևեալ փառաց քոց կենդանութիւն հոգւոյ իմոյ։ Ցանկայ և նուաղէ անձն իմ ընդ յիշատակ քոյ. երբ եկից և երևեցայց քեզ խնդութիւն իմ։

Գ. Ընդէր դարձուցանես զերեսս քո՝ ցնծութիւն իմ յոր զուարճանամ։ Ո՞ւր թագչիս ով գեղեցիկդ՝ որում փափաքեմ։ Ի զմայլեալ հոտ քո կենդանի մնամ և ցնծամ. այլ զքեզ ոչ տեսանեմ։ Զձայն քո լսեմ և կենդանանամ. սակայն զմէ ծածկես զերեսս քո։ Աստ ապաքէն՝ ոչ տեսանէ զիս մարդ՝ և ապրի. աղէ տէր, մեռայց գէթ

զքեզ տեսից. տեսից և մեռայց ասասա-
նօր։ Ոչ խնդրեմ կեալ, մեռանել փա-
փաքիմ. ցանկամ լուծանիլ և ընդ
Քրիստոսի լինել։ Անձկանօք մնամ
մահու՝ զի տեսից զՔրիստոս. հրաժա-
րիմ 'ի կենաց զի կեցից ընդ Քրիստո-
սի։ Ո՛վ տէր Յիսուս ընկալ զհոգի իմ.
կեանք իմ ընկալ զանձն իմ. ցնծու-
թիւն անձին իմոյ ձգեա առ քեզ ըղ-
սիրտ իմ։ Կերակուր իմ քաղցր, ճա-
շակեցից զքեզ։ Գլուխ իմ ուղղեա զիս.
լոյս աչաց իմոց՝ լուսաւորեա զիս. ան-
մահութեան նուագ՝ զիս ներդաշնա-
կեա։ Բուրումն անուշահոտ՝ կենդանա-
ցո զիս։ Բանդ Աստուծոյ՝ նորաստեղ-
ծեա զիս։ Բարեբանեալդ՝ ուրախացո
զհոգի ծառայի քոյ. մուտ 'ի սա ցնծու-
թիւն իմ, զի ցնծասցէ 'ի քեզ. մուտ 'ի
սա լիապատարագ, զի քաղցրասցի խոր-
հուրդ սորա։ Լոյսդ յաւէտահաղաց
փայլեա 'ի սա զլոյս քո՝ 'ի միտ առ-
նուլ զքեզ, ճանաչել և սիրել։ Եւ վասն
այնր ոչ սիրէ զքեզ տէր, զի ոչ ճանա-
չէ զքեզ. և ճանաչէ իսկ ոչ, զի ոչ 'ի
միտ առնու. իսկզբանէ 'ի միտ առնուլ՝

զի զայս քո ոչ ընդունի. լոյսն 'ի խաւարի ծագէ, և խաւարն նմա ոչ լինի հասու։

Դ. Ո՛վ լոյս մտաց, ո՛վ լուսահրաշ ճշմարտութիւն. ո՛վ իսկաձեմ պայծառութիւն՝ որ լուսաւորէ զամենայն մարդ որ գայ յաշխարհ։ Զեկեալն յաշխարհս՝ այլ ոչ և զպարտաւանդն 'ի սէր նորա. քանզի որ սիրէ զաշխարհ՝ խիզախէ թշնամի Աստուծոյ։ Ի բաց մերժեա զկնաւար յանդնդոց մտաց իմոց. զի տեսցէ զքեզ խելամտութեամբ, զի ծանիցէ զքեզ բովանդակութեամբ, սիրեսցէ զքեզ ծանօթաբար։ Զի որ միանգամ ծանեաւ զքեզ՝ նա 'ի քեզ յարի, և զանձն իւր մոռանայ. առաւել քան զանձն սիրէ զքեզ. զանց արարեալ զանձամբ՝ առ քեզ հասանէ զմայլել 'ի քեզ։ Յաղագս այսորիկ տէր՝ ոչ ըստ չափուն պարտուցս բաւականութեան սիրեմ զքեզ. զի ոչ լի բովանդակ ճանաչեմ զքեզ. այլ զի ընդ աղօտ նկատեմ 'ի քեզ, և սէր իմ առ քեզ թերի է. վասն այնր և խնդութիւնս 'ի քեզ նիւազ։ Այլ 'ի քէն 'ի ճշմարիտ ներ-

քին խնդութենէդ 'ի բաց անջատեալ՝ արտաքնովքս 'ի վերջանալս առ 'ի քէն՝ ակն դնեմ արտաքնովքս ստապատիր բարեկամութեանց։ Եւ այսպէս հիգացեալ գտայ, քանզի զոր արժանն էր ինձ զսիրտ իմ բովանդակ սիրով և ըղձիւ քեզ միայնոյ պատարագել, 'ի անուտիս անձնատուր եղէ. և վասն այնր ունայնացայ, զի զունայնութիւն սիրեցի։

Այսր աղագաւ ոչ խնդամ տէր 'ի քեզ, և ոչ 'ի քեզ միանամ, զի ես յարտաքինս անդ և դու 'ի ներքինս. ես յառժամանակեայս և դու յաստուածեղէնս, ես 'ի դիւրեղծականս շաղեալ դնիմ խորհրդով, ատանիմ լեզուաւ, և դու տէր 'ի յաւիտենականս բնակես և ինքն յաւիտենականութիւն ես. դու յերկինս՝ ես յերկրի. դու զբարձունս սիրես՝ ես զստորինս. դու զերկնաւորս՝ ես զերկրաւորս. և ԵՐԲ էցէ ներհակացնացս միաբանութիւն։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս թշուառութեան և տկարութեան մարդկան.

Ա. Եղուկ եմ՝ ես, ելցէ թէ թիւրութիւնս իմ՝ 'ի քո ճշմարտութիւնդ օրինակեսցի, 'ի հաւասարութիւն: Դու տէր ցանկաս առանձնութիւն, ես խուռն բազմութեան. դու լռութեան՝ ես ամբոխի. դու ճշմարտութեան՝ ես ունայնութեան. դու խնդրես զարբութիւն, և ես զպղծութիւն: Զի՞ ես տէր: Դու իսկութեամբ բարի, և ես չար. դու բարեգութ, և ես անբարիշտ. դու սուրբ՝ և ես տառապեալ, դու արդար և ես անիրաւ: Դու լոյս ես, և ես կոյր. դու կենդանութիւն և ես մեռելութիւն. դու դեղ դարմանոյ՝ իսկ ես ախտացեալ. դու խնդութիւն՝ և ես տրտմութիւն: Դու ամենեին ճշմարտութիւն, և ես բովանդակ ունայնութիւն, որպէս և ամենայն մարդ

կենդանի։ Վա՛յ ինձ, զինչ այլ ևս ա-
սացից ով արարչագործ տէր. մատո
զունկն քո արարիչ։ Արարած եմ քո՝
և ահա կորնչիմ. ստեղծուած եմ քո, և
արդ աւանիկ մեռանիմ. հրաշակերտ
եմ քո. արդ փոքր մի ևս 'ի հող դառ-
նամ. գործած եմ քո. ձեռք քո տէր
արարին և ստեղծին զիս. ձեռք՝ որ հե-
ղուսեալ բևեռօք վասն իմ. զգործս ձե-
ռաց քոց մի անտես առներ. աղաչեմ՝
հայեաց 'ի վերս ձեռաց քոց։ Ահա տէր
'ի վերայ ձեռաց քոց նկարեցեր զիս.
'ի դոյն ակնարկեա և փրկեա զիս։ Առ
քեզ կարդամ, զի ստեղծուած եմ
քո. ստեղծող ես՝ նորոգեա զիս։ Առ
քեզ գոչեմ, զի քո արարած եմ. կեն-
դանարար ես, կենագործեա զիս։ Վե-
րակարդամ առ քեզ, զի հրաշակերտ
եմ ձեռին քո. արարիչ ես, դու զօ-
րացո զիս։ Խնայեա յիս տէր՝ զի չեն
ինչ աւուրք կենաց իմոց։

Բ. Զինչ է մարդ՝ զի կարասցէ խօ-
սել ընդ քեզ ընդ տեառն արարչի իւ-
րոյ։ Խնայեա յիս՝ որ սկիզբն կալայ
խօսել ընդ քեզ։ Թող ծառայի քում՝

որ համարձակ բարբառել ընդ տեառ-
նըդ։ Հարկի չկան օրէնք։ Տան-
ջանք իմ բուռն առնեն ինձ բարբա-
ռել. տագնապս որ վշտագնէ զիս տայ
ինձ աղաղակել։ Հարեալ եմ ախտիւք՝
առ բժիշկդ պաղատիմ. կոյր եմ՝ առ
լոյսդ ձեպեմ. մեռեալ եմ՝ առ բաշխողդ
կենդանութեան կարդամ։ Դու բժիշկ
ես, դու լոյս, դու ինքն կենդանարար
Յիսուս նազովրեցի՝ ողորմեա ինձ. որ-
դի Դաւթի ողորմեա ինձ՝ աղբիւր ո-
ղորմութեան։ Լուր՝ զոր առ քեզ կար-
դայ հիւանդն տկարացեալն։ Լոյսդ որ
անցանես՝ նայեաց 'ի կոյրս. ձգեա նմա
զձեռն քո զի առ քեզ եկեսցէ, և լու-
սով քով զլոյս տեսցէ։ Կեանք կենդա-
նի՝ կենդանացո զմեռեալս։ Զի՞նչ եմ
ես՝ զի ընդ քեզ խօսեցայց։ Վա՛յ ինձ
տէր, ինայեա յիս տէր։ Դիակն եմ
նեխեալ, կերակուր որդանց, անօթ
գարշութեան, և ճարակ հրոյ։ Զի՞նչ
եմ ես՝ զի ընդ քեզ խօսեցայց. վա՛յ
ինձ տէր, ինայեա յիս տէր։ Մարդ
եմ մեղաւոր՝ կանանցածին սակաւա-
կեաց, և նշաւակ աղետից բազմաց.

մարդ մնոսի, հաւասարեալ անասնոց անբանից և նմանեալ նոցա։

Գ. Դարձեալ, զինչ իցեմ ես։ Ան-դունդք խաւարին, երկիր աղէտից, որդի բարկութեան. անօթ արհամարհութեան. ծնեալ մեղօք, կեցեալ 'ի վիշտս, և տառապանօք հասեալ 'ի մահ։ Եղուկ զիս, զինչ եմ ես, զինչ լինելոց եմ ես։ Անօթ աղբևաց և փտութեան, լցեալ պղծութեամբ և դարշութեամբ. կոյր, աղքատ, մերկ, բաղմաց պիտոյից կարօտեալ, մոռացեալ զէլ և զմուտ իմ, ողորմ կերպարան և ապականացու։ Աւուրք իմ որպէս հովանի անցանեն, և կեանք իմ իբրև զբստուեր լուանի նուազէ. աճէ որպէս ծաղիկ 'ի ծառս՝ և երագ թառամի, ծաղկէ՝ և անդէն առ նմին գոսանայ։ Կեանքս իմ՝ զաղփաղփուն և դիւրեղծական. որ որչափ աճէ՝ այնչափ և նուազէ, և որչափ յառաջադէմ խաղայ՝ նոյնչափ և առ դրամբք մահու դեգերի։ Կեանք դիւրապատիր և ատուերատեսակ, լարեալ որոգայթիւք մահու։ Մինչդեռ տրտմութիւն ունի զիս,

մինչդեռ հզօր եմ, և ահա վհատիմ. այն
ինչ կենդանի եմ, և մօտ նմին մեռանիմ.
մերթ երջանկացեալ, և մերթ հիգա-
ցեալ. մերթ ծիծաղիմ, և մերթ լամ։
Ահա զայսօրինակ ամենայն ինչ յեղա-
փոխ է. զի և ոչինչ ընդ մի ժամ ընդ
միով ճնայ կերպարանաւ։ Զհետ գայ
զայսոցիկ մահ դժնդակ, որ բազմադէմ
օրինակօք զօրհանապազ յեղակարծում
յափշտակէ զմարդիկ անապաւէն։ Զսա
ջերմամբ սպանանէ. զնորա ցաւովք
զոգին կորզէ. զոմն սով սպառէ. զայլ
ոք ծարաւ պապակէ. է զի 'ի ջուր ըն-
կղզմէ. է զի յորոգայթս կորուսանէ.
զորս հրով ծախէ, և զորս ընդ ժանեօք
գազանաց գիշատէ։ Զսա սրով խող-
խողէ. զնա մահուն արբուցմամբ վա-
րակէ. և զայլ ոք՝ յեղակարծ սասա-
նութեամբ ցանկացուցանէ վճարել
զկենցաղս աղցաւոր։ Եւ արդ 'ի մէջ
այս ամենայն դառն ալեաց՝ ուր չէք
ինչ հաւատալ քան զմահ, մուացօնք
լինի մարդոյ վախճան նորա։ Եւ մինչ-
դեռ հաստատուն համարէր կալ, զար-
կուցեալ և կորնչի յոյս նորա։ Զի

ոչ գիտէ մարդ՝ երբ, կամ ուր, կամ որպէս մեռանիցի. սակայն քաջայայտ է զի մեռանել անշուշտ է։

Դ. Ով տէր, զի՛արդ մեծ է թշուառութիւն մարդկան, յորում կամս և ոչ զանգիտեմ. որպէս դառն է տագնապս՝ յորմէ տառապիմ, և ինձ ոչ ցաւէ, և ոչ ձայն արկեալ գոչեմ առ քեզ։ Զ-քեզ կարդացից տէր՝ մինչչև անցեալ իցեմ ըստ կեանս, զի թերևս առանց անցանելոյ առ քեզ մնացից։ Արդ ասացից, պատմեցից զաղէտս իմ, խոստովան եղէց և ոչ ամօթ համարեցայց առաջի քո զտառապանս իմ։ Օգնեա ինձ զօրութիւն իմ որով բարձրանամ. հաս ինձ յօգնութիւն՝ որով զօրանամ. մատիր առ իս լոյսդ՝ որով տեսանեմ. երևեաց փառքդ՝ որով ցնծամ. երևեաց աղբիւր կենդանութեան յորում կեամ, ո՛վ տէր Աստուած իմ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս սքանչելի աստուածեղէն շուրոյ.

Ա. Ո՛վ լոյս՝ զոր տեսանէրն Տով-բիթ՝ երբ աչքն փակելովք ուսուցանէր որդւոյն զՃանապարհն կենաց: Լոյս՝ զոր Իսահակ տեսանէր հոգւով, երբ 'ի խաւարել աչացն առ արտաքս՝ պատմէր որդւոյն զհանդերձեալսն: Լոյս անտեսանելի, որում բացերև են գաղտնիք սրտից մարդկան: Լոյս զոր տեսանէր Յակովբ, յորժամ ըստ քոյին հոգեղէն ազգեցութեանդ նախապատմէր որդւոց իւրոց զգալոցսն: Ահա խաւար թանձրանայ զանդնդոք մտաց իմոց. դու լոյս ես: Ահա մառախուղս աղջամղեալ մածեալ կայ 'ի վերայ ջուրց սրտի իմոյ. դու ինքն ճշմարտութիւն ես:

Բ. Ո՛վ Բանդ, որով ամենայն ինչ եղև. և առանց քո եղև և ոչինչ: Նա-

խայաւիտեան Բանդ, և չկայ ինչ կան-
խագոյն քան զքեզ։ Ամենաբաւական
Բան, առանց քո ոչինչ են ամենայն ե-
ղականք։ Բանդ՝ որ ասացեր 'ի սկզ-
բանն, եղիցի լոյս՝ և եղև լոյս։ Աա
արդ և ընդ խս. եղիցի լոյս. և բանքդ
արդիւնք եղիցին. տեսից զլոյս և ծա-
նեայց՝ զոր ինչ չէ լոյս. զի առանց քո
խաւարն 'ի լոյս դառնայ ինձ, և լոյսն
'ի խաւար։ Առանց լուսոյդ չկայ ճշմար-
տութիւն, անդ խաւար և անդ ունայ-
նութիւն. չկայ յստակ տեսութիւն,
այլ բովանդակ խառնիխուռն. անդ
տգիտութիւն, և չկայ գիտութիւն. անդ
կուրութիւն, և ոչ գոյ տեսութիւն.
անդ անկոխ ճանապարհք, և ոչ արա-
հետ. անդ մահ՝ և ոչ կեանք։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս մահկանացու բնութեան մարդկան.

Ա. Աւասիկ տէր՝ զի լոյս ոչ գոյ, մօտ նմին հասեալ կայ մահ. նա՝ և ոչ մահ, զի ոչ ինչ իսկ է մահ: Զի նովին յոչէութիւն դառնամք, քանզի բնաւ երբէք ոչ երկնչիմք 'ի մեղանչելոյ: Եւ արդարև տէր, զի արժանի որոց գործեցաք ընդունիմք յորժամ 'ի չէք լինիցիմք՝ երբև զՅուր որ հեղու. զի առանց քո եղև և ոչ ինչ. և մեր՝ զոր ոչ էն գործելով ոչ ինչ լինիմք, զի առանց քո ոչ ինչ եմք, որով եղև ամենայն, և առանց նորա եղև և ոչ ինչ: Ո՞վ տէր, ո՞վ Աստուած Բան որով ամենայն ինչ եղև, և առանց նորա ոչ ինչ կերպացաւ: Վա՛յ ինձ հէգ և կուրացեալ առն, զի դու լոյս ես, և ես չեմ առ քեզ. վա՛յ ինձ հէգ և կարեվէր առն. զի դու փրկութիւն ես, և ես տարամերժեալ առ

'ի քէն։ Աւաղ ինձ հէգ և միշտ մոռ-
խաբ առն, զի դու ճշմարտութիւն ես,
և ես անչափաւեալ առ 'ի քէն։ Աւաղ
ինձ հէգ և մոլորական առն, զի դու
ճանապարհ ես, և ես հեռացեալ առ
'ի քէն։ Վայ ինձ հէգ և մեռեալ անձն.
զի դու կեանք ես՝ և ես առանց քո։
Վայ ինձ հէգ և չքացեալ անձն, զի
դու Բան ես՝ որով ամենայն ինչ եղև.
և ես մեկնեալ առ 'ի քէն՝ առանց որոյ
եղև և ոչ ինչ։

Բ. Ո՛վ տէր Բան, ո՛վ Աստուած
Բան, որ լոյս ես՝ և որով եղև լոյս. որ
ճանապարհդ ես, ճշմարտութիւն և
կեանք՝ յորում՝ չկայ խաւար, ոչ զար-
տուղի սխալ. ոչ ունայնութիւն և ոչ
մահ։ Լոյս՝ աւանիկ առանց քո խաւար
է. ճանապարհդ՝ և առանց քո զարտու-
ղի մոլորութիւն է. ճշմարտութիւնդ՝
և առանց քո ընդունայնութիւն է. կեն-
դանութիւն՝ և առանց քո մահ է։ Աստ
Բանդ, եղիցի լոյս, զի տեսից զլոյս և
զդուշացայց 'ի խաւարէն. տեսից զճա-
նապարհդ՝ և 'ի բաց կացից յանկոխ
վայրաց. տեսից զճշմարտութիւն՝ և

ՀՍՍՀ-ՍՍՐ

անձնապահ եղէց յունայնութենէ. տե-
սից զկեանս՝ և խուսեցից 'ի մահուանէ։
Ծագեա տէր զլոյս քո լոյս իմ՝ լուսաւո-
րութիւն իմ և փրկութիւն իմ, յորմէ
երկեայց տէր իմ, զոր բարեբանեցից
Աստուած իմ՝ զոր փառաւորեցից հայր
իմ՝ զոր սիրեցից փեսայդ իմ՝ որում
պահեցից զանձն իմ։ Լուսաւորեա ծա-
գեա զլոյս քո 'ի կուրացեալս որ նստի
'ի խաւարի և 'ի ստուերս մահու, և
ուղղեա զոտս նորա 'ի ճանապարհս
խաղաղութեան. որով մտից 'ի վայրս
հրաշակերտս խորանին մինչև 'ի տունն
Աստուծոյ՝ 'ի ձայն ցնծութեան և խոս-
տովանութեան։ Քանզի ճշմարիտ խոս-
տովանութիւն՝ ճանապարհ է մտանե-
լոյ 'ի քեզ 'ի ճանապարհդ, և ելանե-
լոյ յանկոխ վայրաց, և դառնալոյ առ
քեզ առ ճանապարհդ, զի դու ես ճըշ-
մարիտ ճանապարհ կենաց։

ԳԼՈՒԽ Ե.

Զի՞նչ իցէ յոչեռբիւն դառնալ.

Ա. Խոստովան եղէց, խոստովան եղէց քեզ Հայր, տէր երկնի և երկրի զցաւս իմ. զի մարթացայց հասանել ողորմութեան քում: Տառապեալ եմ ես և յոչէութիւն խոնարհեալ, և ոչ գիտացի: Դու Ճշմարտութիւն ես և ես չէի ընդ քեզ. խոց լքին զիս անօրէնութիւնք իմ՝ և ոչ ցաւէր ինձ. դու կեանք ես. և ես չէի առ քեզ: Ի չնք դարձուցին զիս, զի դու Բան ես, և ես չէի ընդ քեզ. որով ամենայն ինչ եղև, և առանց քո եղև և ոչ ինչ. և վասն այնր առանց քո յոչ ինչ դարձայ, քանզի չէութիւնն է որ 'ի չնք փոխարկէ: Ամենայն ինչ Բանիւդ եղեն, որ ինչ և որ զինչ որպիսի: Եռեռ Աստուած զամենայն զոր արար՝ և ահա բարի են յոյժ: Ամենայն ինչ որ եղև՝ Բանիւն եղև, և որ ինչ բանիւ եղեն բարի են յոյժ: Եւ

ընդէր. զի ամենայն ինչ բանիւ եղև և առանց նորա եղև և ոչ ինչ. զի չիք ինչ բարի՝ առանց ծայրագոյն բարւոյ։ Իսկ չար է՝ ուր չգուցէ ինչ բարի՝ և ահա ոչ ինչ է. զի այլ ոչ ինչ է չարն բայց եթէ պակասութիւն բարւոյն. որպէս ինչ և կուրութիւն չէ ինչ այլ՝ բայց պակասութիւն լուսոյ։

Բ. Արդ չարն չէ և չէ ինչ. զի եղև առանց բանի, առանց որոյ եղև և ոչ ինչ։ Եւ այն ապաքէն չար է՝ որ անբաժ է 'ի բարւոյն որով եղև ամենայն որ զինչ եղև։ Եւ որ ինչ ոչն է՝ ոչ եղև նովաւ, և յայն սակս չէ և ոչ ինչ։ Չարք են՝ զի եղեն իսկ ոչ. զի որ ինչ եղևն՝ բանիւ եղև, և ամենայնն բովանդակ բարի եղեն 'ի ձեռն բանին։ Եւ քանզի ամենայն ինչ բանիւ եղև՝ ապա չարն չեղև բանիւ։ Ապա որ ինչ ոչն եղև՝ չէ բարի. զի ամենայն որ ինչ եղևն՝ բարի է. և վասն այն՝ չարք են, զի ոչն եղեն. ուստի և չեն ինչ. զի առանց բանի եղև և ոչ ինչ։ Չարն չէ ինչ՝ զի ոչ եղև. իսկ թէ ոչն եղև, զիարդ չար իցէ. զի առ չարն պակասութիւն բարւոյ է

որով որ եղեն՝ բարի եղև։ Ապա առանց բանին լինել՝ չար է. զի էութիւն չէ. զի առանց նորա չէ և չէ ինչ։ Այլ զինչ իցէ բաժանելն 'ի բանէն։

Գ. Թէ զայդ գիտել խնդրես՝ լուր զինչ բանն իցէ։ Բանն Աստուծոյ ասէ. ես եմ Ճանապարհ Ճշմարտութիւն և կեանք. իսկ բաժանել 'ի բանէն՝ է մնալ առանց Ճանապարհի, առանց Ճշմարտութեան և առանց կենաց. քանզի և առանց նորա չկայ ինչ. վասն որոյ և չար է. զի տարանջատի 'ի բանէն՝ որով ամենայն ինչ բարի եղեն յոյժ։ Իսկ տարամերժութիւն 'ի բանէն՝ որով ամենայն ինչ եղև՝ ոչ այլ ինչ է՝ բայց եթէ պակասել և յեղելութենէ յոչէութիւն գնալ. զի առանց նորա չէ և ոչ ինչ։ Արդ որչափ 'ի բարւոյն արտուղի գնաս՝ 'ի բանէն 'ի բաց քեցես զքեզ՝ զի նա ինքն է բարին. և յոչինչ դառնաս, զի հեռի կաս 'ի բանէն, առանց որոյ ոչ ինչ եղև։ Եւ արդ տէր լոյս իմ, լուսաւորեցեր զիս տեսանել զքեզ. տեսի և ծանեայ զքեզ։ Զի ցորչափ 'ի քէն հեռացայ՝ նոյնչափ և յոչէութիւն փո-

խեցայ. զի մոռացայ զքեզ ինքն զբարիդ, և վասն այնր 'ի չարիս զեղծայ։ Վա՛յ ինձ հիգացեալումս, զի ոչ գիտէի թէ յոչէութիւն եղծանիմ 'ի թողուլս զքեզ։ Այլ զի՞ խնդրեմ ես. թէ ոչ ինչ էի՝ ի՞ւ հնարէի ճանաչել։ Գիտեմք թէ չարն ոչ ինչ է. և որ ինչ չէ՝ նա եղեալ չէ. և որ ոչն է բարի՝ ոչ է, զի ոչ ինչ է։ Արդ եթէ ես ընդ չեղեալս համարեցայ, յորժամ առանց քո եղէ, իբրու ոչ ինչ եղէ, ըստ նմանութեան դրոշելոց, որ ոչ ինչ իսկ են։ Քանզի կան նոցա ականջք՝ այլ ոչ լսեն. ունչս ունին՝ և ոչ հոտոտեն, աչս ունին՝ և ոչ տեսանեն. բերան ունին և ոչ խօսին. ձեռս ունին՝ և ոչ շօշափեն, ոտս ունին և ոչ գնան. և զամենայն գնմանութիւն ունին զանդամոց՝ այլ ոչ ինչ իմանան։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս գայթագղելոյ հոգւոյն 'ի մեղս.

Ա. Եւ քանզի մնացի առանց քո, ոչ կացի յիս, այլ յոչէութիւն փոխեցայ. և յայն սակս կոյր էի՝ խուլ և անզգայ. որ ոչ զբարին տեսանէի, և ոչ 'ի ձայնն խորշէի. ոչ 'ի միտ առնուի զկակիծ վերացս, և ոչ զխաւարն իմ նշմարէի. զի մեկնեալ էի 'ի քէն 'ի ճշմարիտ լուսոյ որ լուսաւորեա զամենայն մարդիկ որ գալոց են յաշխարհ: Վա՛յ ինձ. խոցեցին զիս, և ոչ ցաւէր ինձ. ձգեցին՝ և ոչ իմացայ. զի ոչ ինչ էի. զի կէի առանց կենաց որ է Բանդ՝ որով ամենայն ինչ եղև: Եւ յայն սակս, տէր լոյս իմ, թշնամիք իմ արարին ընդ իս զոր ինչ և կամեցան. հարին, մերկեցին, պղծեցին, յափշտակեցին, վերս 'ի վերայ եդին և սպանին. զի մեկնեցայ առ 'ի քէն և առանց քո ընդ չեղեալս համարեցայ:

Բ. Տէր կեանք իմ՝ որ արարեր զիս. լոյս իմ՝ որ կանգնեցեր զիս։ Պաշտպան կենաց իմոց՝ ողորմեա ինձ, և յարո զիս տէր Աստուած իմ, յոյս իմ, զօրութիւն իմ, զօրավիգն իմ, մխիթարութիւն իմ։ Յաւուր նեղութեան իմոյ հայեաց 'ի թշնամիս իմ և զերծո զիս. վասն զի ելեցին յերեսաց իմոց ատելիք անձին իմոյ. և ես կեցից քև 'ի քեզ։ Զի նոքա տէր խորհուրդ կալան վասն իմ, և տեսեալ զիս առանց քո՝ արհամարհեցին զիս։ Բաժանեցին 'ի մէջ իւրեանց զհանդերձս առաքինութեանց՝ որովք զիսն պերճացուցեր. արարին իւրեանց ճանապարհ զինև. ոտնհար եղեն ինձ. մրրովք մեղաց պղծեցին ըզտաճար քո սուրբ. եդին զիս յանապատ, և լքին 'ի թախծութեան։ Ընթանայի զհետ նոցա կոյր և մերկ. վարակեալ 'ի հաղբս մեղաց։ Ձգեցին զիս զկնի իւրեանց յախտից յախտս, և 'ի տղմոյ 'ի կարակուտ, գնայի կթուցեալ 'ի զօրութենէ առջի երեսաց վարողին զիս։ Ծառայ էի՝ և զծառայութիւն սիրէի, կոյր էի՝ և կուրութեան փափա-

քող. կապեալ էի՝ և ի կապանացս ոչ խորշէի։ Զդառնն քաղցր, և զքաղցրն դառն համարէի։

Գ. Տառապեալ էի՝ և ոչ 'ի միտ առնուի. և այն՝ զի տարանջատ կայի 'ի Բանէդ, առանց որոյ եղև և ոչ ինչ. որով բովանդակն պահպանի, և առանց նորա ամենայն ինչ 'ի չէք դառնայ։ Զի զոր օրինակ ամենայն ինչ 'ի ձեռն նորա եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ, նոյնպէս և ամենայնն բովանդակ նովաւ պահպանի, որ ինչ լցեն՝ եթէ յերկրի՝ և եթէ 'ի ծովս և յամենայն անդունդս։ Ոչ մասն 'ի մասն մածնուս 'ի վիմի՝ և ոչ յայլ ինչ արարածս, բայց զի բանիւն պահպանին՝ որով ամենայն ինչ եղև։ Ապա 'ի քեզ միացայց 'ի Բանդ՝ զի պահեսցես զիս, զի ուր միանգամ անջատեցայ 'ի քէն յիս ինքն կորեայ, մինչև դարձեալ դու տէր որ զիս ստեղծեր՝ անդրէն նորաստեղծեր։ Ես մեղայ՝ և դու ինձ յայց եղեր. ես անկայ՝ և դու կանգնեցեր. ես տգիտացայ՝ և դու ուսուցեր. ես ոչ տեսի՝ և դու լուսաւորեցեր։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս բազմադէմ բարեբարոյ բնութեանցն Աստուծոյ.

Ա. Եղուկ զիս, Աստուած իմ. որպէս զի հրամանք են ինձ սիրել զքեզ. ուստ ինձ՝ զիարդ գովեցից զքեզ. ցոյց ինձ՝ որպէս հաճոյ եղէց քեզ. ծանո ինձ զքեզ։ Որոտա տէր յերկնից 'ի վերուստ մեծ և ահեղ ձայնիւ. ուստ զիս ընդ ներքին ականջս սրտի իմոյ, և փրկեա զիս։ Բարեբանեցից զքեզ՝ որ արարեր զիս յոչնչէ. և լուսաւորեցեր զիս՝ զխաւարեալս, որ յարուցեր զիս զմեռեալս, որ տածեցեր զիս բարեօք քովք 'ի մանկութենէ իմմէ։ Մնուցանես ամենայն սքանչելի պարգևօք քո զայս որդն անպիտան, և զծնունդս մեղաց։

Բ. Բաց ինձ՝ ո՞վ դաւթեան բանալի, որ բանաս՝ և ոչ ոք փակէ որում դու բանաս. և ոչ ոք բանայ որում դու փակ-

կես։ Բաց ինձ զդուռն լուսոյ քոյ, զի մտից տեսից և ծանեայց, և խոստովան եղէց յամենայն սրտէ իմմէ. զի ողորմութիւն քո մեծ է՝ի վերայ իմ, և զերծուցեր զանձն իմ՝ ի դժոխոց ներքնոց։ Տէր Աստուած մեր՝ որպէս զի սքանչելի և գովելի է անուն քո ընդ համօրէն տիեզերս. և ո՛վ է մարդ զոր յիշատակես դու տէր, կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արասցես դու նմա։ Տէր յոյս սրբոց և աշտարակ զօրութեան նոցա։ Աստուած կենդանարար անձին իմոյ, որով կեամ և առանց քո մեռանիմ. լոյս աչաց իմոց, որով տեսանեմ. և առանց քո կացցեն աչք իմ՝ի տեսանելոյ։ Խնդութիւն սրտի իմոյ, և ուրախութիւն հոգւոյ իմոյ. սիրեցից զքեզ յամենայն սրտէ իմմէ և յամենայն մտաց և զօրութենէ իմմէ. զի նախ դու զիս սիրեցեր։

Գ. Եւ ուստի՞ ինձ այս ո՛վ արարչագործ երկնի և երկրի և անգնդոց՝ որ ոչն կարօտիս բարեաց իմոց. ուստի՞ ինձ այս՝ զի սիրեցեր զիս։ Ո՛վ իմաստութիւն՝ որ բանաս զբերանս համերց,

ով Բան՝ որով ամենայն ինչ եղև. բայց զբերան իմ. տուր ինձ ձայն ցնծութեան, զի պատմեցից զամենայն երախտիս քո զոր արարեր ընդ իս տէր 'ի սկզբանէ: Ահա տէր կենդանի եմ զի դու արարեր զիս. և յաւիտենից նախակարգեցեր լինել ինձ 'ի թուոյ ըստեղծուածոց քոց մինչ չև արարեալ էր քո զաշխարհս, մինչ չեւ ձգեալ զերկինս, մինչ չև էին անդունդք ծովու, յառաջ քան զերկիր առնել, և նախ քան զլերինս հաստատել, և զաղբերաց բղխել. մինչ չև ստեղծեալ էր Բանդ զայս ամենայն՝ յառաջատեսեալ նախախնամութեամբ ստուգապատում ճշմարտութեան քո՝ սահմանեցեր լինել ինձ արարած քո:

Դ. Եւ ուստի է ինձ այս, տէր բարեգութ, Աստուած բարձրեալ, հայր բազումողորմ, արարիչ ամենիշխան, և յաՀամի երկայնամիտ. որ իմ արժանիք էին, և զինչ շնորհք, զի հաճոյ թուեցաւ մեծվայելչութեանդ քո ստեղծել զիս: Ոչ էի՝ և դու ստեղծեր. ոչ ինչ էի՝ և յոչնչէ հաստատեցեր զիս: Եւ

որպէս այն. ոչ շիթ ջրեղէն, ոչ հուր, ոչ թուչուն, ոչ ձուկն, ոչ օձ՝ և կամ այլ ինչ յանասուն կենդանեաց, ոչ քար և ոչ փայտ: Ոչ՝ յորոց միայն զկեաղն ունին. ոչ յորոց միայն ենն, և աճեն, և զգան: Այլ գեր 'ի վեր քան զայս ամենայն հրամայեցեր լինել ինձ. 'ի կարգի որոց զկեաղն ունին, զի եմն. և յորոց զլինելն ունին և զաճելն, զի եմ և աճեմ. և յորոց են, աճեն և զգան. զի եմ, աճեմ և զգայուն եմ: Եւ փոքրու իւիք նուազ արարեր զիս քան զհրեշտակս. զի ընկալայ ընդ նոսա առ 'ի քէն՝ միտս 'ի ճանաչել զքեզ. սակայն փոքր ինչ նուազեալ. զի նոքա յայտնապէս ունին արդ զերանաւէտ տեսութիւն երեսաց քոց, իսկ ես յուսով. նոքա դէմ յանդիման, իսկ ես ընդ հայելի օրինակաւ. նոքա լեամ և ես փոքր 'ի շատէ:

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս արժանաւորութեանն մարդոյ հանդերձելոյ.

Ա. ԱՅԼ յորժամ եկեսցէ կատարեալն՝ նանրասցի որ ըստ մասնեայն է՝ 'ի տեսանել մեր զերեսդ բացաւ երեսօք: Եւ արդ զի՞նչ արգելու զմեզ չլինել փոքր քան զհրեշտակս, զորս դու տէր պսակեցեր յուսոյն պսակաւ՝ պճնելոյ փառօք և պատուով. զորս մեծապէս փառօք պատուասիրեցեր՝ իբրև զբարեկամս քո. նա մանաւանդ ըստ ամենայնի հաւասար եմք և կցորդ հրեշտակաց: Քանզի վկայեաց սմին և Ճըշմարտութիւնդ քո՝ հաւասարք են հրեշտակաց. զի՞նչ զարմանք թէ որդիք Աստուծոյ լինին, և հաւասք հրեշտակաց. զի ինքնին որդի մարդոյ եղև՝ որդին Աստուծոյ: Զայս խորհելով իմ համարձակիմ ասել՝ թէ ոչ ինչ փոքր է մարդ քան զհրեշտակս, նա ոչ հաւասար էր թ՝

այլ գերագոյն քան զՀրեշտակս. զի մարդ՝ Աստուած, և Աստուած՝ մարդ, և ոչ Հրեշտակ։

Բ. Եւ յայս սակս՝ մարդ արարած է արժանապատիւ. զի Բանն՝ որ էր 'ի սկզբանն Աստուած առ Աստուած, Բանն՝ որով ասաց Աստուած՝ եղիցի լոյս՝ և եղև լոյս, իմա Հրեշտակականն բնութիւն, Բանն՝ որով 'ի սկզբանն անդ արար Աստուած զամենայն ինչ, նա ինքն Բանն մարմին եղև և բնակեաց 'ի մեզ և տեսաք զփառս նորա։ Ահա փառք՝ յոր 'ի փառաւորելս և պանծամ, ահա խնդութիւն՝ յոր 'ի խնդալս ունի զիս ցնծութիւն։ Տէր Աստուած իմ՝ կեանք և փառք անձին իմոյ. խոստովան եղէց քեզ տէր Աստուած իմ՝ որ եդեր զիս բանաւոր և կարգեցեր Հրեշտակաց հաւասար. զի կատարեալ 'ի ձեռն բանիդ քո Թեւակոխեցից 'ի հաւասարութիւն Հրեշտակաց, զի զորդեգրութիւն ընկալայց՝ տէր 'ի ձեռն միածնի բանիդ քո. 'ի ձեռն որդւոյ քո սիրելւոյ՝ ընդ որ հաճեցար 'ի ձեռն փառակցի և համադոյակցի քոյ և մշտնջ-

ջենաւորակցի , Յիսուսի Քրիստոսի միոյ տեառն՝ փրկչի մերոյ , լուսաւորչի , մխիթարչի և բարեխօսի մերոյ առ քեզ , և լուսոյ աչաց մերոց , որ է կեանք մեր և ազատարար և միակ յոյս մեր . որ սիրեաց զմեզ առաւել քան զանձն իւր . որով համարձակութիւն ունիմք և յոյս հաստատուն , և քաջալերութիւն առ քեզ մատչելոյ : Զի եթէ իշխանութիւն յորդիս Աստուծոյ լինել որոց հաւատացեն յանուն նորա :

Գ . Բարեբանեցիր զանուն քո տէր՝ որ ստեղծեալ զիս 'ի պատկեր և 'ի նմանութիւն քո՝ արժանի արարեր աստուածեղէն փառաց՝ որով կարացիր լինել որդի Աստուծոյ : Ձեն ձեռնհաս ծառայութիւնկք այսմ, ոչ բաւեն քարինք , և ոչ ոք շարժին կամ աՀեն յօդս, կամ 'ի ծովու , և կամ յերկրի . զի ոչ եթէ նոցա իշխանութիւն 'ի ձեռն բանիդ քոյ լինել որդիս Աստուծոյ՝ զի չունին նոքա բան իմաստից : Քանզի և այս կարողութիւն գործ է բանական հոգւոյս որով Հանաչեմք զԱստուած : Եւ զայս կարողութիւն շնորհեաց մար-

դկան՝ զորս ստեղծ բանաւորս ըստ պատ-
կերի և ըստ նմանութեան իւրում։ Եւ
ես տէր մարդ եմ շնորհօք քոյ, և հնա-
րաւորիմ լինել որդի քո 'ի ձեռն շնոր-
հաց քոց՝ որում նոքա չեն ձեռնհաս։

Դ. Ուստի՞ է ինձ այս տէր՝ իսկու-
թիւն գերագոյակ, և գերակայութիւն
իսկապէս սկիզբն ամենայն արարա-
ծոց։ Ուստի՞ ինձ այս տէր՝ զի կարող
եղէց լինել որդի Աստուծոյ՝ որում նո-
քա չեն բաւական։ Դու ես՝ որ մնաս
յաւիտեանս՝ որ զամենայն համան-
գամայն արարեր։ Միով հրամանաւ
ստեղծեր զմարդիկ և զանասուն, զքա-
րինս և զխոտս երկրի։ Քանզի և ոչ իսկ
յառաջագէմ գտան արդիւնք նոցա, և
ոչ ուրուք նախագրաւ երևեցան շը-
նորհք. զի զամենայն ինչ միայն բա-
րութեամբ քով ստեղծեր. որք և հա-
ւասար գտան ամենայնիւ, ամենևին
սոսկացեալ յարդեանց։ Իսկ արդ թե
աքանչելագործէ բարութիւն քո մեծա-
հրաշ յայս քո արարած՝ զոր արարեր
բանաւոր՝ քան զայլովք ամենեքումբք
որք անման են 'ի բանէ։ Իսկ ընդէր

չեմ ես իբրև զայլն. կամ զի նոքա ամենայնք չեղեն իբրև զիս, կամ ես միայն իբրև զնոսա։ Զինչ են վաստակք իմ. կամ զինչ շնորհ որ ստեղծեր զիս բաւական յորդեգրութիւն Աստուծոյ, զոր ոչն ետուր այլոց ամենեցուն։ Քաւ ինձ տէր՝ թէ զայս առից 'ի միտ. միայն քո շնորհք, քո միայն բարութիւն ա- ռար զիս՝ լինել կցորդ քաղցրութեանդ քոյ։ Արդ այն շնորհ՝ որով յոչնչէ ըս- տեղծեր զիս՝ զնոյն խնդրեմ 'ի քէն, տէր, շնորհեա ինձ փոխարինել քեզ զայդ շնորհ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս ամենիշխան զօրութեանն Աստուծոյ.

Ա. Ամենակալ ձեռն քո յաւէժ անփոփոխ և անյեղլի ստեղծ յերկինս զհրեշտակս և յերկրի զզեռունս. ոչ 'ի նոսին գերագոյն՝ և ոչ 'ի սոսին տրկարացեալ: Զի զոր օրինակ ոչ այլ ոք ձեռն արար զհրեշտակ նոյնպէս և ոչ այլ ոք ձեռնհաս գտանիցի որդն ստեղծանել. որպէս ոչ ոք զերկինս Ճարտարապետել կարաց, նոյնպէս և ոչ այլ ոմն զդիւրատատան տերև ծառոյ. որպէս ոչ ոք կարաց ստեղծուլ մարմին՝ նոյնպէս և ոչ ոք սպիտակ առնել կամ թուխս զվարսս. այլ ամենակալ ձեռն քո՝ որում ամենայն ինչ հանդիտաբար հնարաւոր են:

Բ. Զի ոչ թէ դիւրին էցէ նմա ստեղծուլ զորդունս քան զհրեշտակս, և ոչ դժուարին՝ խորանայարկ պար-

զել զերկինս, քան տերև մի բուսու-
ցանել, և ոչ առ ձեռն պատրաստ հերս
աճեցուցանել, քան թէ մարմին հաս-
տատել. և ոչ դժուարին հիմնել զեր-
կիր 'ի վերայ ջուրց, քան զջուրս 'ի
վերայ երկրի: Այլ զամենայն զոր կա-
մեցաւ և արար յերկինս և յերկրի, 'ի
ծովս և յանդունդ ամենայն. և զիս
գլխովին ընդ նոսա զինչ օրինակ կամ-
ցաւ, կարաց և գիտաց: Կարէր տէր
ապաքէն և գիտէր ձեռն քո ստեղծա-
նել զիս քար, կամ հաւ թռչուն, կամ
օձ, կամ գազան. այլ ոչ կամեցաւ
վասն բարութեանդ քոյ: Եւ զի՞ չեմ
ես վէմ, կամ ծառ, կամ այլ ինչ գա-
զան. զի այսպէս տնօրինեաց բարու-
թիւնդ քո. և առ այդ ոչ ինչ յառաջ-
ընթաց գտան վաստակք իմ:

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս գովեստիւն Աստուծոյ որ 'ի վերայ է քան զմիտս.

Ա. Ուստի՞ լինիմ այս տէր, ուստի՞ լինիմ բանիք գովութեան 'ի բարեբանել զքեզ: Զի զոր օրինակ արարեր զիս առանց իմ, որպէս հաճոյ եղև առաջի քո, այսպէս և բարեբանեալ ես առանց իմ, որպէս հաճոյ է յաչս քո: Դու լինիր քեզ 'ի բարեբանութիւն ես. գովեսցեն զքեզ գործք քո՝ ըստ բազում մեծութեան քում: Զաւի փառաբանութեան քո տէր անկշիռ է մտաց. ոչ սիրտ խելամտէ, բան բերանոյ ոչ չափէ, և ոչ լսելիք բովանդակեն. զի սոքա անցանեն, և գովութիւն քո տէր մնայ յաւիտեան: Խորհրդոյ սկիզբն է և կատարած. ձայն՝ հնչէ և անցանէ. ունկն լսէ և դադարէ, իսկ գովութիւն քո մնայ յաւիտեան:

Բ. Իսկ արդ ո՞վ է որ զքեզ գովես-

ցէ. ոմ ոք 'ի մարդկանէ պատմեսցէ զփառս քո։ Գովութիւն քո անեղծական է՝ և ոչ սակաւավախճան։ Նա ըզքեզ բարեբանէ՝ որ քեզ բարեբանիչ զքեզ դաւանէ։ Նա զքեզ բարեբանէ, որ խոստովանի զանձն 'ի քոյոց վերջացեալ գովութեանց։ Յաւերժական բարեբանութիւն՝ որ ոչ երբէք անցանէ. 'ի քեզ է գովութիւն մեր, 'ի քեզ գովեսցի անձն իմ։ Ոչ մեք զքեզ գովեմք, այլ դու զքեզ, և քո, և 'ի քեզ. և մեր իսկ 'ի քէն է գովութիւն։ Անդ է մեր իսկապէս գովեսա՝ թէ առ 'ի քէն գովեսցուք՝ 'ի լուսաւորել լուսոյդ. զի դու գովութիւնդ ճշմարիտ՝ զճշմարիտն բաշխես գովութիւն։ Յորչափ յօտարացս ակնկալեմք գովութեան՝ և ոչ առ 'ի քէն, նոյնչափ և զքոյին կորուսանեմք զգովութիւնդ. զի նոքա դիւրաթառամք են՝ և քոյինդ յաւիտենական։ Թէ զանցաւորացս ակնդիմք զհետ՝ զյաւիտենականն կորուսանեմք գովութի. իսկ թէ զյաւիտենականն խնդրեսցուք՝ ոչ պարանիմք 'ի սէր անցաւորացս։ Մշտնջենաւոր գովութիւն, տէր

Աստուած իմ, յորմէ ամենայն գոլութիւն, և առանց նորա և ոչ ինչ. չեմ բաւական գովել զքեզ առանց քո. կա՛ ալոյց զքեզ և գովեցից։ Զի զինչ եմ ես ինձէն որ իշխեցից բարեբանել զքեզ։ Հող եմ և մոխիր, շուն մեռեալ և նեխ, որդն և ապականութիւն։ Ո՞ եմ ես՝ զի գովեցից զքեզ տէր Աստուած հզօր, հոգի ամենայն մարմնոյ բնակեալ 'ի լոյս յաւիտենից։

Գ. Միթէ գովեսցէ՞ խաւար զլոյս, կամ մահ զկեանս։ Դու լոյս՝ և ես խաւար. դու կեանք, և ես մահ։ Միթէ գովեսցէ՞ նանրութիւն զճշմարտութիւն. դու ճշմարտութիւն՝ և ես մարդ նմանեալ նանրութեան։ Եւ ի՞նչ տէր գովեցից զքեզ. միթէ հիգութիւն իմ 'ի գովութիւն առցէ զքեզ. նեխեալս զբուրումնդ կենաց. այր իբրև զիս մահկանացու՝ որ այսօր է, և վաղիւ 'ի բաց բառնայ։ Միթէ գովեսցէ՞ զքեզ մարդ ապականացու, և որդն որդի մարդոյ։ Իշխեսցէ՞ բարեբանել զքեզ՝ յղացեալն, ծնեալն և սնեալն 'ի մեզս։ Զի չէ գովութիւն հաճոյական

'ի բերան առն մեղաւորի։ Գովեսցէ զք-
քեզ տէր Աստուած իմ, ամենիշխան
զօրութիւնդ քո, անպարագիր իմաս-
տութիւնդ, և անպատում բարութիւնդ։
Օրհնեսցէ զքեզ Աստուած գթութիւնդ
քո, մշտնջենաւոր զօրութիւն և աս-
տուածութիւն քո։ Բարեբանեսցէ
զքեզ ամենազօր կարողութիւնդ քո,
անբաւելի բարեգթութիւն և սէր քո՝
որով արարեր զմեզ տէր Աստուած՝
կենդանութիւն հոգւոյ իմոյ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս վարդահոտքեան առ Աստուած.

Ա. Եւ արարած ձեռաց քոց ընդ հովանեաւ թևոց քոց ակնկալայց բարութեանդ քում, որով զիսն ստեղծեր։ Օգնեա քումդ արարածոյ՝ զոր հաստեաց բարեգթութիւնդ քո. մի կորիցէ 'ի չարութեանս խմում՝ զոր արարն բարութիւն քո. մի կորիցէ 'ի թշուառութեան խմում՝ զոր գործեաց յիս գթութիւնդ քո։ Զի զինչ օգուտ յարարչութենէդ՝ թէ իջանիցեմ յապականութիւն իմ. զի ոչ եթէ 'ի նանիր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան։ Ստեղծեր զիս տէր, խնամ տար որում ստեղծեր. զգործ ձեռաց քոց մի անտես առներ. յոչնչէ արարեր զիս, և թէ ոչ խնամես զիս տէր՝ վերըստին յոչէութիւն անդր դարձայց.

զի որպէս ոչ էի՝ և արարեր յոչնչէ, այսպէս՝ թէ ոչ խնամ ունիցիս 'ի վերայ իմ անդրէն փոխարկիմ յոչնչութիւն։

Բ. Օգնեա ինձ տէր կեանք իմ՝ զի մի կորեայց 'ի չարիս իմ։ Թէ ոչ ստեղծէիր զիս տէր՝ և ոչ իսկ էի. արդ եմ՝ զի ստեղծեր. թէ ոչ խնամեսցես՝ ոչ ես եմ։ Զի ոչ եթէ վաստակք իմ և շնորհք ետուն քեզ ստեղծանել զիս, այլ բարեսէր քաղցրութիւնդ քո և գթութիւն։ Ալաչեմ զքեզ տէր՝ այն սէր որ ետ քեզ ստեղծուլ զիս՝ նոյն դարձեալ տացէ քեզ խնամել զիս։ Զի զինչ օգուտ է ստեղծանելդ զիս սիրովդ քով թէ կորեայց 'ի տառապանս, և ոչ հովանացի ինձ աչ քո։ Այդ գթութիւն քո, տէր Աստուած, բարեխօս լեցի քեզ փրկել զարարածս, որ և յօժարեցոյցն զքեզ հասանել զոր ոչն էր։ Այն սէր յօժարեսցէ զքեզ ապրեցուցանել զանձն իմ՝ որ յօժարեացն յարարչապործել. քանզի և չէ ինչ նքուազ քան զքեզ. իբրև զի՝ դու այն սէրն ես՝ որ յամենայնի նոյն ես։ Զէ ինչ

նուազեալ ձեռն քո տէր՝ որ ոչ յօժարեսցի 'ի փրկութիւն մեզ. ոչ թէ չըլսեն ականջք քո, այլ մեղք իմ խաղոց ընդ մէջ արկին իմ և քո, ընդ խաւար և ընդ լոյս, ընդ մահու օրինակիս և ընդ կենդանութիւնդ, ընդ ստութիւն և ընդ ճշմարտութիւն, ընդ եղծանելի կեանս իմ յաստիս, և ընդ մշանջենաւորութիւն քո։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս որդգայրից ցանկոչքեանց.

Ա. Ահա ստուերք խաւարի՝ որ ծածկեն զիս յանդունդս միգամած բանտիս, յորում անկեալ դնիմ՝ մինչև ծագեսցի տիւն՝ և խոնարհեսցին ստուերք, և եղիցի լոյս 'ի հաստատութիւն զօրութեան քոյ։ Զայն տեառն 'ի զօրութեան, և ձայն տեառն 'ի մեծվայելչութեան, ասասցէ. եղիցի լոյս՝ և 'ի բաց մերժեսցի խաւար. երևեսցի ցամաքն՝ և ընձիւղեսցէ երկիր զբան-

ջար խոտոյ՝ որ արասցէ սերմն՝ զկը-
տուղ բարի՝ զարդարութեան արքայ-
ութեան քոյ։ Տէր հայր և Աստուած
կենդանատու՝ յորում կեան ամենե-
քեան, և առանց նորա 'ի մեռելոց սա-
կի են ամենեքեան, մի թողցես զիս 'ի
ջար խորհուրդս, և զբարձրայօն ամ-
բարտաւանութիւն մի տար ինձ. բարձ
յինէն զցանկութիւնս իմ, և մի մատ-
ներ զիս անպատկառ և արձակերասան
հոգւոյ, այլ ստացիր քեզ զսիրտ իմ՝
զի զքէն խորհեսցի հանապազ։

Բ. Լուսաւորեա զաչս իմ՝ զի տես-
ցեն զքեզ, և մի մեծամտեսցեն առաջի
քո՝ փառք մշտնջենաւոր. և մի ձգես-
ցին յորս 'ի վեր են քան զինքեանս.
զաջակողմեանսն տեսանիցեն, և ոչ զա-
հեկինսն որք 'ի բացէ կան առ 'ի քէն։
Արտաքանունք քո յառաջ ընթացցեն
քան զգնացս իմ՝ զի նոքա քննեն զոր-
դիս մարդկան։ Խորտակեա զցանկու-
թիւն իմ քաղցրութեամբդ քով՝ զոր
պահեցեր երկիւղածաց քոց, զի ցան-
կացայց 'ի քեզ ցանկութեամբ յաւի-
տենականաւ, և զի մի անտեսք հրա-

պուրեալ և պատրեալ նեղքին ախոր-
ժանացն, զդառն քաղցր դնիցէ և ըզ-
քաղցրն դառն. զխաւարն լոյս՝ և զլոյսն
խաւար. զի ապրել մարթացայց 'ի հաղ-
բից աստի լարելոց 'ի թշնամւոյն ընդ
Հանապարհ աստի կենացս՝ որսալ զհո-
գիս մեղաւորաց՝ որովք լցեալ են տիե-
զերք համօրէն։ Զորս որ եռեան՝ ոչ
զանց արար լուութեամբ. այլ ասաց՝
որ ինչ է յաշխարհիս՝ ցանկութիւն է
մարմնոյ, ցանկութիւն աչաց՝ և ամ-
բարտաւանութիւն աստի կենաց։

Գ. Ահա տէր Աստուած իմ, լցաւ
տիեզերս որոգայթիւք ցանկութեանց՝
լարեալք ընդ ոտիւք իմովք, և ոչ ապ-
րեցի յայդցանէ։ Նա միայն՝ յորմէ 'ի
բաց առնուցուս զաչացն մեծամիտ ակ-
նարկութիւն, զի մի յափշտակեսցեն
զնա ցանկութիւնք աչաց. և զոր ապ-
րեցուսցես 'ի ցանկութենէ մարմնոյ՝
որ ոչ ունիցին զնա, և յորմէ 'ի բաց
մերժեսցես՝ զանպատկառ և զլրբենի
հոգի, զի մի պատրեսցէ զնա ամբար-
տաւանութիւն աստի կենացս։ Ո՛վ
մեծի չնորհիս՝ որում դու զայդ արաս-

ցեսս , անցանել աղաստութեամբ ընդ սոսա :

Դ. Եւ արդ փրկիչ՝ աղաչեմ զքեզ՝ օգնեա ինձ , զի մի անկայց առաջի թըշնամեաց իմոց , շաղեալ յորոգայթս նոցա՝ զորս լարեցին ընդ ոտիւք իմովք՝ առ 'ի պարանել զանձն իմ : Այլ կորզեա զիս՝ զօրութիւն փրկութեան իմոյ , զի մի ծիծաղեսցին զինև թշնամիք քո՝ որք ատեին զքեզ : Արի տէր Աստուած զօրութիւն իմ՝ և ցրուեսցին թշնամիք քո , և փախիցեն ատելիք քո յերեսաց քոց : Որպէս հալի մոմ 'ի հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց քոց . և ես թագեայց 'ի ծածկութեան երեսաց քոց , և ուրախ եղէց ընդ որդիս քո՝ լիացեալ յամենայն բարութեանց քոց : Եւ դու տէր Աստուած՝ հայր և մայր որբոց , լուր ձայնի որդւոց քոց , և պարզեա զթևս քո՝ զի ապաստան լիցուք ընդ նոքօք յերեսաց թըշնամեաց : Աշտարակ զօրութեան Իսրայելի՝ որ ոչ ննիրհես և ոչ ննջես պահպանդ Իսրայելի . քանզի և ոչ ննիրհէ և ոչ ննջեսցէ թշնամին՝ որ մարտնչի ընդ Իսրայելի :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս մարդկայինք շնչառութեան, և բարեբարութեանցն Աստուծոյ.

Ա. Ո՛վ լոյս՝ զոր ոչն տեսանէ լոյս օտար. լոյս՝ յոր այլ լոյս ոչ ակնարկէ։ Լոյս՝ որ աղօտացուցանէ զամենայն լոյս, և որ կուրացուցանէ զամենայն արտաքինս։ Լոյս՝ յորմէ ամենայն լոյս. և Ճրագ՝ յորմէ վառին ամենեքեան։ Ճրագ՝ առ որով խաւար են ամենեքեան, և ամենայն Ճրագունք խաւարամած։ Լոյս՝ որում յայտնի են ամենայն խաւարինք, և որում ամենայն մթութիւնք պարզեալ են։ Լոյս երկնային զոր կուրութիւն ոչ նսեմացուցանէ. զոր մառախուղ ոչ մթագնէ. զոր աղջամուղջ ոչ խաւարէ. զոր ոչինչ խափանէ. զոր ստուեր ոչ վերարկէ։ Լոյս՝ որ լուսաւոր առնես զամենեսեան միանգամայն՝ միահաղոյն և

միշտ։ Ձգեա զիս յընդարձակութիւն սիրոյ քոյ, զի յամենայն կողմանց տեսից զքեզ 'ի քեզ, և զիս 'ի քեզ՝ և զամենայն ինչ ընդ քեզ։ Մի թողուր զիս՝ զի մի թանձրասցին ստուերք տգիտութեան իմոյ, և անօրէնութիւնք իմ բազմասցին։ Քանզի առանց քո ամենայն ինչ խաւար է ինձ, և ամենայնն չար։ զի չկայ ինչ բարի առանց քո, որ եսդ իսկապէս՝ միայն և գերագոյն բարի։

Բ։ Զայս խոստովանիմ, զգոյն զայդ գիտեմ, տէր Աստուած իմ, զի ուր և իցեմ առանց քո՝ չար է ինձ յամենայնի, ոչ միայն արտաքոյ իմ՝ այլ և յանձն իմ գլխովին։ զի ամենայն լրութիւն զաստուցեալն յԱստուծոյ կարօտութիւն է ինձ։ Յագեցայց ես յերևել փառաց քոց։ Եւ դու տէր կեանք իմ երանաւէտ, տուր ինձ խոստովան լինել քեզ զտառապանս իմ, քանզի յորմէ հետէ 'ի կցորդութենէ անտի բարութեանդ քո, 'ի ծայրագոյն և 'ի միակ բարւոյդ կորզեաց զիս բազմակերպ տեսիլ առժամանակէից, և ցնդեաց ընդ զգայութիւնս մարմնեղէնս, և 'ի միոյն

'ի բազումս տարանջատեայ, փոխեցաւ ինձ լիութիւնս տառապագին, և կարօտութիւնս՝ զեղուն. քանզի բազմայ զհետ պնդելով՝ և ոչ միոքն յագեցայ, զի ոչ գտանէի զանփոփոխելիդ՝ և զանբաժանելի միակ բարիդ. զոր ստացեալ միանգամ՝ յայնմ հետէ ոչ ևս կարօտիմ, ստացեալ ոչ ցաւիմ. ժառանգեալ՝ յագեսցի ամենայն ցանկութիւն իմ:

Գ. Աւաղ հիգութեանս՝ 'ի հիգութեան վերայ. զի հոգի իմ տառապեալ հեռանայ 'ի քէն, որով միշտ լեցեալն էր և զուարճացեալ. զաշխարհի զհետ ընթանայ, ընդ որում հանապազ կարօտի և վշտանի: Աղաղակէ աշխարհս և ես պակասեմ. դու տէր ձայնես, և նորատաեղծիմ. այլ հեղգութիւն իմ զհետ գնայ նուազելոյն, քան կենդանարարին: Ահա այս է ցաւս իմ: Բըժիշկ հոգւոյ ապաքինեա զիս. առողջութիւն անձին իմոյ, զի խոստովան եղէց քեզ յամենայն սրտէ իմմէ 'ի վերայ ամենայն բարերարութեանց քոց՝ որովք տածես զիս 'ի մանկութենէ

իմմէ մինչև յալիս ծերութեան։ Պա-
ղատիմ առ քեզ մի ընդ վայր հարցես
զիս. արարեր զիս՝ երբ ոչն էի, և փըր-
կեցեր՝ այն ինչ կորուսեալն էի։ Կո-
րուսեալ և մեռեալ էի, իջեր առ մե-
ռեալս և զմեռելութիւնս 'ի քեզ ընկա-
լար. Թագաւորդ խոնարհեցար առ ծա-
ռայս. վասն զիս փրկելոյ՝ զքեզ մատ-
նեցեր։ Զի ես կեցից՝ դու մահու ան-
ջընչացար՝ և յաղթեցեր մահու։ Զիս
վերականգնեցեր քոյին խոնարհելովդ։

Դ. Կորուսեալ էի մոլորական, և մե-
ղք վաճառեալ. եկիր վասն իմ՝ առ 'ի
փրկութիւն իմ. և այնչափ զիս սիրե-
ցեր՝ մինչև փոխանակ իմ 'ի գին փըր-
կանաց եռուր զարիւն քո. սիրեցեր
զիս տէր՝ առաւել քան զքեզ. զի մե-
ռանել յօժարեցար վասն իմ։ Ուխ-
տիւդ այդու, և ծանուս գնով դարձու-
ցեր զիս յաքսորանացս, զերծուցեր
զիս 'ի ծառայութենէ, հաներ 'ի տան-
ջանացս, զանուն քո եդեր 'ի վերայ իմ,
և կնքեցեր զիս արեամբդ քով. զի ա-
նեղծ մնասցէ առ իս յիշատակ քո
և մի հեռասցի 'ի սրտէ իմմէ՝ որ ոչն

հրաժարեաց վասն իմ 'ի խաչէ։ Օծեր զիս Լուսաւոր քով՝ որով դու օծար, զի յանուն քո կոչեցայց քրիստոնեայ։ Ահա 'ի ձեռս քո նկարեցեր զիս, զի անմոռաց եղէց առ քեզ, միայն թէ և յիշատակ քո կացցէ առ ինձ։ Շնորհք քո և ողորմութիւն կանխեցին առ իս, քանզի 'ի բազմադէմ և յահաւոր վըտանգից ապրեցուցեր զիս, ազատիչ իմ։ Ի մոլորելս իմում՝ առաջնորդեցեր ինձ 'ի Ճանապարհս։ 'ի տգիտութեանս ուսուցեր զիս, 'ի մեղանչելս կշտամբեցեր, 'ի տխրութեանս մխիթարեցեր, յանցաւութեանս քաջալերեցեր, յանկանելս կանգնեցեր, 'ի կանգնելս հաստատուն կալար, 'ի գնալս՝ առաջնորդեցեր, 'ի գալս ընկալար, 'ի ննջելս պահեցեր, 'ի կարդալս և լուար։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Նայի Աստուած յամենայն ժամ՝ի գործս և՝ի խորհուրդս մարդկան.

Ա. Զայս և առաւել քան զսոյն բազումս արարեր ընդ իս երախտիս՝ տէր Աստուած իմ, կենդանատու հոգւոյ իմոյ. զորոց քաղցր է ինձ խօսիլ, խորհիլ միշտ և գոհանալ, զի բաւական կը տայց գովել զքեզ յամենայնի վասն ամենայն բարեաց քոց, և սիրել զքեզ յամենայն սրտէ իմմէ, և յամենայն անձնէ իմմէ, և յամենայն մտաց իմոց, և յամենայն զօրութենէ իմմէ. միանգամայն և բովանդակ իսկ՝ի սրտէ իմմէ, և որչափ ինչ բաւական գտանիցիմ: Երանաւէտ զմայլումն ես, տէր Աստուած իմ՝ որոց սիրեն զքեզ: Այլ զանգործս իմ տեսանեն աչք քո՝ որ լուսաւոր են քան զարեգակն, և նկատեն զամենայն ճանապարհս մարդկան,

և զխորս անդնդոց՝ և շուրջ տեսանէն անդուլ զբարիս և զչարիս։

Բ. Եւ քանզի դեր 'ի վեր անցեալ ես զամենեքումբք, ընուս զամենեսին, և զամենայնն լրիւ իւրով տեսանես, և ամենայնի խնամ ունիս զորս արարեր. զի ոչ զոք մերժես յորոց ստեղծերն, քննես զընթացս իմ և զհետս ոտից իմոց. և զցայգ և զցերեկ հսկես յիմ պահպանութիւն՝ հայելով զգուշութեամբ յամենայն 'ի գնացս իմ։ Աննիրհելի պահապան, զոգ անտես արարեալ քո զամենայն արարածովք երկնի և երկրի, յիս միայն դէտակն ունիս. զանց զայլովք արարեալ։ Զի ոչ առաւելու աննուազ լոյս տեսութեանդ քում թէ 'ի մին ևեթ ակնարկեսցես. և ոչ նուազ, թէ յանհամարս և 'ի զանազանս նայեսցիս։ Քանզի իբրև ընդ մի միայն նայիս յամենեսին և անձնիւրցն, թէպէտ զատուցելոց. զի բովանդակ խելամտեն հայեացք աչաց քոց։ Որպէս զամենայնն՝ նոյնպէս զմին. և որպէս զմէն մի, նոյնպէս և զընդհանուրսն՝ ասանց տրոհելոյ՝ կամ փոփոխութեան

կամ նուազութեան յակին արկանես։ Յամենայն ժամանակի՝ անժամանակ. խնամես զիս ամենայնիւ յամենայնի՝ որպէս թէ չգուցէ այլ ինչ խնամոց քոց արժանի։

Գ. Հսկես 'ի վերայ իմ որպէս թէ զնամքուսքք զանց արարեալ՝ միայն ընդ իս նայեսցիս, յամենայնի ականատես, և յամենայնի կազմ թէ զիս պատրաստ գտանիցես։ Յո՛ և գնացից ոչ թողուս զիս՝ մինչ չև իմ թողեալ զքեզ։ Ուր և իցեմ՝ ոչ 'ի քաց հեռանաս, զի ամենայն ուրեք ես, և յո՛ և գնացից՝ գտանեմ զքեզ, որով կացից մնացից. և մի կորեայց հեռացեալ առ 'ի քէն, զի առանց քո հաստատուն կալ անհնար է ինձ։ Խոստովանիմ զի զամենայն ինչ զոր առնեմ՝ առաջի քո է. և զոր առնեան դու քաջ տեսանես քան զիս. քանզի զոր ինչ գործեմ ես յամենայն ժամ՝ յամենայնի մերձ կաս, զի հայիս յամենայն խորհուրդս իմ, 'ի միտս, 'ի սէր և 'ի գործ։ Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ և խորհուրդ իմ։

Դ. Դու տէր տեսանես ուստի դայ

հոգի, ուր է և յո՞ գնայ. զի դու ես որ
քննես զամենայն հոգիս. դու դատա-
ւոր, գիտես քաջ՝ ո՞ր արմատ քաղցր ի-
ցէ կամ դառն, և ո՞ր գեղատաղարթ դա-
ղարանայ. և զարմատս նոցա մանրա-
պատում քննեցեր։ Նա՝ ոչ զզօրու-
թիւն միայն՝ այլ և զնեռքին խողովակս
նորա բացածագեալ ճշմարտութեամբ
լուսոյդ քո զննես քաջ, թուես, հայիս
և սահմանես. զի հատուցես իւրա-
քանչիւրում ոչ միայն ըստ գործոց և
ըստ խորհրդոց, այլ և ըստ նեռքին թա-
գուն ուղղոց արմատոյն՝ յորմէ բուսա-
նին արդիւնք գործոցն։ Դու տեսա-
նես թէ ուր ճգտիմ 'ի գործս իմ, զի՛
խորհիմ, և զինչ սիրեմ. լսեն ականջք
քո, տեսանեն աչք քո և իմանան. հա-
յիս 'ի նշանս և 'ի նշանակս, և արձա-
նագրես 'ի մատենիդ քում եթէ բարի
և եթէ չար. զի հատուցես ըստ ժա-
մուն՝ բարեաց մրցանակ և չարեաց պա-
տուհաս. յորժամ բանայցին գիրք, և
դատեսցին իւրաքանչիւր ըստ գրելոյն
յայնմ մատենի։

Ե. Թերևս այն ինչ զոր ասացերն

մեզ. քննեցիս զամենայն զգործս նո-
ցա. և որ ինչ ասի զքէն տէր զիւրա-
քանչիւրոցն 'ի միտ առնու նա զկատա-
րած. զի յամենայնի զոր ինչ գործեմք
քննես զնպատակ մտացն քան զգործ:
Ի խորհելս իմ զայս, տէր Աստուած իմ
ահաւոր և հզօր, երկիւղիւ և պատկա-
ռանօք վարակիմ. զի մեզ անխուսափ
հարկ է գնալ իրաւամբք և արդարու-
թեամբ, զի զամենայն ինչ գործեմք ա-
ռաջի աչաց դատաւորին՝ որ զամենայն
տեսանէ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Զի մարդ չէ իմիք բաշական՝ առանց աստուծածատուր շնորհաց.

Ա. Հզօր և սքանչելագործ Աստուած հոգւոց, և ամենայն մարմնոց. աչք քո քննեն զգնացս որդւոց Ադամայ, յօրէ ծննդեան նոցա մինչ 'ի կատարած, զի հատուցցես իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց վարձ կամ պատուհաս. ցոյց ինձ զի խոստովան եղէց քեզ զաղքատութիւն իմ. զի ասացի թէ մեծատուն եմ և չեմ իւիք կարօտեալ. և ոչ գիտէի թէ աղքատ եմ, կոյր, մերկ, հէգ և տառապեալ. կարծէի թէ ի ցեմ ինչ՝ որ բնաւ չէի. ասացի՝ իմաստուն եղէց՝ և յիմարեցայ. հանճարեղ համարեցայ, և պատրեցայ. և ահա տեսանեմ զի պարզև է քո՝ առանց որոյ յոչ ինչ եմք ձեռնհաս. զի թէ ոչ դու տէր պահեսցես զքաղաք՝ 'ի նանիր տքնին պա-

հապանք նորա։ Ուսուցեր զիս 'ի միտ առնուլ զչափ անձին իմոյ. զի թողեր զիս, և փորձեցեր զիս. ոչ զի դիտասցես զիս այլ զի ես խելամուտ եղէց անձին իմոյ։ Քանզի որպէս ասացի, ինձ կարծեալ այնպէս էր թէ իցեմ ինչ. կարծէի բաւական լինել անձամբ, և ոչ 'ի միտ առնուի թէ դու խնամես զիս. մինչ զի 'ի հեռանալ քո առ յինէն՝ տապաստանկայ. տեսի և ծանեայ զի ես պաշտպան իմ դու. ես ինձէն անկայ, և քև կանգնեցայ։

Բ. Բացեր ինձ զաչս իմ, ով լոյս, և զարթուցեր և լուսաւորեցեր զիս. տեսի, և ահա փորձութիւն է կեանք մարդոյ 'ի վերայ երկրի, մի պարծեսցի առաջի քո ամենայն մնեղի, և ոչ արդարասցի ամենայն կենդանի։ Զի որ ինչ դուցէ բարւոյ մասին որ սակաւ և որ շատ, է քո պարգև, և մեր չիք այլ ինչ՝ բայց եթէ չարիք։ Եւ թէ պարծեսցի ամենայն մարմին, բայց միայն ընդ չարիս իւր։ Այդ չէ փառք՝ այլ թշուառութիւն. ոչ իւիք պանծասցի ընդ բարին, և ոչ ընդ այն որ չէ իւր։ Քո

է տէր բարին, և քո են փառք։ և որ
ոք բարեօք քովք փառս անձին խըն-
դրեսցէ՝ և ոչ վասն քո չանասցէ, գող է
և աւազակ, նմանեալ սատանայի՝ որ
խնդրեացն գողանալ զփառս քո։ Զի
որ ոք զքո պարգևադ 'ի գովեստ լուր
հանցէ, ոչ խնդրելով 'ի նմին զքոյին
փառս այլ զանձին լուրոյ, թէպէտև վասն
պարգևաց քոց նա գովեսցի առ 'ի մար-
դկանէ՝ այլ 'ի քէն մերժեսցի, զի 'ի պար-
գևս քո զանձին լուրոյ և ոչ զքոյ խըն-
դրեաց զփառս։ Զի որ գովութիւն
գոսանէ 'ի մարդկանէ՝ տարամերժեալ
'ի քէն, ոչ գոցէ զօգնութիւն 'ի մար-
դկանէ 'ի դատելն քո, և ոչ ազատեսցի
'ի դատապարտելդ քո։

Գ. Եւ արդ տէր՝ որ նկարեցեր զիս
յորովայնի մօր իմոյ՝ մի թողուր զիս
անկանել յայն նշաւակ՝ մինչև յան-
դրգնել ինձ՝ կապտել զփառս քո. քո
են փառք որոյ են ամենայն բարիք. իսկ
մեզ ամօթ երեսաց և թշուառութիւն՝
որոց են ամենայն չարիք, մինչ չև քո
հաճեալ լցէ գթասիրել։ Ողորմեա
տէր, ողորմեա ամենեցուն, և մի առեր

զոք յորոց սահեղծերն. տուր մեզ զբա-
բիսդ քո, և Ճոխացո տէր Աստուած
զմեզ զտնանկացեալս գերագոյն պար-
գևօք քովք. զի սիրես զաղքատս, և
ընուս զնոսա աստուածութեամբ քով:
Ահա տէր՝ մեք աղքատքս որդիք քո եմք,
և հօտ քո փոքրիկ, բայց մեզ զդրուն-
քո. կերիցեն տնանկք և յագեսցին. և
գովեսցեն զքեզ որք թողին: Գիտեմ
տէր և խոստովան լինիմ՝ զի նոքա
միայն որք աղքատս համարին զանձինս՝
և խոստովան լինին քեզ զկարօտու-
թիւն իւրեանց՝ Ճոխանան առ 'ի քէն.
զի որք մեծատունս զանձինս առդնեն՝
յաղքատութեան անդ իւրեանց 'ի բաց
ելանեն 'ի քոյոց մեծութեանց:

Դ. Ահա խոստովան լինիմ քեզ, տէր
Աստուած իմ, զաղքատութիւն իմ, զի
'ի քեզ գրեսցին ամենայն փառք քո,
զի քո են ամենայն բարիք առ 'ի քէն
հաստեալք: Խոստովանիմ տէր զի ու-
սուցեր զիս՝ թէ չեմ այլ ինչ՝ բայց ա-
մենևին նանրութիւն, ստուեր մահու,
անդունդք խաւարին և երկիր անե-
րևոյթ և անպատրաստ, որ ոչ ինչ

վերընձիւղէ առանց օրհնութեանդ. պտղաբերէ և ոչ ինչ բայց միայն նա-խատինս, մեղս և մահ։ Թէ ելցէ բարի ինչ առ ինև՝ 'ի քէն ընկալայ. զոր ինչ ունիմ բարիս՝ քո են և 'ի քէն ընկա-լայ։ Ի կալս՝ քև հաստատեցայ, այլ 'ի կործանմանս՝ անձամբ գայթակղե-ցայ. և հանապազ կայի մնայի 'ի տղմի՝ եթէ ոչ դու 'ի վեր առնուիր զիս. և միշտ 'ի կուրութեան խարխափէի՝ թէ ոչ դու զիս լուսաւորէիր։ Յանկանիլս անմարթ էր ինձ յառնել՝ թէ ոչ ձեռն տայիր. և յետ կանգնելոյս՝ դարձեալ կործանէի 'ի բազում նուազս՝ եթէ ոչ հասանէիր ինձ յօգնութիւն։ Ի բա-զումս բազում անգամ կորնչէի՝ թէ ոչ խնամ տանէիր ինձ։

Բ. Այսպէս ահա չնորհք քո և ո-ղորմութիւն կանխեցին առ իս՝ փրր-կել զիս յամենայն չարեաց. յանցե-լոց քաւել, յառաջիկայից փրկել և յապագայից ազատել։ Նանրացուցեր առաջի իմ զորոգայթս մեղաւորաց, բարձեր զդէպս և զառիթս. զի եթէ ոչ ըստ այսմ օրինակի առնէիր դու ընդ իս,

գործէի արդեօք զամենայն մեղս աշխարհի։ Գիտեմ տէր զի չէք ինչ մեղք զոր ոչ արասցէ մարդ, թէ 'ի բացեայ եւ թէ արարիչն՝ յորմէ ստեղծաւս մարդ։ Այլ երագեցեր՝ զի մի գործեցից. հրամայեցեր ժուժկալել՝ և զեղեր զշնորհս քո՝ զի հաւատացից 'ի քեզ։ Զի դու, տէր, խնամակալ լինիս ինձ ընդ իմ և ընդ քո։ Շնորհ և լոյս պարգևեցեր յեռաս կալ յամենայն մեղաց։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս դիւրին և բազմադեմ փորձառութեանց նորա.

Ա. Տեղի եւ փորձիչն՝ ըստ քումդ ստեղծելոյ, պակասեաց տեղին և ժամանակն ըստ քումդ ստեղծելոյ։ Ի վերս վազեաց փորձողն. ոչ նուազեաց տեղի և ժամանակ, այլ դու զօրացուցեր զիս զի մի ունկնդիր եղէց նմա։ Եհաս փորձողն խաւարչտին՝ ըստ որում և

էն, և դու ինձ եւոուր զօրութիւն՝ արհամարհել զնա։ Դիմեաց փորձողն վառեալ զինու և զօրութեամբ. և դու սանձեցեր զնա և եւոուր ինձ ուժգնութիւն զի մի յաղթեսցէ ինձ։ Մերձեցաւ փորձողն կերպարանեալ'ի հրեշտակ լուսոյ, և դու նկուն արարեր զնա զի մի պատրեսցէ՝ զիս. լուսաւորեցեր զիս զի ծանեայց զնա. քանզի նա է վիշապն մեծ և հրաշէկ օձն հին, անուանեալն այս չար և սատանայ, որ ունի գլուխս եօթն և եղջիւրս տասն՝ զոր ստեղծեր խաղալ'ի ծովս յայս մեծ և ընդարձակ, յորում սողան զեռունք՝ որոց ոչ գոյ թիւ. և կենդանիք փոքունք և մեծամեծք, այս է՝ բազում ազգք դիւաց, որք ոչ ինչ գործեն'ի տուէ և'ի գիշերի՝ բայց շուրջ պատեալ'ի կլանել փութալով՝ թէ ոչ դու փրկեսցես։

Բ. Նա ինքն է վիշապն հին՝ երևեալն'ի դրախտին փափկութեան. որ տասամբ իւրով ձգէր զերրորդ մասն աստեղաց երկնից՝ և արկանէր զնոսա յերկիր. որ թունոտին իւրով ապականեաց ըզ-

ջուրս երկրի՝ առ 'ի մահ մարդկան ըմ-
պելոյ. որ զոսկի իբրև զկաւ առգնէ ա-
ռաջի իւր. և ձգի վատահութեամբ շըն-
չել զՅորդանան ըստ բերան իւր, և որ
չունի ինչ խէթ երկիւղի յումեքէ։ Եւ
ո՞ ոք պատսպարեսցի 'ի ժանեաց սորա.
ո՞ ոք թափեսցի 'ի բերանոյ նորա՝ եթէ
ոչ դու տէր՝ որ խորտակեցեր զգլուխս
վիշապիս մեծի։ Օգնեա մեզ, պարզեա
տէր 'ի վերայ մեր զթևս քո՝ ապաս-
տան լինել ընդ նովաւ յերեսաց վիշա-
պիս՝ որ պնդեալ է զհետ մեր, և ապ-
պարաւդ քո զերծո զմեզ յեղջերաց
նորա։ Քանզի այս ինչ է հանապազորդ
ճիգն նորա, և այս միակ ցանկութիւն
նորա, կլանել զհոգիս՝ զորս ստեղծեր։

Գ. Աղաղակեմք առ քեզ, Աստուած
իմ, փրկեա զմեզ 'ի մշանջենաւոր թըշ-
նամւոյն մերմէ, որ եթէ 'ի քուն ելցեմք
և եթէ յարթնիլ, եթէ կերիցուք և
եթէ արբցուք, և յամենայնի զոր ինչ
և գործեսցուք՝ զցայգ և զգերեկ կայ
'ի վերայ մեր նենգութեամբք և ա-
ղուեստիւք. է զի յայտնի և է զի 'ի
ծածուկ ուղղել զթունալից նետս իւր

ընդդէմ մեր՝ սպանանել զանձինս։ Սա-
կայն մեծ է անմոռութիւնս մեր. զի հա-
նապազօր տեսանելով զվիշապն բա-
ցեալ 'ի վերայ մեր զբերան իւր պատ-
րաստեալ 'ի կլանել, ննջեմք և մեղկա-
նամք 'ի հեղգութեանս մերում, իբրև
անվտանգս առաջի նորա՝ որ ոչ այլ ի-
միք՝ բայց միայն կորստեանս մերոյ փա-
փաքէ։ Անքուն արթուն կայ թշնամին՝
առ 'ի սպանանել, և մեր չիք փոյթ
արթնութեան՝ առ 'ի պահպանութիւն։

Դ. Ահա ձգեաց առաջի ոտից մերոց
զորոգայթս իւր անչափս, և զամենայն
ճանապարհս մեր բազմօք լցոյց պատ-
րանօք՝ զբռամբ ածել զհոգիս մեր։ Եւ
ո՞ ոք զերծ գոցի։ Որոգայթս արկ 'ի
ճոխութեան, որոգայթս յաղքատու-
թեան, որոգայթս 'ի կերակուրս, յըմ-
պելիս, 'ի քուն և յարթնութեան, 'ի
բանս և 'ի գործս, և յամենայն ճանա-
պարհս մեր։ Այլ դու, տէր, փրկեա
զմեզ 'ի հալբից որսորդաց և 'ի բանից
խստաց. զի խոստովան լիցուք քեզ՝ ա-
սելով. Օրհնեալ տէր որ ոչ եաս զմեզ
յորս առամանց նոցա։ Անձինք մեր

որպէս Հնձողուկ ապրեցան յորոգայ-
թից որսողաց. փշրեցան թակարդքն,
և մեք ազատեցաք։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Թէ Աստուած լոյս է արդարոց.

Ա. Դու տէր, լոյս իմ, լուսաւորեա
զաչս իմ, զի տեսից զլոյս՝ և գնացից 'ի
լոյս քո, և մի ըմբռնեցայց 'ի թակարդս
նորա։ Զի՞ ոք գնասցէ ընդ բազմա-
դէմ որոգայթս ընդ այսոսիկ՝ եթէ ոչ
տեսցէ զնոսա, և զիա՞րդ տեսցէ՝ թէ ոչ
լուսաւորեսցես լուսովդ քով. քանզի
նա է հայր խաւարին որ թագուցանէ
զորոգայթս իւր յաղջամղջի իւրում,
ունել 'ի նոսին զորս ի ցեն 'ի մթան անդ.
որք որդիք են խաւարիս, որ ոչ տեսա-
նէ զլոյս քո, ուր թէ ոք շրջեսցի՝ մի
երկիցէ։ Քանզի որ շրջի 'ի տուէ ոչ
դայթակղի. իսկ որ շրջիցի 'ի գիշերի՝
դայթակղի, զի լոյս չէ ընդ նմա։ Դու

տէր լոյսդ՝ լոյս եւ որդւոյն լուսոյ. օր աներեկ, յորում գնան որդիք քո անսասան. և զի որք հեռացեալ շաղեսցին առ 'ի նմանէ՝ 'ի խաւարի են, զի ոչ ունին ընդ իւրեանս զլոյսդ աշխարհի։

Բ. Ահա զորհանապազ տեսանեմք՝ զի որչափ տարադէմ ոք 'ի Ճշմարիտ լուսոյդ հեռանայ՝ այնչափ թաւալի 'ի խաւար մեղաւորաց. և որչափ կայ 'ի խաւարի՝ ուր ուրեմն տեսանէ զոր 'ի Ճանապարհի իւրում որոգայթս. ոչ տեսանէ, բազումս յափշտակի, և անկանի 'ի նոսին. և առ ահին՝ և զիւր իսկ կործանումն 'ի մոռացօնս արկանէ։ Իսկ որ իւրում անծանօթ լցէ գայթակղութեան՝ ուր ուրեմն յառնելոյն լինի 'ի խնդիր, որչափ զի 'ի հաստատութեանն զանձն իւր համարեսցի։ Այլ դու, տէր, որ լոյս ես մտաց, լուսաւորեա զաչս իմ՝ տեսանել և Ճանաչել՝ զի մի գնացից առաջի թշնամեաց իմոց։ Քանզի 'ի կործանումն մեր Ճգնի թշնամին մեր. հալածեա զնա յերեսաց մերոց, որպէս հալի մոմ յերեսաց հրոյ։ Նա է, տէր, աւազակն հին և յեսին՝ որ

պնդի յափշտակել զփառս քո, զի բար-
ձրացեալ և ուռուցեալ՝ անկաւ 'ի վերայ
երեսաց իւրոց. և 'ի բաց մերժեցեր
զնա 'ի լեռնէ սրբոյ քումմէ և 'ի հրա-
ցայտ քարանց՝ յորս շրջէրն։

Գ. Եւ արդ՝ կեանք իմ, տէր Աս-
տուած, քանզի անկաւ նա՝ ոչ դադա-
րէ հալածել զորդիս քո, և ցանկայ կո-
րուսանել զայս քո արարած յատե-
լութիւն քո, ով թագաւոր, զոր ստեղծ
ամենակալ բարութիւն քո ըստ պատ-
կերի քոյ՝ առ 'ի ժառանգել զփառս
քո՝ զոր կորոյս ամբարտաւանութեամբ
իւրով։ Այլ խորտակեա զնա հզօրդ
մեր՝ մինչ չև ծախեալ ի՛ցէ նորա զգա-
ռինս քո. և լուսաւորեա զմեզ տեսա-
նել զորոգայթս՝ զորս կազմեաց նա, և
հասանել առ քեզ, ով խնդութիւնդ
Իսրայելի։ Զայս ամենայն քաջ գիտես
դու տէր՝ որ գիտակ ես մտաց նորա և
ապառում խորհրդոցն։ Ոչ զայս ա-
սեմ՝ զի ցուցից քեզ թէ տեսանես զա-
մենայն՝ և ոչ ծածկի 'ի քէն խորհուրդ
ուրուք. այլ առաջի ոտից մեծվայել
չութեան քոյ բողոք ունիմ զթշնամւոյ

խմէ՝ դատաւոր արդար. զի դատա-
պարտեալ զնա՝ զմեզ զորդիս քո փըր-
կեսցես՝ զի զօրութիւն մեր դու ես։

Դ. Նենգաւոր է տէր թշնամին՝ և կա-
մակոր. ոչ դիւրաւ 'ի յայտ գոն շրջանք
գնացից նորա, և ոչ Ճանաչի տեսու-
թիւն գիմաց նորա՝ թէ ոչ դու լուսա-
ւորեսցես։ Զի մերթ զայս, մերթ զայն՝
է զի գազան, է զի գայլ, երբեմն խա-
ւար և երբեմն լոյս յանձին կերպարա-
նէ. և ըստ անցնելոյ հանգամանաց, տե-
ղեաց և ժամանակաց, և բազմադէմ
գիպացն յեղանակելոյ՝ նորօրինակս 'ի
մէջ առնու փորձութիւնս։ Առ 'ի պատ-
րել զտխրեալն՝ տխրի և նա. առ 'ի խա-
բել զանդամիան՝ բերկրութիւն յան-
ձին ցուցանէ. առ 'ի նենգել զհոգե-
սէրս՝ կերպարանի 'ի հրեշտակ լուսոյ.
առ նուաճել զհզօրս՝ 'ի գառն փոխար-
կի. առ գիշատել զհեզս՝ գայլ երևի։
Զոմանս սասանէ գիշերային արհաւ-
րօք. զոմանս նեռիւք 'ի տուէ թռչե-
լովք. զայլս ըստ գիպաց 'ի խաւարի
անցելոց. զկէսս յընթացս, և զայլս 'ի
ձեռն դիւին միջօրէի։ Ո՞ ոք քաջադէտ՝

առ 'ի զայսոսիկ 'ի միտ առնուլ, և ըզ-
հանձար նորա ճանաչել. ո՞ յայտնեաց-
ցէ զտեսիլ կերպարանաց նորա, և զկըր-
ճումն ատամանց նորա ո՞ գիտասցէ։

Ե. Ահա թագոյց 'ի կապարճս զնեաս
իւր, և զորոգայթս իւր ծածկեաց ընդ
երևութիւն լուսոյ. զոր ուր ուրեմն է
նկատել՝ եթէ ոչ 'ի քէն տէր որ յոյսդ
ես մեր՝ ընդունիցիմք լոյս՝ 'ի տեսանել
զամենայն, զի ոչ միայն 'ի մարմնոյն
որոց դիւրին է լինել վերահասու, նա՝
և ոչ յախտս իսկ, այլ 'ի հոգեկան
վարժս թագուցանէ զգաղտնորոգայթ
հնարսն. և ընդ պատրուակաւ առա-
քինութեանց՝ զախտս զիւրև զգենու,
և կերպարանի 'ի հրեշտակ լուսոյ։ Այ-
սու և առաւել քան զսոյն ձգի ընդ-
դէմ մեր ծնունդն Բելիարայ՝ այն է
սատանայ, տէր Աստուած իմ. և արդ
իբրև զառիւծ և զվիշապ՝ յայտնի և 'ի
ծածուկ, 'ի ներքոյ և արտաքոյ, 'ի գի-
շերի և 'ի տունջեան ջանայ ճգնի յա-
փշտակել զանձինս մեր։ Դու, տէր,
զերծո զմեզ, որ փրկեաս զյուսացեալս
'ի քեզ. զի 'ի նա ցաւք մեր յորդեաս-

ցին, և դու գովեացիս 'ի մեզ՝ տէր Աստուած մեր։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս բարեբարոյութեանցն Աստուծոյ.

Ա. Եւ որդի տղայինոյ քոյ՝ նուիրեալս 'ի ձեռս քո՝ խոստովան եղէց քեզ նուաստ բանիւքս իմովք յամենայն սրտէ՝ ազատեցուցիչդ իմ. և յուշ ածից զամենայն զբարիսդ զոր արարեր ընդ իս 'ի մանկութենէ իմմէ յամենայն կեանս իմ. քանզի գիտեմ թէ ապերախտութիւնս իմ բազմօք անհաճոյ է յաչս քս, որ արմատն է ամենայն չարեաց հոգևորաց, և հոլմն տապախարշ ամենայն բարեաց, և վիակող տղբեր աստուածային ողորմութեանդ 'ի վերայ մարդկան, որով մեռեալք անմահանան, և կենդանիք 'ի գործ իւրեանց մահազդեաց գտանին՝ անօգուտ

հնալով յամենայնէ։ Ընորհս կալայց քեզ տէր՝ զի մի գոայց անշնորհակալու՝ փրկիչ իմ որ փրկեցեր զիս. զի քանիցս անգամ և յափշտակեաց զիս վիշապն՝ դու տէր թափեցեր զիս 'ի ժանեաց նորա։

Բ. Ի մեղանչելս իմում՝ մինչ դեռ նա հնարս հնարէր կլանել զիս, դու տէր, պաշտպան կացեր ինձ յերեսաց նորա։ Յանիրաւելս իմ առ քեզ՝ և յապախտ առնել զպատուիրան քո՝ նա մինչ ճգնէր յափշտակել զիս 'ի դժոխս՝ դու արդելեր զնա։ Ես զքեզ նշկահէի՝ և դու զիս պատսպարէիր։ Ես չունէի առ 'ի քէն երկիւղ՝ և դու զիս պահպանէիր։ Մեկնեալ 'ի քէն և անճնամատն լինէի 'ի ձեռս թշնամւոյս. այլ դու զնա սասանէիր՝ զի մի յափշտակեացէ զիս։ Այսպէս բարերար առ իս երևէիր, Աստուած իմ, և ես թշուառացեալս առնուի ոչ 'ի միտ։ Քանզի բազում անգամ զերծուցեր զիս 'ի ժանեաց դիւին, ապրեցուցեր 'ի բերանոյ առիւծուն. և զյափշտակեալս 'ի դըժոխս՝ հաներ 'ի վեր. խոնարհեցայ մինչև

'ի դրունս դժոխոց՝ այլ դու կալար զնա՝ զի մի մոխց ընդ այն։

Գ. Մերձեցայ 'ի մահ՝ և դու օգնեցեր՝ զի մի յափշտակեցայց. քանզի և 'ի մահուանէ իսկ մարմնոյ յոլով անգամ զերծուցեր զիս փրկիչ իմ՝ մինչդեռ արհաւիրք մահու ունէին զիս. զբոտայ 'ի վտանգս՝ ընդ ծով և ընդ ցամաք, 'ի հրոյ և 'ի սրոյ՝ և յամենայն վտանգէ փրկեցեր. հանապազ մերձ առնս կացեր, և ողորմութեամբ քով խնամեցեր։ Գիտէիր դու, տէր, զի 'ի յափշտակել զիս մահու, ընդունէին զբժոխք զհոգի իմ, և յաւիտեան դատապարտս գտանէի։ Այլ քո ողորմութիւն և շնորհք կանխեցին առ իս, զերծուցեալ զիս 'ի մահուանէ մարմնոյ և հոգւոյ. զայս և առաւել քան զսոյն ցուցեր ինձ երախտիս. այլ ես կոյր էի և ոչ ծանեայ՝ մինչև լուսաւորեցեր զիս։ Եւ արդ՝ լոյս հոգւոյ իմոյ տէր Աստուած իմ, կեանք իմ՝ որով կեամ. լոյս աչաց իմոց՝ որով տեսանեմ. ահա լուսաւորեցեր զիս և ծանեայ զքեզ. զի քեզ կեամ և շնորհս քեզ ունիմ՝ թէ

պէտ և նուաստ և խոտան էցէ, և անհաւասար երախտեաց՝ ըստ տանելոյ տկարութեանս իմոյ։ Զի դու ես միայն Աստուած իմ, արարիչ իմ բարեգութ, որ սիրես զանձինս մեր, և ոչ ատես զոք յորոց ստեղծեր։ Ահա ես գլուխս մեղաւորաց՝ զորս փրկեցեր՝ զի ցուցցես ամենեցուն զգթասէր բարերարութիւն քոյ։

Դ. Խոստովան եղէց քեզ զերախտիս քո զմեծամեծս, զի փրկեցեր զիս 'ի դժոխոց ներքնոց՝ միանգամ և երկիցս և երիցս՝ նա և բազում անգամ. և ես յամենայնի 'ի դժոխս անդ ակնարկի առնէի՝ իսկ դու վերականգնէիր. ուր բազում անգամ 'ի դէպ էր քեզ առնել ընդ իս ըստ արդարութեան։ Այլ դու կամեցար՝ զի սիրես զհոգիս, և 'ի մոռացօնս արկանես զմեղս մարդկան՝ զի ապաշխարեսցեն։ Աստուած բազումողորմ, տեսանեմ և խելամուտ լինիմ լուսոյդ քով, և կորնչի անձն իմ յողորմութիւնս քո մեծս՝ զի փրկեցեր զհոգի իմ 'ի դժոխոց ներքնոց, և 'ի կեանս ինձ առաջնորդեցեր. քանզի էլ

'ի մահուան և զու յարուցեր զիս։ Արդ քո եղեցի ամենայնն որով կեամ, և զիս քեզ մատուցանեմ։ Հոգի իմ, սիրտ և մարմին, և ամենայն կեանք 'ի քեզ կեցցեն՝ կեանք իմ քաղցր. քանզի ամենայնիւ ազատեցեր զիս՝ զի ամենայնիւ ժառանգեսցես. ամենևին նորոգեցեր՝ զի ամենևին ստասցիս։ Սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ. սիրեցից զքեզ անպատում ցնծութիւն իմ, և 'ի քեզ ապրեցայց և ոչ յիս։ Կեանքս իմ կորուսեալ 'ի թշուառութեան իմում՝ վերականգնեցաւ ողորմութեամբդ քով՝ որ ես Աստուած ողորմած և բարեգութ 'ի հազարս՝ որք սիրեն զքեզ։

Ե. Տէր Աստուած իմ, որ սրբեսդ զիս՝ հրամայեցեր յօրէնս քո՝ սիրել զքեզ յամենայն սրտէ իմմէ, և յամենայն անձնէ իմմէ, և յամենայն մտաց իմոց, և յամենայն զօրութենէ իմմէ և յամենայն ճգանց իմոց. նա՝ և 'ի խորութենէ սրտիս, ըստ ամենայն ժամուց և ըստ էից յորս վայելեմ յողորմութեան քում. զի յամենայն ժամ կորնչէի արդեօք՝ եթէ ոչ հանապազ

զնս կենագործեսցես, և յամենայն ժամու զնս ընդ պարտիւք գրաւականեսցես՝ որ յամենայնի զեղուս զինև զքո երախտիս։ Արդ որպէս չնք ժամ կամ բոպէ յամենայն կեանս իմ՝ յորում ոչ վայելեցից 'ի բարերարութեանդ քում, այսպէս և չէ օրէն զնս անցանիցէ վայրկեան՝ յորում ոչ առաջի աչաց ունիցիմ զքեզ 'ի յիշողականիս իմում, և ոչ սիրեցից զքեզ յամենայն զօրութեանէ իմմէ։ Այլ չեմ առ այս ձեռընհաս՝ թէ ոչ դու տացես ինձ. յորմէ են ամենայն տուրք բարիք և պարգևք կատարեալք՝ իջեալք առ 'ի հօրէն լուսոյ. յորում չնք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր։ Զի չէ վաղասաց կամ երագընթաց, այլ քո ողորմութիւնդ, զնս սիրեցից զքեզ։ Քո է տէր պարգևս՝ որոյ են ամենայն բարիք։ Հրամայեա սիրել զքեզ, տուր զոր հրամայես, և պատուիրեա զոր կամիս։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս եռանդեան սիրոյ.

Ա. Սիրեմ զքեզ Աստուած իմ, նա և հանապազ իսկ զնոյն փափաքեմ. զի քաղցր ես դու քան զմեղր, պարարիչ քան զկաթն, և պայծառ քան զլոյս. և յայն սակս ըղձալի ես ինձ քան զոսկի և զարծաթ՝ և քան զամենայն ականս պատուականս. դժկամակ եմ ընդ որս գործեմ 'ի կենցաղումս՝ առ քաղցրութեան քոյ, և փառաց տան քո զոր սիրեցի: Ո՛վ հուր միշտավառ և անշէջ. ո՛վ սէր որ յեռանդեան ես հանապազ, և ոչ գիտես ցրտանալ՝ բորբոքեա և զիս: Վառեցայց խսպառ 'ի քէն. զի և խսպառ սիրեցեալ զքեզ: Նուազ սէր ունի 'ի քեզ՝ որ զայլ ինչ սիրէ ընդ քեզ՝ որ ոչ վասն քո ելցէ: Սիրեցեալ զքեզ տէր՝ զի դունախ զիս սիրեցեր. այլ ո՞ւր բանք՝ յարտայայտութիւն տարացուցի սիրոյ

քոյ մեծի առ իս, վասն անթիւ բա-
րեացդ քոց՝ որովք 'ի սկզբանէ ինամ-
արկեցեր զիս։

Բ. Յետ երախտեաց արարչութեդ՝
ուր 'ի սկզբան անդ ստեղծեր զիս յո-
չընչէ ըստ պատկերի քում՝ պատուեալ
բարձրացուցեր զիս 'ի դասս արարա-
ծոց քոց զորս արարեր. զարդարեցեր
լուսով երեսաց քոց՝ հաստատելով 'ի
մուտս սրտի իմոյ, որով 'ի բաց զա-
տուցեր յանզգայից և 'ի զգայնոց ա-
նասնոց, սակաւ ինչ նուազ կարգեալ
քան զհրեշտակս։ Ա՝ և այս իսկ դոյզն
ինչ թուեցաւ առաջի աստուածու-
թեանդ քոյ, զի զօրհանապազ առան-
ձին և մեծամեծ պարգևօք քոյոց երախ-
տեաց՝ առանց ինչ խորանաց ինամար-
կեցեր զիս, և իբրև զմանուկ մատաղ
առատ միխիթարութեամբդ դիեցուցեր
զիս և զօրացուցեր։ Եւ առ ամենայնիւ
պաշտել զքեզ՝ զամենայն ինչ զոր և ա-
րարեր՝ յիմ ծառայութիւն կարգեցեր։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս նուռաձեղոյ Աստուծոյ զամենայն ինչ ընդ ծառայութեամբ մարդկան.

Ա. Զամենայն ինչ նուռաձեցեր ընդ ոտիւք մարդկան՝ զի մարդն ևեթ ամենեին նուռաձեսցի ընդ քեզ. և զի ամենայնիւ քո լինիցի մարդն՝ տիրեաց մարդ 'ի վերայ ամենայն գործոց քոց: Զարտաքինս ամենայն ստեղծեր վասն մարմնոյ. զմարմին վասն հոգւոյ. իսկ զհոգի վասն քո. զի 'ի քեզ միայն մտադիր գոցի, և զքեզ միայն սիրեսցէ. զքեզ 'ի պէտս մխիթարութեան ժառանգեալ, և զատորինս՝ 'ի պէտս սպասու: Որ ինչ կայցէ 'ի շրջանս երկնից՝ ատրև է քան զհոգի մարդոյ՝ որ հաստատեցաւն 'ի ստանալ զբարին գերագոյն՝ որով կցորդ գոցի երանութեան. ընդ որում եթէ լծորդեսցի՝ 'ի վերոյ անցցէ

քան զամենայն փոփոխելիս որ ընդ
սորևս. և որում փափաքէրն՝ տեսցէ
ակներև զդէմս մեծվայելչութեան նո-
րա և յաւիտենական անմահութեան։
Անդ վայելեսցէ 'ի գերահրաշ բարու-
թիւնն 'ի տանն տեառն. առ որովք
զամենայն զոր տեսանեմքս իբրև յոչ
ինչ են համարեալ. զոր ոչ աչք տեսա-
նեն և ոչ ականջք լսեն և ոչ 'ի սիրտ
մարդկան մերձենան՝ զոր պատրաս-
տեաց Աստուած սիրելեաց իւրոց. և
զայս հանդերձեալ ես տէր տալ հո-
գւոց. սոքօք զօրհանապազ ուրախ առ-
նես զանձինս ծառայից քոց, տէր ո-
գեսէր։

Բ. Մեծ է զարմանս, տէր Աստուած
իմ, որ զպատկերդ քո և զնմանութիւն
պատուասիրես. քանզի և մարմնոյս
մերում որ ապականացուն է և խոտան՝
շնորհեցեր զպայծառութիւն երկնից 'ի
տեսանել՝ 'ի ձեռն անխոնջ պաշտօ-
նէիցդ քոց՝ արևու և լուսնի. որք ըստ
պատուիրանաց քոց զօրհանապազ ըզ-
ցայդ և զցերեկ ապաստահարկու լինին
որդւոցդ քոց. ընդարձակեցեր զմտք-

լութիւն օդոց՝ առ 'ի շնչել. զձայնից զանազանութիւն առ 'ի լսել. զբուրմանց քաղցրութիւն՝ առ 'ի հոտոտել. զքմաց որակս՝ առ 'ի ճաշակել. թանձրութիւն եւ մարմնոց՝ առ 'ի շօշափել։ Նպաստաւորս շնորհեցեր պիտոյից նորա զդրաստս. նա՝ զթռչունս երկնից, զձկունս ծովու և զբերս երկրի՝ 'ի կազդուրումն կենաց։ Դեղոյս ստեղծեր յերկրէ՝ ըստ ամենայն ախտից. առ մեզ մի արկած և զափոփանս պատրաստեցեր. զի ողորմած ես և գթած. և գիտես զկազմութիւնս մեր ստարիչդ մեր. և մեք ամենեքեան իբրև զկաւ եմք 'ի ձեռս քո։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս յոչ ածելոյ զառաջելոչբիւն երկնաւոր խորհրդոց՝ 'ի քնեւոչբեան ժամանակաւոր բարեացս.

Ա. Բացան ինձ ողորմութիւնք քո լուսո

մութեամբ խոտոց և բուսոց երկրի և ամենայն սրարածովք քովք՝ մի ընդ միոյ ապաս հարկանել մեզ ըստ ժամանակին՝ առ 'ի բաց վարել զտաղտկութիւնս մեր, իսկ զնարդ մեծամեծք ի ցեն և ընդ թուով անպարունակք բարութիւնքն՝ զոր պատրաստեցեր սիրելեաց քոց յերկնաւոր հայրենիսն՝ ուր տեսցուք զքեզ դէմ յանդիման. զի թէ 'ի բանտարկութեանս այսչափ՝ քանիսն ապա յարքունիս :

Բ. Մեծ և անհամար են գործք քո տէր թագաւոր երկնից. զի ուր այս ամենայն բարի են յոյժ և ախորժակաւոր զոր միօրինակ շնորհեցեր բարեաց և չարաց, յինչ հանգամանս լցեն՝ զորս միայն վասն առաքինեաց գանձեցեր : Զի ուր բաղմահամար են և բաղմօրինակ պարգևք քո՝ զոր առատաձեռնեա բարեկամաց քոց և թշնամեաց, ինքր առաւելեալ լցեն և յոլովագէմ, քաղցր և բերկրական, զորս միայն բարեկամացդ քոց ունիցիս շնորհել: թէ յարատասուաց աւուրս սփոփութիւն այսչափ՝ իսկ որպիսինք յաւուրս հարատ-

նեաց։ Թէ բանաս՝ այսպիսիս ունիցէ բերկրութիւնս, քանիսն ապա հայրենիքն։ Ոչ տեսանեն աչք զոր պատրաստեցեր, տէր, սիրելեաց քոց՝ առանց քո։ Ըստ բազմապատիկ շնորհաց քոց՝ բազում են և քաղցրութիւնք զոր պահեցեր երկիւղածաց քոց։

Գ. Մեծ ես դու և անչափ, տէր Աստուած իմ. չիք եզր սպառուածոյ մեծութեանդ քոյ. ոչ թիւ իմաստութեան քոյ, ոչ չափ բարեգթութեանդ քոյ, ոչ վախճան. ոչ դումար և ոչ չափ հատուցմանց քոց. այլ որպէս մեծ ես դու՝ մեծամեծ են և պարգևք քո. զի դու ես յաղթանակ և պարգև ամենայն քաջամարտիկ նահատակաց քոց։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս՝ի բաց բառնալոյ աստուծային քաղցրութեան զամենայն ըզդառնութիւն աստի կենցաղոյս.

Ա. Այս են բարերարութիւնք քո մեծամեծք տէր Աստուած՝ որ զսուրբս սրբես. որովք ընուս զանանկութիւն որդւոց քոց քաղցելոց. զի դուս յոյս լքելոց. դու պատկ ակնկալութեան զարդարեալ փառօք՝ յաղթականաց պատրաստեալ. դու միխիթարութիւն մշանջենաւոր՝ որ միայն ընդունիս զքեզ՝ որք արհամարհեցին զմիխիթարութիւն զայսր աշխարհի՝ վասն քոյոյ յաւիտենական միխիթարութեան. զի այսու միխիթարեալքն քումդ անարժան են ափոփութեան: Այլ չարչարեալքն աստէն՝ 'ի քէն միխիթարին, և կցորդեալքն չարչարանաց քոց՝ կցորդ լինին և միխիթարութեանդ. քանզի չէ

մարմնոյ ումեք սփոփութիւն գտանել 'ի յաւիտեանս յերկոսին. և ոչ կարէ ոք ասել և 'ի հանդերձեալն ուրախութեան հանդիպել. այլ հարկ է զմին կորուսանել՝ որ զմիւսն խնդրիցէ ժառանգել։

Բ. Ի խորհելս զայս, տէր միսիթարիչ իմ, չառնում յանձն միսիթար գտանել 'ի կենցաղումս, զի արժանի երևեցայց յաւիտենական քումդ սփոփութեան. քանզի անշուշտ 'ի բաց թողուցեալ՝ որ այլով իւիք ընարէ սփոփութեան հանդիպել՝ և ոչ քեզ։ Աղաչեմ զքեզ 'ի ձեռն քո, Ճշմարտութիւն յաւիտենական, մի թողուր զիս զանտեսաց երթալ զհետ. այլ դառնասցի ինձ ամենայն՝ զի դու միայն քաղցրասցիս անձին իմոյ, որ քաղցրութիւնդ ես անբաւ, որով ամենայն դառինք քաղցրանան։

Գ. Քոյինդ քաղցրութիւն քաղցրացոյց Ստեփանոսի զքարինս տանջանաց. քոյդ քաղցրութիւն զկասկածոյս երանելւոյն Լաւրենտիոսի քաղցրացոյց. վասն քումդ քաղցրութեան գնային առաքեալքն ցնծութեամբ յե-

րեսաց ատենին՝ զի վասն անուան քո
արժանաւոր գոսան անարդանաց։ ընդ-
թանայր Անդրէաս առ խաչն յապա-
հովս, զի առ քոյդ քաղցրութիւն մեր-
ձենայր։ այս քո քաղցրութիւն զօրա-
ցոյց զգլուխն առաքելոց՝ զկախաղանն
ընտրել անձին և զխաչ, և այլ ոչ
ինչ խնդացաւ ընդ սրովդնել զգլուխն։
Ի գին այսր էտ Բարթուղիմէոս զմորթ
իւր։ առ 'ի զայս Ճաշակել՝ արբ Յով-
հաննէս անվեհեր զբաժակն թունա-
լից։ զայս Ճաշակեալ Պետրոսի՝ մոռա-
ցաւ զատորինս ամենայն, և աղաղա-
կեաց իբրև զարբեալ ասելով։ Տէր, բա-
րուոք է մեզ աստ լինել՝ արասցուք է-
րիս տաղաւարս, աստ կացցուք, աստ
խորհեսցուք։ զի չեմք կարօտեալ իւիք։
Շատ է մեզ տէր տեսանել զքեզ, շատ
է, ասէ, այսչափ քաղցրութեամբս յա-
գենալ։ Կաթիլ մի Ճաշակեաց նա ըզ-
քաղցրութեան, և ամենայն քաղցրու-
թիւն նմա տաղտկացաւ։ Իսկ զինչ ար-
դեօք ասէր՝ թէ զմեծ և զանչափ ըզ-
քաղցրութիւն աստուածութեանդ Ճա-
շակէր, զոր պահեցեր երկիւղածաց

քոց։ Զայս քո անպատում՝ քաղցրու-
թիւն ճաշակեաց և կոյսն այն զորմէ
ընթեռնումք թէ խնդագին և փառաւք
ի մեն ընթանայր 'ի բանտ՝ իբրև 'ի կո-
ջունս հրաւիրեալ։ Ինձ թուի եթէ զնո-
րին քաղցրութեան էաւ զճաշակ և նա
որ ասացն. Զի՞նդ մեծ է քաղցրու-
թիւնդ քո տէր՝ զոր պահեցեր երկիւ-
ղածաց քոց. որ քարոզ կարդայր,
ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր.
քանզի այս այն երանութիւն է, տէր
Աստուած մեր՝ որում՝ մնամք ընդու-
նել 'ի քէն. յոյր սակս զօրհանապազ
'ի դրունս քո զինուորիմք, և մեռա-
նիմք վասն անուանդ քոյ՝ զի 'ի կեանս
քո և 'ի քեզ կեցցուք։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս զի յԱստուծած հաստատել արժան է զամենայն ակընկալուն թիւն մեր եւ զիղձս սրտի.

Ա. Դու տէր ակնկալութիւն Իսրայէլի, ցանկութիւն մեր՝ առ որ ձգի հանապազ սիրտ մեր, փութա և մի յապաղեր։ Արի, երագեա և եկ՝ յուսուցանել մեզ 'ի բանտի ասա խոստովանի լինել անուան քում՝ զի փառաւորեսցուք 'ի լոյս քո։ Բայց զականջս քո աղաղակի արտասուաց որբոց քոց՝ որք կարդան առ քեզ. հայր մեր՝ տուր մեզ այսօր զհաց մեր հանապազորդ՝ որ զօրութեամբ կեամք 'ի տուէ և 'ի գիշերի՝ մինչև հասցուք 'ի լեառն սուրբ քո 'ի Քորեբ. և ես կրտսեր եմ 'ի փոքունս տան քո, Աստուած հայր և զօրութիւն իմ, երբ եկից և երևեցայց երեսաց քոց. զի որ արդ 'ի ժամուս

խոստովան լինիմ քեզ՝ յայտմ հեռէ և յաւիտեանս խոստովան եղէց զնոյն։ Երանի է ինձ թէ գտայց 'ի կեանս փառաց քոց։ և ո՞ ոք շնորհեսցէ ինձ զայդ՝ թողուլ ինձ ժամանել առ քեզ։

Բ։ Գիտեմ առէր, գիտեմ և խոստովան լինիմ զանարժանութիւնս իմ՝ առ 'ի մտանել ընդ յարկաւ քով, այլ արա վասն անուանդ քում՝ և մի խորտասոյզ առներ զառ 'ի քեզ յուսացեալ զծառայս քո։ Ո՞ ոք մոցէ 'ի սրբութիւնս քո՝ առ 'ի միտ առնուլ զզօրութիւն քո՝ եթէ ոչ դու բանայցես։ իսկ ո՞ բանայցէ 'ի փակելդ քո։ Զի եթէ կործանես՝ ոչ ոք է որ չինէ։ և թէ 'ի բաց հանցես զոք՝ ոչ ոք ելցէ որ բացցէ նմա։ թէ ունիցես զՋուրս՝ ամենայն ինչ ցամաքեսցի, և թէ արձակեսցես՝ դոգ յեղաշրջեն զերկիր։ թէ զամենայն զոր արարեր դոչ ինչ դարձուսցես՝ ո՞ ոք ընդդէմ քո բարբառեսցի՝ բայց միայն մշանջենաւոր բարութիւն ողորմութեանդ քոյ՝ որով արարեր զամենայն՝ ընդ որ և հաճեցար։ Դու ստեղծեր զմեզ՝ արարիչդ աշխարհի, ինա-

մակալ լեր մեզ. դու հաստեցեր զմեզ, մի մերժեր զի գործած եմք ձեռաց քոց։ Տէր Աստուած մեր՝ մեք կաւ և որդն՝ չեմք բաւական մոռանել 'ի յա-վիտենականութիւնդ քո՝ թէ ոչ դու առաջնորդեացես՝ որ յոչնչէ արարեր զմեզ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Թէ յԱստուծոյ է փրկութիւն մեր.

Ա. Ես գործ ձեռաց քոց՝ խոստովան լինիմ քեզ երկիւղիւ քով, զի ոչ յաղէղն իմ յուսացեալ եմ, և ոչ սուր իմ կեցուցանէ զիս, այլ աջ քո և բազուկ քո և լոյս երեսաց քոց. ոչ լինիմ յուսակտուր, զի յոյս իմ դու ես՝ որ արարեր զիս, որ ոչ թողուս զյուսացեալս 'ի քեզ։ Դու ես տէր Աստուած մեր՝ քաղցր և երկայնամիտ, որ ողորմութեամբդ խնամարկես զամենեսեան։ Զի եթէ մեղեցեմք քո եմք, և եթէ ոչ՝ քո եմք դարձեալ. զի հուպ եմք առ

.քեզ։ Այլ մեք իբրև զտերևս եմք և
անոտի է ամենայն մարդ կենդանի, և
իբրև զհողմ են կեանք մեր 'ի վերայ
երկրի։ Մի՛ բարկանար 'ի կործանիլ
սրբոցդ .քոց՝ զի գիտես դու զբնութիւնս
մեր՝ տէր Աստուած մեր։

Բ. Եւ արդ տէր, անբաւելի զօրու-
թիւն՝ ցոյց զկարողութիւն .քո ընդ-
դէմ տերևոց յափշտակելոց 'ի հողմոյ,
և հալածեա զխռիւս ցամաքեալս։ Մի-
թէ դատապարտ առնիցես զչուն մի՝
արքայդ Իսրայելի յաւիտենական։ Ի
մահ վարեսցես զլու մի։ Լուաք վասն
ողորմութեան .քոյ տէր՝ զի դու ոչ առ-
նես զմահ, և ոչ խնդաս ընդ կորուստ
մեռելոց։ Վասն այսր՝ աղաչեմք զքեզ
տէր՝ մի թողուր իշխել 'ի վերայ ստեղ-
ծուածոյդ .քում՝ զոր ոչն ստեղծեր.
զի թէ ընդ կորուստն զղջանաս դու,
տէր, զինչ արդեցցէ զամենակալդ՝ միշտ
ուրախանալ ընդ մեր փրկութիւն։—
Թէ կամիս՝ կարող ես զիս փրկել. իսկ
ես թէ և կամիցիմ՝ չեմ բաւական.
մեծ է բազմութիւն թշուառութեանց
իմոց զինև։

Գ. Ինձ անկ է խնդրելն, իսկ զկատարումն ոչ գտանեմ. ոչ կարեմ զբարին խնդրել՝ եթէ ոչ դու կամիցիս, և ոչ զոր կամիմն կարեմ՝ թէ ոչ կարողութիւն քո զիս զօրացուցէ. և զոր կարեմն ոչ կամիմ, թէ ոչ՝ կամք քո որպէս յերկինս նոյնպէս և յերկրի աստ կատարեսցին: Զոր կամիմն և կարեմ՝ ոչ գիտեմ, մինչև իմաստութիւն քո զիս լուսաւորեսցէ: Նա՝ թէ և գիտացից զկամն և զկարողութիւնս՝ յանօգուտս և 'ի նանիր անցանէ իմաստութիւն իմ՝ թէ ոչ ձեռնտու լիցի իմաստութիւնդ քո ճշմարիտ:

Դ. Ընդ քոյով կարողութեամբ են ամենայն ինչ. և չիք ոք՝ որ հակառակորդ գոցի կամաց քոց, տէր ամենակալ, որ զսկիզբն ունիս զամենայն մարմնոց. և զոր ինչ կամիս առնես, յերկինս և յերկրի, 'ի ծովս և յամենայն խորս: Եղիցին կամք քո 'ի վերայ մեր՝ յորոց վերայ կոչեցեալ է անուն քո. զի մի 'ի կորուստ մատնեսցի գեղեցիկ հաստատուածս քո՝ զոր ստեղծեր վասն փառաց քոց: Եւ զինչ է մարդ կանան-

ցածին, որ կեայ և ոչ տեսանէ զմահ, և մատնէ զանձն իւր 'ի ձեռս դժոխոց՝ եթէ ոչ դու փրկեսցես՝ կեանքդ ամենեցուն՝ որով կեան ամենեքեան։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս տկարութեան մարդկային կամաց առ 'ի բարին՝ առանց աստուծային շնորհաց.

Ա. Ահա թէպէտ և խոստովան եղէ քեզ ցնծութիւն կենաց իմոց՝ տէր Աստուած իմ, կեանք հոգւոյ իմոյ. այլ էր երբեմն ինձ յուսալ 'ի զօրութիւն իմ՝ որ և ոչ իսկ էր ինչ։ Եւ այն ինչ զայսօրինակ ընթանայի՝ ուր կարծէի հաստատուն կալ՝ անդ անկայ, և ընդ կրունկն մնացի՝ և ոչ խաղացի յառաջ. և ուր կարծէի ժամանել՝ վերջացեալ գտայ. այս է տարացոյց իմում զօրութեան։ Արդ ծանեայ զի լուսաւորեցեր զիս՝ զի զոր ինչ կարծել յիս

մարթ էր՝ յոչ ինչ համարեցայ։ Քանզի ասէի, զայս արարից, զայն ինչ կատարեցից, ուր ոչ զայս և ոչ զայն 'ի գլուխ հանէի։ Վերահաս էին կամք և ոչ կարողութիւն. ժամանեաց կարողութիւն՝ այլ ոչ և կամք. զի վատահացեալ էի յիմ զօրութիւն։

Բ. Եւ ահա խոստովան եղէց քեզ տէր Աստուած իմ՝ հայր երկնի և երկրի. զի ոչ զօրութեամբ իւրով զօրանայ հզօր՝ պանծալ առաջի քո ըստ անմիտ յանդգնութեան ամենայն մարմնոյ։ Քանզի ոչ է մարդկան՝ կամիլ զոր կարասցէ, կամ կարող լինել որում կամեցաւն. և կամ գիտել զոր կամեցաւն և կարաց. այլ 'ի քէն ուղղին գնացք առն, յաւէտ որոց խոստովանեացին առ 'ի քէն ուղղութեան, և ոչ յանձանց։ Արդ աղաչեմք զգթութիւնդ քո՝ փրկեա զմեզ՝ զորս ըստեղծեր, զի թէ կամիս՝ կարող ես փրկել զմեզ. և 'ի քո կամս է զօրութիւն փրկութեան մերոյ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս նախնի բարեբարոքեանց Աստուծոյ.

Ա. Յուշ եղիցին քեզ ողորմութիւնք քո առաջինք, որովք կանխեցեր առ մեզ 'ի սկզբան անդ օրհնութեամբ քաղցրութեան քոյ: Մինչ չև ծնեալ էր իմ որդւոյս աղախնոյ քոյ՝ տէր յոյս իմ յորովայնէ մօր իմոյ՝ ժամանեցեր առ իս, պատրաստեալ շաւիղս՝ գալ և հանդիպել փառաց տան քոյ: Մինչ չև ստեղծեալ էի յարգանդի՝ ծանեար զիս. և մինչ չև ելեալ էի յորովայնէ՝ սահմանեցեր վասն իմ՝ որ քեզն հաճոյ թուեցայ: Զգիտեմ ես որ ինչ գրեալ ելցէ 'ի թագնութեան գրոց քոց զինէն, յայն սակս և պակուցեալ եմ ահիւ:

Բ. Դու գիտես իմ իմիք ակն ունիցիմ ընդ շրջանս աւուրց և ամաց մինչև 'ի հազար ամ՝ որ եղեալն է առաջի յա-

ւխտենականութեանդ քոյ։ և որ ապա-
գայն է՝ նա եղեալ իսկ է։ Իսկ ես որ
կամն 'ի մթագին գիշերիս՝ ոչ գիտեմ
զայս։ ահ և երկիւղ շուրջ պատեալ են
զինև, տեսեալ զվտանգս ամենայն ուս-
տեք։ քանզի թշնամիք բազումք և ազգի
ազգի վարանք տարակուսանաց շուրջ
պատեալ պաշարեալ են զանձն իմ։ Եւ
պակասէի արդեօք 'ի յուսոյ՝ թէ ոչ
յայսչափ չարիս մերձ լինէր առ իս օգ-
նութիւն քո։

Գ։ Այլ յոյս իմ 'ի քեզ է, քաղցրա-
գութ թագաւոր Աստուած իմ։ և խոր-
հրդածութիւն բազում ողորմութեդ
քոյ 'ի վեր ամբառնայ զմիտս իմ։ Եւ
նախագրաւ տարացոյցք ողորմութեդ
քում կանխեցին առ իս՝ մինչ չև ծնեալ
էր իմ։ և արդ զեղան զինև՝ պարգևօք
հանդերձեալ բարեգթութեանց քոց
բարեաց և կատարելոց՝ զոր գանձեցեր
բարեկամացդ քոց, որք զօրացուցա-
նեն զանկեալութիւնս իմ 'ի քեզ խրա-
խանալ տէր Աստուած իմ, ուրախու-
թիւն սուրբ և կենդանի։ որով հանա-
պազ ուրախ առնես զմանկութիւնս իմ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Յաղագս հրեշտակաց՝ 'ի պահպանութիւն մարդկան կարգելոց.

Ա. Սիրեցեր զիս սէր իմ՝ մինչ չև իմ սիրեալ էր զքեզ. և ըստ պատկերի քոյ ստեղծեալ զիս՝ նախադասեցեր քան զամենայն արարածս քո: Սպասահարկու եղէց մեծի շնորհիս 'ի Ճանաչելս զքեզ՝ յոյր սակս և ստեղծեր զիս:

Բ. Նա՝ 'ի վերս քան զայսոսիկ աւրարեր զհրեշտակս հոգիս՝ յիմ սակս. որոց պատուիրեցեր պահպանել զիս յամենայն Ճանապարհս իմ, զի մի հարիցց զքարի զոտն իմ: Սոքա պահպանք են 'ի վերայ պարսպաց քաղաքին նորոյն Երուսաղեմի. և լերինք շրջապատ զնովաւ, հսկելով և պահպանելով արթնութեամբ զժողովուրդ քո. զի մի արդեօք յափշտակեսցէ որ-

պէս զառիւծ՝ զանձինս մեր՝ առ 'ի չգոյէ փրկողն, օձն հին հակառակորդն մեր սատանայ. որ խբրև զառիւծ գոչէ շուրջ յածեալ՝ առ 'ի կլանել։ Քաղաքացիք են սոքա երանաւէտ քաղաքին վերնոյն Երուսաղեմի՝ որ է մեր մայր, առաքեալ 'ի սպասաւորութիւն՝ վասն որոց ժառանգելոցն են զփրկութիւն առ 'ի ազատութիւն 'ի թշնամեաց իւրեանց, պահպանել յամենայն ճանապարհս իւրեանց, զօրացուցանել և ազդել, և զաղօթս որդւոց քոց մատուցանել առաջի փառաց մեծվայելչութեանդ քոյ։

Գ. Սիրել սիրեն նոքա զքաղաքակիցս իւրեանց, որովք ակն ունին նորոգել անդէն զխրամատութիւն կործանման իւրեանց։ Յայն սակս մեծաւ ջանիւ և արթուն տքնութեամբ մերձ կան մեզ. ընթանան յամենայն ժամու և 'ի տեղւոջ խնամ կալեալ պիտոյից մերոց, և պատգամաւոր լեալ ընդ մեզ և ընդ քեզ տէր՝ զիղձս մեր և զհառաջանս առ քեզ մատուցանեն, ընդունել վասն մեր առ 'ի քէն զգթութիւնդ, և հասուցա-

նել առ մեզ զփափաքելին՝ զօրհնութիւն քոյոց շնորհաց։ Քանզի ընդ մեզ շրջին յամենայն ճանապարհս մեր, և մտանեն ելանեն ընդ մեզ. միտ եղեալ բարեպաշտ և վայելուչ գնացից մերոց 'ի մէջ խեղաթիւր ազգին. Ճգանց և փափաքանաց՝ որովք խնդրեմք զարքայութիւն քո և զարդարութիւն նորա, ահիւ և երկիւղիւ ծառայութեան, և յուրախութեանս 'ի քեզ՝ 'ի խնդութիւն սրտից մերոց։ Նպաստ ընծայեն վաստակաւորաց, խնամածու լինին հանդարտելոց, զմարտիկս զօրացուցանեն, զյաղթականս պսակեն, խնդան ընդ խնդացողս՝ որք 'ի քեզն ուրախանան, և լան ընդ լացողս՝ որք վասն քո են տրտմահար։

Դ. Մեծ է խնամ նոցա վասն մեր. մեծ է սէր նոցա առ մեզ, և այս՝ վասն փառաց անչափ սիրոյդ որով սիրեցեր զմեզ։ Քանզի սիրեն՝ զորս դու սիրես, պահեն՝ զորս դու պահպանես. և արհամարհեն՝ զոր դու 'ի բաց հերքես։ Ոչ սիրեն զայնոսիկ որ գործեն զանիրաւութիւն, զի և դու ատես զամե-

նեսեան որ գործեն զչար։ Յորչափ բա-
րիս գործիցեմք՝ խնդան հրեշտակք և
տրտմին դևք. յորչափ առ 'ի բարեաց
զարտուղիմք՝ զդևս ուրախ առնեմք և
զհրեշտակս քո լքուցանեմք. զի խըն-
դութիւն է նոցա 'ի վերայ միոյ մեղա-
ւորի որ ապաշխարիցէ. և դիւին՝ 'ի վե-
րայ միոյ մեղաւորի որ 'ի բաց կացցէ
յապաշխարութենէ։ Տուր արդ, տուր
հայր խնդալ նոցա միշտ վասն մեր բա-
րեաց. զի և դու հանապազ գովեսցիս
'ի բարիս, և մեք ընդ նոսա 'ի մինն ա-
ռաջնորդիցուք խորան՝ խոստովան լի-
նել զանուն քո սուրբ՝ ստեղծողդ մար-
դկան և հրեշտակաց։

Ե. Զայս ամենայն յուշ ածեալ խոս-
տովան լինիմ առաջի քո և բարեբա-
նեմ զքեզ. զի այս շնորհք են քո մե-
ծամեծք, որովք պատուասիրեցեր ըզ-
մեզ, տուեալ զհրեշտակս քո զհոգիս 'ի
սպասաւորութիւն մեզ։ Քանզի եառ-
մեզ զորս էին ընդ պարսնակաւ եր-
կնից, և իբրև դոյզն իմն համարեալ
զորս են ընդ երկնիւք՝ եառ և զորս
են 'ի վերայ երկնից։ Գովեն զքեզ

տէր ընդ այս՝ ամենայն հրեշտակք քո։ խոստովան լինին քեզ ընդ այս՝ ամենայն գործք քո։ նա՝ և սուրբք քո ըզքեզ բարեբանեն։ Ո՛վ փառք մեր՝ որ պատուասիրեցեր զմեզ, Հոխացուցեր, պերճացուցեր բազում պարգևօքդ, զի սքանչելի է տէր անուն քո յամենայն երկրի։ Զի՞նչ է մարդ զի մեծացուցես զնա, կամ դիցես զսիրտ քո առնմա։ Քանզի ասացեր Հշմարտութիւնդ յաւիտենից, ուրախութիւն է ինձ լինել ընդ որդւոց մարդկան։ իսկ արդ՝ ո՞չ ապաքէն ապականութիւն է մարդ, և որդի մարդոյ որդն, և արդար՝ բանալ զաչս քո 'ի վերայ սորա, և ածել զնա ընդ քեզ 'ի դատաստան։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս խորին նախասահմանուոր-բեան և նախագիտուոր-բեան Աստուծոյ

Ա. Ուստ զիս խորութիւն անբաւ՝ ա-բարձագոյն իմաստութիւն, որ կշռեցեր զերինս և զբլուրս, և 'ի մէջ նը-ժարի կախեցեր զերկիր երիւք մատամբքդ քով. համբարձ 'ի վեր առ-քեզ զմարմինս իմ զոր կրեմ՝ երիւք մատամբք քով անտեսանելեաք, զի տե-սից և ծանեայց թէ զիարդ սքանչելի ես յամենայն երկրի: Ոյսդ առաջին՝ որ լուսաւոր առնէիր նախ քան զամենայն լոյս՝ զերինս սուրբս յաւիտենից. որք չէին ինչ մինչ չև էին եղեալ: Ոյս՝ որ ատես զամենայն արատ, սուրբ և անբիծ, զինչ ուրախութիւն է քո ընդ մարդկան. և զինչ նմանութիւն լու-սոյ ընդ խաւարի: Զիարդ եցէ 'ի մար-դիկ ինդութիւն քո. ինքն պատրաստե-

ցեր յիս արժանի օթևան մեծվայելչութեան քոյ՝ առ 'ի մտանել 'ի գիւտ բերկրութեանդ քոյ. քանզի վայել է քեզ վերնատուն սուրբ, զոր խնդրես 'ի սիրոս սուրբս։

Բ. Այլ ո՞ւր ելցէ 'ի մարդիկ տաճար սուրբ՝ առ 'ի քո ընդունելութիւն՝ որ վարես զաշխարհս. և ո՞ ոք սրբեսցէ զյղացեալն սերմամբ պղծութեան։ Ո՞չ ապաքէն դու միայն սուրբ ես. իսկ ո՞վ սրբեսցի յանմաքրից. զի և ըստ օրինացն զոր եատուր հարցն մերոց՝ 'ի լերինն ծխելոյ հրով, և ամպովք շրջապատելոյ 'ի ջուր խաւարամած՝ յոր ինչ աստացեր մերձեսցի պիղծն պղծեալ ելցի։ Մեք ամենեքեան իբրև զհանդերձ պատառատուն ապականեալ և պղծեալ՝ զբիծս պղծութեանց մերոց ոչ կարեմք թագուցանել, նա՝ մանաւանդ առաջի քո, այլ ընդ սաղարթիւք թագուցանեմք։ Զեմք կարող լինել աշխարհի՝ եթէ ոչ դու սրբեսցես՝ որ միայն սուրբդ ես։ Սրբեա զմեզ զորդիս մարդկան՝ յորս հաճոյ եղև քեզ բնակիլ. զորս ըստ անմատոյց խորոց

գաղտնածածուկ դատաստանաց անբովանդակելի իմաստութեան քոյ և յամենայնի արդարացելոյ՝ թէպէտ և թագուն եղելոյ՝ առանց ինչ արդեանց նոցա նախասահմանեցեր յառաջ քան զաշխարհս. կոչեցեր յաշխարհէ, արդարացուցեր յաշխարհի, և մեծացուցանես զնոսա յետ աստեւաց։ Այլ ոչ ամենեցուն առնես զայս. ընդ որ սքանչացեալ ահաբեկ լինին ամենայն իմաստունք երկրի։

Գ. Եւ իմ՝ տէր զմոռաւ ածեալ զայս՝ զարհուրիմ և դողամ՝ ընդ բարձրութիւն Հոխութեան իմաստութեան և գիտութեան քոյ՝ առ որս չեմ ժամանող. և ընդ անբովանդակելի դատաստան արդարութեան քոյ՝ որ 'ի նմին կաւոյ զոմն կազմես անօթ 'ի պատիւ՝ և զոմն յանարգանս մշանջենաւոր։ Եւ զորս ընտրեցեր քեզ 'ի բազմաց 'ի սաՀար սուրբ քո՝ սրբես զնոսա, հեղեալ 'ի վերայ նոցա ջուր սուրբ, զորոց գիտես զանուանս և զթիւ. որ 'ի համար արկանես զբազմութիւն աստեղաց, և զամենեսեան զնոսա յանուանէ կոչես,

ողք գրեալ են 'ի գիրս կենաց, և որոց
չիք հնար կորստեան նոցա. որոց գոր-
ծակից լինին ամենեքեան 'ի բարիս, նա՝
և մեղքն իսկ։ Զի 'ի գայթակղելն՝ ոչ
զարկանին, զի դնես զձեռն քո ընդ նո-
քօք, զդուշացեալ ամենայն ոսկերաց
նոցա՝ զի մի 'ի նոցանէ ոչ կորիցէ։

Դ. Սակայն մահ մեղաւորաց չար է,
զորոց՝ մինչ չև լեալ էին երկինք և եր-
կիր՝ ըստ խորին և ըստ բազում դա-
տաստանաց քոց գաղտնեաց և յամե-
նայնի արդարոց դատակնքեցեր 'ի մահ
յաւիտենից. որոց առ քեզ է թիւ ա-
նուանց և գործոց չարեաց՝ որ թուես
զաւազ ծովու, և չափես զխորու-
թիւն անդնդոց. զորս թողեր 'ի պըղ-
ծութիւնս իւրեանց որոց ամենեքեան
գործակից լինին 'ի չարիս՝ և աղօթք իսկ
նոցա փոխարկին 'ի մեղս. զի թէ մինչև
յերկինս ելցեն և գլուխ նոցա յամպս
հպեսցի՝ և յաստեղս երկնից դիցեն ըզ-
բոյնս իւրեանց, 'ի վախճանի 'ի բաց մեր-
ժեսցին իբրև զաղբեւս։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յաղագս որոց յառաջնոյն արդարք գոլով՝ դառնան յամբարշտութիւն, և որոց ընդ հակառակն.

Ա. Մեծ են դատաստանք քո տէր Աստուած՝ դատաւոր արդար և հզօր՝ որ դատիս արդարութեամբ, և անհաս են գործք քո և խորին. զորս յուշ ածեալ զդողանի հարկանին ամենայն ոսկերք իմ: Զի ոչ յապահովս եղեցի մարդ կենդանի 'ի վերայ երկրի, առ 'ի պաշտել զքեզ սրբութեամբ և անբծութեամբ զամենայն աւուրս կենաց մերոց երկիւղիւ, և ուրախ լինել 'ի քեզ դողութեամբ. զի մի եղեցի ծառայութիւնս աներկիւղ, և ոչ խնդութիւնս առանց զարհուրանաց. զի մի պարծեսցի գօտևորեալն զօրութեամբ իբրև զլքեալ. և ոչ մեծաբանեսցէ ամենայն մարմին առաջի քո, այլ զարհուրեալ դողասցի յերեսաց քոց. ուր

ոչ գիտէ մարդ՝ սիրոյ թէ ատելութեան
լցէ արժանի, այլ ամենայն կեղակարծք
հանդերձելումն պահեալ կան։

Բ. Տեսաք, տէր, զբազումս, և լը-
սաք 'ի հարցն մերոց, զոր յածելս
'ի յուշ՝ սասանի անձն իմ, և 'ի խոս-
տովան լինելս պակնում երկիւղիս, թէ
բազումք ելին բարձրացան մինչև յեր-
կինս, և յաստեղս անդ եղին զբոյնս
իւրեանց, և անձինք նոցա զեղծան 'ի
չարիս։ Տեսաք զԹՕԹափիլ աստեղաց
յերկնից՝ ձգեալ ստամբ վիշապին զայ-
րացելոյ։ Եւ որք անկեալ գնէին 'ի հող
երկրի՝ ձեռամբդ քով վերամբարձան
սքանչելեօք. տեսաք զկենդանիս մե-
ռեալս, և զմեռեալս՝ յարուցեալս 'ի
մեռելոց. և զորս շրջէին ընդ որդիս Ա-
ստուծոյ՝ անկան 'ի մէջ վիմաց հրացե-
լոց, իբրև յոչէութիւն փոխարկեալք.
տեսաք խաւարեալ զլոյս, և զ'ի խա-
ւարէ զծագումն զլուսոյն. զի մաքաս-
ուրք և պոռնիկք յառաջեցին քան
զբնական յարքայութիւն երկնից. և
որդիքն արքայութեան ելին 'ի խաւարն
արտաքին։

գ. Եւ ընդէր այս ամենայն. զի ելին 'ի լեառն՝ ուր էլ զառաջինն հրեշտակն, և էջ սատանայ։ Զորս յառաջագոյն սահմանեցեր՝ զնոսին և կոչեցեր, սրբեցեր և արդարացուցեր՝ զի արժանաւոր օթևան գտցին մեծվայելչութեանդ քոյ. ընդ նոսա և 'ի նոսա է ուրախութիւն քո, սուրբ և անարատ, յորս բերկրիս դու և ուրախ առնես զմանկութիւն նոցա. բնակեալ ընդ նոսա 'ի խորհուրդս նոցա. զի ելիցին տաճար սրբութեան քոյ, որ զբնութեանս մերոյ յաւելու զշքեղութիւն և զփառս։

ԳԼՈՒԽ Լ.

Թէ սուտ է Աստուծոյ հոգի հաշտուցեալ.

Ա. Հոգիս մեր զոր ստեղծեր ոչ առ 'ի քէն՝ այլ 'ի ձեռն բանիդ քոյ, ոչ 'ի նիւթոց տարերաց ինչ՝ այլ յոչնչէ, բանաւոր, մտաւոր, միշտ 'ի կեանս և 'ի շարժման. զոր դրոշմեցեր լուսով երեսաց քոց, և սրբեցեր զօրութեամբ աւազանիդ քոյ՝ գտաւ ընդունարան փառացդ քոց՝ զոր քո միայն է ընուլ՝ և ոչ այլում ումեք: Զի մինչ զքեզ ունիցի՝ լրացեալ է ցանկութիւն նորա, և ոչ իմիք փափաքէ այլ ևս յարտաքնոց. քանզի երբ միտ դիցէ արտաքնոցս՝ ապաքէն յայտ արար թէ չէ ստացեալ զքեզ 'ի ներքուստ. և թէ զքեզ ստացաւ, չիք այլ ինչ խնդրելի:

Բ. Զի թէ դերագոյն և ամենայնիւ բարիդ ես՝ չմնայ այլ ինչ առաւել

ցանկալի՝ բայց զքեզ միայն ժառան-
գել՝ զամենեին բարիդ։ Եւ որ ոչ միտ
դիցէ գերագոյն բարւոյ՝ ըղձանայ այ-
լում՝ որ չէ ամենայնիւ բարի. ապա և
ոչ հայի 'ի գերագոյն բարին. նա՝ և ոչ
յԱստուած՝ այլ յաւէտ յարարածս։
Ի ցանկալն անդ ստեղծուածոց՝ միշտ
մնայ սովեալ. զի թէպէտ և 'ի ձեռին
ունիցի որում հետամուտն եղև, այլ
անոտի է, զի չկաք ինչ առ 'ի ընուլ զնա՝
եթէ ոչ դու՝ ըստ որոյ նմանութեան
ստեղծաւ։ Ընուս դու զնոսա՝ որ ոչ
ինչ իմիք ակն ունին բաց 'ի քէն. և ար-
ժանաւորս առնես քեզ զնոսա, սուրբս,
երանեալս, անարատս և բարեկամս
Աստուծոյ, որք զամենայն իբրև զաղ-
բեւս համարին, և քեւ միայն նպաստ գը-
տանեն։

Գ. Այս է երանութիւնդ զոր շնոր-
հեցեր մարդկան. այս է պատիւն՝ ո-
րով 'ի մէջ ամենայն ստեղծուածոց քոց
'ի վեր քան զամենեսեան պատուասի-
րեցեր զնա, զի աքանչելի լինիցի անուն
քո 'ի վերայ ամենայն երկրի։ Ահա տէր
Աստուած իմ՝ բարձրեալ ամենաբարի

ամենակալ. գոի վայր ուր դու բնակեսցես. զհոգի ասեմ՝ զոր ստեղծել ըստ պատկերի քում և ըստ նմանութեան, որ միայն քեզ ելցէ 'ի խնդիր և ըղձանայցէ. և ոչ զայն՝ որ ոչ խնդրեսցէ զքեզ և փափաքեսցէ։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Թէ չէ մարթ գտանել զԱստուծած զգայուրքեամբք ներքնովք կամ արտաքնովք.

Ա. Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ՝ խնդրելով զքեզ արտաքոյ՝ որ եաղ 'ի ներքս։ Բազումս տարժանեցայ 'ի տարակուսանս զքեզ խնդրելով. իսկ դու յիս բնակեալ ես՝ թէպէտ և 'ի խնդիր իցեմ քեզ։ Շրջեցայ ընդ գիւղորէս և ընդ հրապարակս աշխարհիս 'ի խնդրել զքեզ և ոչ գտի. զի յումպէտս խնդրէի արտաքոյ՝ զոր 'ի ներքս անդ էր։ Հրեշտակս արձակեցի

զամենայն զգայարանս իմ զարտաքինս առ 'ի խնդրել զքեզ՝ և ոչ գտի, քանզի և ընդունայն վաստակէի։ Տեսանել տեսի լոյս իմ Աստուած՝ որ լուսաւորես զիս, զի յանօգուտս խնդրէի զքեզ նոքօք, ուր դու 'ի նեղքս գոլով՝ ոչ ծանեան ուր մտերն։

Բ. Ասեն տեսանելիքս՝ չեմուտ ընդ մեզ՝ զի անգոյն էր. լսելիքս ասեն, ոչ անց ընդ մեզ՝ զի անմտուանչ էր. հոտոտելիքս ասեն՝ ոչ գնաց ընդ մեզ՝ զի չէին նորա բուրմունքս. ճաշակելիքս ասեն, ոչ կոխեաց ընդ մեզ զի ոչ եկեր. շօշափելիքս յաւելին 'ի վերայ. մի ինչ հարցաներ ընդ մեզ՝ զի չէր նորա մարմին։ Ոչ գոն սոքա 'ի քեզ Աստուած իմ։ Զի 'ի խնդրելս անդ զամենայնն՝ ոչ միտ գնեմ տեսլեան մարմնոյ, ոչ պատշաճ ժամու, ոչ պայծառ լուսոյ, ոչ գունոյ, ոչ երգոց քաղցրութեան և ոչ ձայնից հնչմանց, ոչ ծաղկանց և սպեղանեաց կամ խնկոց. ոչ մեղու կամ մանանայի 'ի բերկրանս քմոց. և ոչ այլոց առ 'ի ձեռն արկանել և գրկախառն փարիլ զսիրեցելովք. և ոչ

յայլ զգայութիւնս ընդ այսոքիւք ստոլ-
անկեալս : Քաւ ինձ յայսոսիկ կար-
ծել զԱստուած իմ. որ և յանանամը-
տաց անգամ գտրովեալ է :

Գ. Այլ 'ի խնդրելս զԱստուած իմ՝
խնդրեմ զլոյսն՝ որ 'ի վերս քան զամե-
նայն լոյս, զոր չէ տեսանել աչաց. զձ-
այնն խնդրեմ՝ որ 'ի վերս է քան զա-
մենայն ձայն՝ որում անմարթ է հպիլ
ականջաց. զհոտն անկշիռ՝ որում ոչ
բանին ունգունք. զքաղցրութիւնն ան-
չափ՝ որում ոչ տանին քիմք. զգրկա-
խառնութիւնն սիրատարփ՝ որում ոչ
հասանեն ձեռք : Փայլատակէ լոյս՝
զոր ոչ տանի տեղի. հնչէ ձայնս՝ ո-
րում ոչ հանդարտէ հոգի. բուրէ հո-
տըս՝ ուր ոչ հասանէ շունչ. գրկա-
խառնութիւնս սիրահարի՝ որում չիք
զատանիլ. այս է Աստուած իմ՝ և ոչ
ինչ այլ ընդ այլոց. զայս խնդրեմ 'ի
խնդրելս անդ զԱստուած. զայս սիրեմ՝
'ի սիրելս անդ զԱստուած :

Դ. Անագան ուրեմն սիրեցի զքեզ ըզ-
գեղեցկութիւնդ նախկին և վերջին. ուր
ուրեմն սիրեցի զքեզ՝ ուր դու 'ի ներքս

էիր՝ և ես արտաքոյ. 'ի գեղաւորս անդ
ղքեզ խնդրէի զորս ստեղծեր, և ես
'ի տգեղս անդ ընթանայի. դու ընդ իս
էիր և ես չէի ընդ քեզ. 'ի հեռաւորս 'ի
քէն ձգէին զիս որք ոչ անձամբ են բա-
ւական՝ այլ 'ի քէն։ Ընդ ամենայն ինչ
շուրջ եկի 'ի խնդիր քո՝ և յամենայնէ
զիս 'ի բաց կարէցի։ Հարցի զերկիր՝
Ատուած իմ իցէ նա, և ետ պատաս-
խանի՝ թէ չեմ. և որ ինչ կային 'ի նմա
զնոյն եղեն խոստովան։ Հարցի ընդ ծով
և ընդ անդունդս և զոր 'ի նմա սողունս,
և ետուն պատասխանի. Զեմք մեք Ա-
տուած քո, խնդրեա զնա 'ի վերոյ քան
զմեզ։ Հարցի ընդ հաստատութիւն օդոց՝
և զորս 'ի նմա բնակք, և ետ պատաս-
խանի. Պատրեցաւ Անաքսիմենէս, չեմ
ես Ատուած քո։ Հարցի զերկինս,
զարև, զլուսին և զաստեղս և ասացին.
Զեմք մեք Ատուած քո։

Ե. Ասացի անդրէն ցորս շուրջ կային
զինև. ասացէք ինձ թէ չէք դուք Ա-
տուած իմ, և արդ պատմեցէք ինձ
վասն նորա։ Անդէն ամենեքեան զաղա-
ղակ բարձին 'ի ձայն բարձր. Նա արար

զմեզ։ Հարցանել հարցի զերկիր։ Իցէ թէ դու իցես Աստուած իմ, տուր ինձ զլոյց։ արար ինձ պատասխանի ձայնիւ մեծաւ։ Զեմ ես ինձէն՝ այլ նոցա եմ, 'ի վերս քան զիս խնդրեսցես զնա՝ որ արարն և խնամէ զիս։ Հարցուածս ընդ արարածս խորհուրդ է խորին։ և պատասխանիք նոցա՝ վկայութիւն նոցա զԱստուծոյ, զի գոչեն ամենեքեան, Աստուած արար զմեզ։ զի ըստ ասից առաքելոյն՝ Աներևոյթքն Աստուծոյ արարածովքս աշխարհի իմացեալ լինին։

Զ։ Դարձ արարի անդրէն ցանձն իմ՝ և ասեմ ցիս։ Ո՞ ես դու։ և ետուս պատասխանի։ Մարդ բանաւոր և մահկանացու։ Վերստին հետազօտ եղէ թէ զի՞նչ իցէ։ և ասացի։ յորմէ է այդ կենդանի տէր Աստուած իմ։ յորմէ այլ՝ բաց 'ի քէն։ դու արարեր զիս և ոչ ես։ Իսկ զի՞նչ իցես դու տէր։ որով ես ապրիմ, որով ամենեքեան կեան, տէր Աստուած իմ Ճշմարիտ, միայն ամենակալ, յաւիտենական, անբովանդակելի և անչափ։ Որ կեաս միշտ և չիք քեզ

մեռանել. զի անմահ ես բնակեալ՝ի յա-
ւիտեան. սքանչելի յաչս հրեշտակաց,
անպատմելի, անիմանալի՝ և չնք քեզ
անուն: Աստուած կենդանի և ճշմա-
րիտ, ահաւոր և հզօր, անսկիզբն և
անվախճան, ծագումն ամենայնի և կա-
տարած, որ ես յառաջ քան զսկիզբն
աշխարհի և քան զծագումն նորա: Դու
ես Աստուած իմ՝ և տէր ամենեցուն
զորս ստեղծեր. և առ քեզ են սկզբնա-
ւիթք ամենայն եղելութեանց. յեղա-
փոխեալքս ամենայն անփոփոխ են առ
քեզ, և ամենայն բանականքս և անբանք
և ժամանակաւորք են ընդ քեզ՝ի կեանս
մշանջենաւոր:

Է. Ասա Աստուած իմ ինձ ծառայիդ
քում՝ որ կամս յողոք խոնարհեալ,
ասա եղկելոյս գթածդ, ասա աղա-
չեմ ողորմութեամբդ քով. ուստի՞ եցէ
այս կենդանի՝ եթէ ոչ՝ի քէն. և ո՞ այն
ճարտարապետ եցէ անձին բաւական.
՝ի քէն թէ յայլոց եցէ լինել և կեալ.
ոչ ապաքէն դու ես կեանք գերագոյն՝
յորմէ ելեալն կեանք ամենեցուն. որ
ինչ է՝ առ՝ի քէն է, զի առանց քո է և

ոչ ինչ։ Ո՞չ դու աղբիւր ես կենաց՝ յորմէ հոսեն կեանք. զի որ կեայ՝ քեւ կեայ, զի առանց քո ոչ ոք է որ ապրի։ Դու տէր ստեղծեր զամենայն՝ և արդ եղեց 'ի խնդիր ստեղծողին զիս. դու տէր արարեր զիս՝ առանց որոյ եղև և ոչ ինչ. դու ստեղծիչ իմ՝ և ես գործք ձեռաց քոց. շնորհ ունիմ քեզ տէր Աստուած իմ՝ որով կեամ ես և ամենեքեան՝ զի դու արարեր զիս. շնորհ ունիմ քեզ հաստատիչդ իմ՝ զի ձեռք քո արարին և ստեղծին զիս. շնորհ ունիմ քեզ լոյս իմ՝ որ լուսաւորեցեր զիս՝ և գտի զքեզ և զիս. ուր գտի զիս՝ անդ ծանեայ զիս։ և ուր զքեզ գտի՝ անդ և զքեզ ծանեայ. նա ուր ուրեք ծանեայ զքեզ՝ անդ և լուսաւորեցեր զիս. շնորհ ունիմ զքէն լոյս իմ՝ զի լուսաւորեցեր զիս։

Ը. Զի՞նչ է զոր ասացիս թէ ծանեայ զքեզ. ո՞չ ապաքէն դու ես Աստուած անիմանալի և անչափ՝ թագաւոր թագաւորաց և տէր տէրանց, որ միայն ունիս զանմահութիւն, և բնակիս 'ի լոյս անմատոյց, զոր ոչ ոք 'ի

մարդկանէ եռեռ՝ և կամ՝ կարող ի՞նչ տեսանել։ Ո՞չ դու ես Աստուած ծածկեալ և անքննելի՝ ուր դու միայն գիտես զանձն քո, և 'ի միտ առնուս ըստ քանչելազօր։ Ո՞վ ծանեաւ զոր ոչն ետես։ քանզի ասացեր Ճշմարտութեդ քով, չէ ոք 'ի մարդկանէ՝ որ տեսանիցէ զիս։ ասաց զսոյն և կարապետն քո քոյովդ Ճշմարտութեամբ, զԱստուած ոչ ոք ետես երբէք։ Իսկ ո՞ ծանեաւ՝ թէ ոչ տեսաւ։ քանզի ասաց Ճշմարտութիւնդ քո։ Ոչ ոք գիտէ զորդի՝ բայց միայն հայր, և ոչ զհայր ոք գիտէ՝ եթէ ոչ որդի։ միայն երրորդութիւնդ քո գիտակ է անձինդ՝ որ 'ի վերս է քան զամենայն միտս։

Թ։ Իսկ զի՞նչ է զոր ասացի՝ նմանեալս նանրութեան թէ ծանեայ ըզքեզ։ ո՞ ի՞նչ որ ծանեաւ զքեզ՝ եթէ ոչ դու, միայն Աստուած ամենակարող, ամենագովելի, փառաւորեալ, բարձրացեալ, և վերագոյակ, կոչեցեալ 'ի սրբութեան և յաստուածութեան։ Զի գերագոյն Ճանաչիս բնութեամբ և իմացութեամբ 'ի վերայ ամենայն ի-

մացական և անասուն բնութեան, և 'ի վերայ ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաստիս՝ այլ և 'ի հանդերձեալն. քանզի դերագահ և թագուն աստուածութեամբդ որ 'ի վերայ ամենայն մտաց իմացութեանց և գոյութեան, անմատոյց և անքննին բնակես 'ի քեզ. ուր լոյսն է անմատոյց՝ անհասանելի, անըմբռնելի և անպատմելի. առ որ ոչ հպի լոյս տարրական. զի ոչ անկանի ընդ խորհրդեամբ, որ անտեսն է, և 'ի վեր քան բան և զմիտս, անհպելի, անփոփոխ և անկցորդ։ Զոր ոչ ոք ետես 'ի հրեշտակաց կամ 'ի մարդկանէ. և ոչ տեսանել իսկ կարող է։ Այս քո երկինք է տէր, երկինք երկնից, թագուն, անիմանալի, անդր քան ըզմիտս՝ և լոյս գերակայ, վասն որոյ ասեմքս, երկինք երկնից տեառն են։

Ժ. Երկինք երկնից՝ առ որով յերկրի դոդցես համարի ամենայն երկին. զի դերահրաշ փառօք բազմեալ կայ 'ի վերայ ամենայն երկնից. առ որ երկիրս իսկ հրեղէնն համարեալ է երկին. այս է երկինք երկնից տեառն, որ չէ ծա-

նուցեալ ումեք՝ բայց միայն տեառն. ուր ոչ ոք ելանէ՝ եթէ ոչ որ էջն յերնից. զի չիք ոք որոյ ծանուցեալ լցէ զհայրն, զորդի՝ և զհոգի նոցուն. և ոչ ոք գիտէ զորդի՝ եթէ ոչ հայրն, և հոգի նոցա. քեզ միայն երրորդութիւնդ ակներև է քաջ։ Երրորդութիւն սուրբ, դերասքանչ, անպատում, անհաս, անհպելի, անըմբռնելի, անիմանալի և գերակայ՝ վերամբարձ քան զամենայն միտս, զզգայութիւնս, զբան, զիմացութիւն և զամենայն գոյակս հոգւոց երկնայնոց. զոր չէ մարթ ասել, կամ խորհիլ, կամ առնուլ 'ի միտ. և կամ գիտել, նա՝ և ոչ զուարթնոց անգամ։

ԺԱ. Իսկ ինքն ծանեայ զքեզ տէր Աստուած՝ բարձրեալ քան զամենայն երկիր և զերկին. որում ոչ քաջ 'ի վերայ հասանեն քերովբէք և սերովբէք, այլ թևովք խորհրդոց իւրեանց սքողեն զերեսս, աղաղակելով և ասելով՝ նասելոյն 'ի վերայ աթոռոյն բարձրելոյ. Սուրբ, սուրբ, սուրբ, տէր Աստուած զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառաւք քո։ Պակուցեալ մարդա-

ըէին ասէր. Վա՜յ ինձ, զիա՞րդ կամս հիացեալ, զի այր պղծաշուրթն եմ ես։ Զարհուրեցաւ սիրտ իմ և ասացի, վա՜յ ինձ. զիա՞րդ ոչ հիացայ. զի այր պղծաշուրթն եմ ես։ Եւ ասացի. Ծանեայ զքեզ։ Եւ արդարև վա՜յ որոց լռէին զքէն տէր, զի բազումք գոան վայրապիսաք առանց քո։ Եւ ես տէր Աստուած իմ՝ ոչ լուռ եղէց, փոխանակ զի ստեղծեր զիս և լուսաւորեցեր. գտեր զիս՝ և ծանեայ զքեզ, քանզի լոյս ծագեցեր յիս։

ԺԲ. Եւ զիա՞րդ ծանեայ զքեզ։ Ծանեայ զքեզ 'ի քեզ. ոչ որպէս 'ի քեզդ ես, այլ որպէս առ իս. ոչ առանց քո՝ այլ 'ի քեզ. զի դու ես լոյս՝ որ լուսաւորեցեր զիս։ Քանզի քեզ միայնոյ ծանուցեալ ես՝ որպէս եսդ 'ի քեզ. իսկ ծանուցեր ինձ՝ որպէս առ իս՝ շնորհօքդ քով։ Զի՞նչ ես ինձ. ասա բարեգութ տէր՝ ծառայիդ քում եղկելւոյ, պատմեա՛ ինձ ողորմութեամբդ քով՝ որ ինչ ելցես առ իս։ Զայն տուր հոգւոյս իմում. փրկութիւն քո ես եմ. մի թաքուցաներ զերեսս քո յինէն՝ զի մի մե-

ռայց։ Թոյլ արա ինձ խօսել ընդ ողորմութեանդ քում՝ որ հողս եմ և մոխիր։ զի մեծ է ողորմութիւն քո 'ի վերայ իմ։ խօսեցայց ընդ տեառն իմում՝ բայց ես հող եմ և մոխիր։ ասա ինձ՝ ծառայիդ քում, պատմեա ողորմածդ քում տառապելոյս։ տուր զլոյց ողորմութեամբ քով թէ զինչ եցես ըստ իմումն բաւելոյ։ Որոտասցես 'ի վերուստ ձայնիւ մեծաւ 'ի ներքին լսելիս սրտի իմոյ՝ 'ի բաց փարատեալ զխլութիւնս իմ։ և լուայ զձայն քո։ լուսաւորեցեր զկուրութիւնս իմ, և տեսի զլոյս քո, և գիտացի զի Աստուած իմ ես դու։ և անդ ասացի թէ ծանեայ զքեզ։

ԺԳ։ Ի միտ առի զի Աստուած իմ ես դու։ ծանեայ զքեզ միայն Ճշմարիտ Աստուած՝ և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։ Էր երբեմն մինչ ոչն գիտէի զքեզ։ վայ ժամանակին՝ յորում անծանօթ էի քեզ։ եղուկ կուրութեա՝ որ չտեսանէի զքեզ։ աւաղ խլութեանս՝ մինչ ոչն լսէի քեզ։ կոյրս և խուլ յընտրելոց անտի զորս արարեր՝ յանարգս

զէմ՝ գնէի։ Դու ընդ իս էիր և ես չէի ընդ քեզ. նա՝ նոքա զիս տարաձիգ ունէին առ 'ի քէն՝ որք չէին անձամբ, այլ 'ի ձեռն քո։ Լուսաւորեցեր զիս լոյսդ աշխարհի. տեսի զքեզ և սիրեցի։ Ոչ ոք սիրէ զքեզ՝ մինչ չև տեսեալ իցէ. և որ ոչն ետես՝ ոչ սիրէ զքեզ։ Անագան ուրեմն սիրեցի զգեղեցկուն Թիւնն՝ որ յառաջնմէն էր՝ և արդ ևս նորոգ. վայ ժամուն՝ յորում՝ ոչ սիրեցի զքեզ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս խոստովանաւորական ձշմարիտ հաշտարոյ.

Ա. Ընորհ ունիմ զքէն լոյսդ իմ՝ որ լուսաւորեցեր զիս՝ և ծանեայ զքեզ։ Եւ զիարդ այս։ Զի գիտացի զքեզ միայն Աստուած կենդանի՝ և ճշմարիտ արարիչ իմ. 'ի վերայ հասի՝ թէ ստեղծող ես երկնի և երկրի, տեսանելեաց

ամենայնի և աներևութից։ Աստուած Ճշմարիտ ամենակալ՝ անմահ՝ անտեսանելի՝ անպարագրելի՝ անսահմանելի՝ յաւիտենական՝ անմատոյց՝ անըմբռնելի՝ անհասանելի՝ անփոփոխ՝ անչափ՝ անեզր՝ սկիզբն ամենայն արարածոց՝ որ երևին և որ ոչն երևին։ որով ամենայն ինչ եղև, և կան տարերքն ամենայն, որոյ իշխանութեան նորա չեք սկիզբն և ոչ կատարած։ Գիտել գիտացի՝ թէ մի միայն ես Աստուած Ճըշմարիտ՝ յաւիտենական, հայր, և որդի և հոգի սուրբ։ երեք անձինք՝ այլ մի էութիւն։ ամենայնիւ պարզ և անբաժանելի բնութիւն։ Հայր ոչ յումեքէ, որդի 'ի հօրէ միայնոյ, և հոգին յերկոցունց միօրինակ։ անսկիզբն միշտ և անվախճան Աստուած՝ երրեակ և մի միայն, Ճշմարիտ Աստուած ամենակալող։ մի սկիզբն հաստատակաց։ արարչիչ ամենայն երևելեաց և աներևութից՝ հոգևորաց և մարմնեղինաց։ զորս քոյով ամենակալ զօրութեամբ 'ի սկըզբան անդ ժամանակաց յոչէից հաստեցեր ստեղծուածս՝ որ հոգեղէն և որ

մարմնեղէն. զհրեշտակականն ասեմ և զտիեզերացս, որով և զմարդկայինս, իբրև միօրինակ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ գոյաւորեալ։

Բ. Գիտեմ և դաւանիմ զքեզ Աստուած հայր անծին, և զորդիդ առ 'ի հօրէ ծնեալ. և զսուրբ հոգիդ միսիթարիչ՝ ոչ ծնեալ և ոչ անծին. սուրբ և անբաժանելի երրորդութի՝ յերրեակ համազօր անձինս համագոյակս և հաւասարս. երրորդութի'ի միութե, և միութիւն յերրորդութեան, սրտիւ հաւատացեալ յարդարութիւն՝ և բերանով խոստովանեալ 'ի փրկութիւն։ Դանեայ զքեզ Աշմարիտ Աստուած և տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որդի Աստուծոյ միածին, արարիչ, ազատեցուցիչ և փրկիչ իմ՝ և համօրէն մարդկային ազգիս. ծնեալ 'ի հօրէ յառաջ քան զաշխարհս, Աստուած յԱստուծոյ, լոյս'ի լուսոյ։ Աստուած Աշմարիտ յԱստուծոյ Աշմարտէ. ծնունդ և ոչ արարած. համագոյակից և հաւասարակից հօր և հոգւոյն սրբոյ, որով ամենայն ինչ եղև 'ի սկզբանէ. հաւատացեալ

վստահութեամբ և խոստովանեալ հաստատութեամբ՝ թէ դու Աստուած միածին Յիսուս Քրիստոս՝ վասն փրկութեան մարդկան մարմնացեալ յերրորդութենէդ և 'ի միշտ կուսէն Մարիամայ, յղացեալ գործակցելով հոգւոյդ սրբոյ, Հիմարիտ մարդ եղեր՝ անձնաւորեալ բանական հոգւով և մարդկեղէն մարմնով։

Գ. Որ թէպէտ և միածինդ Աստուծոյ անչարչարելի էիր ըստ աստուածութեանդ՝ նա և անմահ, առ մեծի սիրոյդ որով սիրեցեր զմեզ՝ որդիդ Աստուծոյ չարչարելի եղեր և մահկանացու ըստ մարդկութե։ Որ վասն փրկութե ազգի մարդկան՝'ի փայտ խաչին տարար տանջանաց և մահու՝ առ 'ի փրկել զմեզ 'ի յաւիտենից մահուանէն։ Նա՝ և 'ի դժոխս իսկ իջեր՝ ուր նստէին հարքն մեր 'ի խաւարի՝ արարիչդ լուսոյ, և յաւուրն երրորդի հրաշալի յաղթութեամբ յարեար 'ի դժոխոց՝ առեալ մարմին սուրբ՝ որ վասն մեղաց մերոց մեռեալ հանգեաւ 'ի տապանի. և կենդանացեալ ըստ գրեցելումն յեր-

ըորդ աւուր՝ առ 'ի հանգուցանել զնա ընդ աջմէ հօր։ Եւ առեալ ընդ քեզ զոր առ 'ի դժոխոց գերութիւն՝ ուր բանտացեալն էր հին թշնամին մարդկայնին ընութեանս, ճշմարիտ որդիդ Աստուծոյ, գոյացութեամբ մերովս մարմնով 'ի կուսականն առեցելոյ յարդանդէ՝ եղեր 'ի վերոյ քան զամենայն երկինս, անցեալ ընդ դասս հրեշտակաց, ուր աթոռն է ընդ աջմէ հօր Աստուծոյ։ և աղբիւրն է կենաց և լոյսն անմատոյց և աստուածայինն խաղաղութիւն՝ գերազանցեալ քան զամենայն միտս։

Դ։ Անդ քեզ երկիր պագանեմք՝ որ ես Աստուած ճշմարիտ և մարդ՝ Յիսուս Քրիստոս, և հաւատամք խոստովանութեամբ հանդերձ թէ Աստուած է քո հայր։ և անտի ակն ունիմք գալ 'ի դատաստան 'ի վախճան ժամանակաց՝ առ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանել ամենեցուն՝ բարեաց և չարաց ըստ գործոց իւրաքանչիւր՝ զորս գործեցին 'ի կենցաղումս կամ յաղթանակ և կամ պատուհաս,

ըստ որում՝ արժանաւոր գտանիցին հանգստեան կամ՝ աղեալից։ Քանզի յաւուրն յայնմիկ յարիցեն ամենեքեան 'ի ձայն զօրութեան քոյ, որք ընկալան զՀոգի մարդկային հանդերձ մարմնով իւրեանց որ յաստիան էր, զի այր իւրաքանչիւր ըստ արդեանց իւրոց մնասցէ փառաց կամ գեհենին։ Դու իսկ ես կեանք և յարութիւն մեր՝ որ ակն ունիմք ազատեցուցչիդ՝ տէր Յիսուս Քրիստոս՝ որ նորոգեաց զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանեալ ըստ մարմնոյ փառաց իւրոց։

Ե։ Ծանեայ զքեզ տէր Աշմարիտ և մի հոգի սուրբ հօր և որդւոյ։ յերկոցունց միօրինակ բղխեալ, համագոյ և հաւասար հօր և որդւոյ, միութիւն մեր։ որ իջեր աղաւնակերպ 'ի վերայ Աստուծոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և երևեցար առաքելոց հրեղէն լեզուաք։ ուսուցեր պարգևաք շնորհաց քոց զամենայն սուրբս և ընտրեալս Աստուծոյ 'ի սկզբանէ, և բացեր զբերանս մարգարէից պատմել զաքանչելիս թագաւորութեանն Ա-

տուծոյ. որ երկրպագիս և փառաւորիս յամենայն սրբոցն Աստուծոյ ընդ հօր և ընդ որդւոյ։ Ընդ որս և ես որդի աղախնոյ քոյ 'ի սրտէ իմմէ փառաւորեմ զանուն քո՝ զի լուսաւորեցեր զիս. զի դու ես լոյս Ճշմարիտ, Ճրագ Ճշգրտապատում, հուր Աստուծոյ, և վարդապետ հոգւոց՝ որ օծութեամբդ քով ուսուցանես մեզ զամենայն Ճշմարտութիւն. հոգիդ Ճշմարտութեան՝ առանց որոյ յանհնարիցն է հաճոյ լինել Աստուծոյ. զի դու ինքն ես Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, բղխեալ անՃառաբար 'ի հօրէն լուսոյ, և յորդւոյ նորա՝ 'ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, ընդ որս համագոյութեամբ և հաւասարութեամբ և յաւիտենակցութեամբ՝ կաս յէութեանէ սուրբ երրորդութեանդ, և գերակայութեամբ փառակցեալ թագաւորես։

Զ. Ծանեայ զքեզ մի Աստուած կենդանի և Ճշմարիտ՝ հայր և որդի և հոգի սուրբ՝ յերրեակ անձինս և 'ի մի էութեան՝ զոր խոստովան լինիմ, երկիր պագանեմ և փառաւորեմ յամենայն

սրտէ՝ որ ես Աշխարհիս Աստուած մի-
այն, սուրբ, անմահ, անտեսանելի, ան-
փոփոխ, անմատոյց, անհաս. մի լոյս,
մի արև, մի հաց, մի կեանք, մի սկիզ-
բն, մի վախճան, մի ստեղծող երկնի
և երկրի. որով ամենեքեան կեան, ա-
մենեքեան կան, ամենեքեան խնամար-
կին, կառավարին և կենդանանան՝ որք
յերկինս են, որք յերկրի և որք ընդ
երկրաւս. ուր բաց 'ի նմանէ չկայ Ա-
ստուած յերկինս և յերկրի։

Է. Ահա զայսօրինակ գիտացի զքեզ
տէր Աստուած՝ որ գիտեաղ զիս. ծա-
նեայ զքեզ հաւատովք քով զոր ինչէ-
ցեր յիս՝ լոյս իմ, ճրագ աչաց իմոց,
տէր Աստուած իմ, յոյս ամենայն ծա-
գաց երկրի, ուրախութիւն մանկու-
թեանս իմոյ, և բարութիւն՝ տածիչ
ծերութեանս իմոյ։ Ա՛ռ քեզ տէր ա-
ղաղակեն ամենայն ոսկերք իմ՝ ասե-
լով. Տէր ո՞ նման է քեզ. ո՞վ նմանիցի
քեզ յաստուածս տէր. ոչ զոր արար
ձեռն մարդոյ՝ այլ որ ստեղծեր զձեռն
մարդոյ։ Կուռք հեթանոսաց ոսկի և
արծաթ են, ձեռագործք են մարդկան.

ոչ այսպէս է Տէր՝ որ հաստատեցն զմարդիկ։ Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են՝ և տէր զերկինս արար, Տէր նա է Աստուած։ Աստուածք ոչք զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն յերկնից և յերկրէ։ Զ Աստուած օրհնեսցեն երկինք և երկիր՝ որ արարն զնոսա։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Խոստովանութիւն անձին թշուառութեան.

Ա. Ո՞վ նմանիցի քեզ յԱստուածս տէր՝ մեծդ փառաւորեալդ 'ի սուրբս, ահաւոր և գովելի և սքանչելագործ։ Անագան ծանեայ զքեզ լոյսդ Ճշմարիտ, քանզի ամենայն մեծ և խաւարին պաշարեալ ունէր զաչս ընդունայնութեան իմոյ. մինչ զի անձեռնհաս գտայ տեսանել զարեգակնդ արդարութեան և զլոյսդ Ճշմարտութեան։ Ի խաւարի անդ թաւալէի ծնունդս մթութեան.

սիրէի զիմ արհաւիրս, զի զլոյս ոչ ճա-
նաչէի։ Կոյր էի և կուրութեանս սի-
րող. և 'ի խաւարէ 'ի խաւար շրջէի.
ով ած զիս անտի այսր ուր կոյրն էի՝
նատեալ 'ի խաւարի և 'ի ստուերս մա-
հու։

Բ. Ո՞վ կալաւ զձեռանէ իմմէ առաջ-
նորդել ինձ, ո՞ է որ լուսաւորեացն
զիս։ Զելն ես նմին 'ի խնդիր՝ և նա
խնդրեաց զիս. ոչ կոչեցի զնա՝ և նա
կոչեաց զիս. և ո՞ ելցէ նա։ Դու ես տէր
Աստուած իմ, ողորմած զթած՝ հայր
ողորմութեան և Աստուած ամենայն
մխիթարութեան։ Դու սուրբ ես տէր
Աստուած իմ, որում խոստովան լի-
նիմ յամենայն սրտէ իմմէ՝ շնորհս ու-
նելով անուանդ քում։ Ոչ խնդրէի զզ-
քեզ՝ և դու զիս խնդրեցեր, ոչ կոչէի՝
և դու զիս կոչեցեր։

Գ. Կոչեցեր զիս յանուն քո. որ-
տացեր յերկնից ձայնիւ մեծաւ 'ի խորս
լսելեաց սրտի իմոյ. եղիցի լոյս և եղև
լոյս. 'ի բաց մեկնեցաւ ամպն մեծ՝ և
հալածեցաւ մէգն խաւարին՝ որ ծած-
կէրն զաչս իմ. տեսի զլոյս քո, ծա-

նեայ զձայն քո և ասացի. արդարև տէր դու ես Աստուած իմ՝ որ հաներ զիս 'ի խաւարէ և 'ի ստուերաց մահու՝ և կոչեցեր զիս 'ի սքանչելի լոյս քո՝ և ահա արդ տեսանեմ։ Ընորհ ունիմ զքէն լուսաւորիչդ իմ. զարձայ և տեսի զի խաւարն յորում էի, և զանդունդս մըթութեան յոր անկեալ կայի. ասասնեալ զարհուրեցայ և ասացի. վայ վայ խաւարին՝ յորում ես կայի. վայ կուրութեանն՝ յորում ոչ կարէի տեսանել զլոյսն երկնից. աւաղ տգիտութեանս իմոյ անցելոյ՝ յորում ոչ գիտէի զքեզ։ Ընորհս ունիմ զքէն լուսաւորիչ և ազատիչ իմ՝ զի լուսաւորեցեր զիս և ծանեայ զքեզ։ Անագան ծանեայ զքեզ Ճշմարտութիւնդ առաջին. ուր ուրեմն իմացայ զքեզ Ճշմարտութիւն յաւիտենական։ Դու 'ի լոյս էիր և ես 'ի խաւարի, և վասն այնր ոչ ծանեայ զքեզ. զի անմարթ էր ինձ լոյս ընդունել առանց քո. և զի չէք լոյս բաց 'ի քէն։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Խոկումն աստուածային մեծվայելչութեան.

Ա. Սուրբդ սրբոց՝ Աստուած մեծահրաշ, Աստուած աստուածոց և տէր տէրանց, սքանչելի, անպատմելի, անըմբռնելի. յորմէ զդողանի հարկանին յերկինս հրեշտակական պէտութիւնք. որում երկիրպագանեն տէրութիւնք և աթոռք և ամենայն զօրութիւնք սասանին յերեսաց քոց. որոյ իշխանութեանն և խմաստութեան ոչ գոյ թիւ. որ հիմն արկեր երկրի յոչէից վերայ. և զծովս պնդեցեր յօղա՝ գոգցես յարգանդի, ամենակալ՝ սուրբ հզօր Աստուած հոգւոց ամենայն մարմնոց. փախնուն 'ի քոց երեսաց երկինք և երկիր. և ակնարկութեան քոյ հպատակ կան հաւօրէն տարրականք. քեզ երկիր պագանեն և փառաւորեն զքեզ ամենայն արարածք քո:

Բ. Եւ ես որդի աղախնոյ քոյ՝ ըստ առ 'ի քէն հաւատոցս՝ հեղուտ զանձն իմ առ ոտս մեծվայելչութեանդ քոյ, շնորհս ունելով փոխանակ զի արժանաւոր զատեցեր զիս լուսաւորութեան ողորմութեամբդ քով։ Լոյս ճշմարիտ, լոյս սուրբ, սիրելի՝ գովելի՝ և սքանչելի. որ լուսաւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ՝ նա և զտեսանելիս հրեշտակաց։ Ահա տեսեալ և շնորհս ունիմ զքէն. տեսի զլոյսդ երկնից՝ որ լուսաւորէ զմիտս իմ առ 'ի վերուստ ձգեալ ճառագայթիւք՝ յերեսաց լուսոյ քոյ, և ուրախ առնէ զամենայն ոսկերս իմ։ Իցէ թէ գլխաւորեսցի այդ յիս. խնդրեմ 'ի քէն՝ առատաձեռնեա զլոյսդ առ 'ի լուսաւորել զիս. ձգեսցի յիս լոյսդ առ 'ի քէն։

Գ. Զինչ է զոր յանձին տանիմ. զինչ հուրս իցէ՝ որ ջեռուցանէ զսիրտ իմ. զինչ լոյս է՝ ճառագայթեալ 'ի սիրտ իմ։ Ո՛վ հուր մշտավառ և անշէջ՝ վառեա և զիս. ո՛վ լոյս համատպայծառ՝ անմահն խաւարի՝ լուսաւորեա զիս։ Իցէ թէ վառեցայց 'ի քէն հուր

տուրբ. զնաՀրդ բորբոքդ խնծղագին, ՝ի բը վառումնդ փափաքելի։ Վայ որոց ոչ վառին ՝ի քէն. և որք ոչ ընդունին զլոյս քո։ Ո՛վ լոյսդ ճշմարիտ՝ համարէն տիեզերացս լուսաւորիչ. որոյ լոյս ընու զաշխարհս։

Դ. Վայ կուրացելոց՝ որք ոչն տեսանեն զքեզ՝ զարևդ լուսաւորիչ երկնի և երկրի. աւաղ աչաց մթագնելոց՝ որք չեն ձեռնհաս զքեզ տեսանել. եղուկ տեսանելեաց՝ որք փախեան, զի մի տեսանիցեն զճշմարտութիւն. վաշ վաշ ՝ի բաց դարձելոց՝ անտես լինել ունայնութեան, զի ոչ զօրեն աչք ՝ի խաւար ընտանեցեալք հայիլ ՝ի ճառագայթս ճշմարտութեանն գերակայ. չգիտեն համարիլ ինչ զլոյսն՝ որոց ՝ի խաւարի է բնակութիւն։ Զխաւարն տեսանեն, նմին լինին սիրատարփ, զնա ներբողեն. գնան ՝ի խաւարէ ՝ի խաւար՝ և ոչ գիտեն յո՛ երթան։ Աւաղ նոցա զի ոչ գիտեն զինչ կորուսանեն. նա և թշուառական ևս՝ որք գիտեն զոր կորուսին. անկանին աչօք բացելովք՝ և ինչանեն կենդանւոյն ՝ի դժոխս։

Ե. Ո՛վ լոյս երջանիկ՝ զոր միայն աչաց անարատից է տեսանել. երանի՛ որոց սուրբ են սրտիւք զի նոքա զԱստուած տեսցեն։ Սրբեա զիս՝ զօրութիւնդ սրբարար. բուժեա զտեսանելիս իմ՝ առողջ խորհրդով խորհիլ ըզքէն՝ յոր կորովաբիբ աչաց ևեթ է հասանել։ Աղաչեմ զքեզ՝ բարձ յինէն զմէգն նախկին՝ Ճառագայթիւք լուսաւորութեան քոյ՝ անմատոյցդ լուսասփիւռ, զի կարող եղէց տեսանել զքեզ անհրաժեշտ հայեցիւք, և լուսովդ քով տեսանել զլոյս։ Շնորհ ունիմ զքէն, լոյսդ իմ, քանզի տեսանեմ աւասիկ. ընդարձակեսցի տեսութիւն իմ առ 'ի քէն։ Բարձ զքօղ յաչաց իմոց՝ խորհել զսքանչելիս օրինաց քոց՝ որ սքանչելիդ ես 'ի սուրբս քո։ Շնորհ ունիմ զքէն լոյսդ իմ. քանզի տեսանեմ աւասիկ՝ բայց ընդ հայելի օրինակաւ. իսկ երբ տեսից դէմ յանդիման. երբ եկեսցէ օրն բերկրանաց և ցնծութեան յորում մտից 'ի յարկս սքանչելի խորանիդ՝ մինչև 'ի տունդ Աստուծոյ. զի տեսից զքեզ դէմ յանդիման՝ որ տե-

սանեսդ զիս, և լիասցի ցանկութիւնս իմ։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս ցանկոտքեան և ծարաւոյ հոգւոյն առ Աստուած.

Ա. Զոր օրինակ փափաքէ եղջերու յաղբերս ջուրց՝ այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած. ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած հըզօր և կենդանի. երբ եկից երևեցայց երեսաց քոց։ Ո՛վ աղբիւրդ կենաց, վտակդ ջրոյ կենդանւոյ, երբ եցէ զի մատեայց առ ջուրս քաղցրութեան քոյ, յանապատ՝ յանկոխ և յանջրդի վայրաց, առ 'ի տեսանել զզօրութիւն և զփառս քո, և զովացուցից զծարաւս իմ 'ի ջրոց ողորմութեան քոյ։ Ծարաւի եմ տէր աղբիւրդ կենաց՝ զովացո զիս. ծարաւի եմ տէր, ծարաւի եմ առ քեզ Աստուած կենդանի. երբ

եկից և երևեցայց առաջի երեսաց քոց։
Այլ թէ տեսից զայն օր զուրախու-
թեանն և զցնծութեան՝ զոր արար տէր
առ 'ի խնդութիւն և 'ի բերկրանս մեր։

Բ. Ո՛վ լուսապայծառ և սքանչելի
աւուրն՝ որոյ չկաք երեկոյ և կամ մուտք,
յորում լուայց զձայն գովութեան զու-
րախութեանն և զխոստովանութեան,
թէ մուտ յուրախութիւն տեառն քոյ,
մուտ յուրախութիւն մշանջենաւոր 'ի
տուն տեառն Աստուծոյ քոյ, ուր մե-
ծամեծքն են և անքննելիք և սքանչե-
լիք՝ որոց ոչ է թիւ. մուտ յուրախու-
թիւն առանց տխրանաց՝ որ զյաւիտե-
նականն տանի յանձին զխնդութիւն.
ուր ամենայն բարիք են, և չկաք ինչ 'ի
չարեաց սակի. ուր կան փափաքեալքդ,
և մերժեալ են ատեցեալքդ. ուր կեանք
են քաղցր և սիրելի և յաւերժայիշա-
տակ. ուր չկաք թշնամի դիմամարտ՝ և
ոչ հրապոյրք. այլ ամենայնիւ և ան-
քոյթ վստահութիւն, խաղաղութիւն
և անդորրաւէտ զուարճութիւն, քաղցր
երջանկութիւն, երջանիկ յաւիտե-
նականութիւն, յաւիտենական երա-

նութիւն, և երանեալ երրորդութիւն, երրորդութեանն միութիւն, միութեանն աստուածութիւն, աստուածութեանն տեսութիւն երանացեալ՝ որ խնդութիւնն է տեառն Աստուծոյ քոյ։

Գ. Ո՛վ խնդութիւն դերակայ՝ և յաղթական ամենայն բերկրանաց, ուր բաց 'ի նմանէ չկայ ինչ ուրախութիւն։ Ե՞րբ մտից առ քեզ՝ տեսանել զԱստուածն իմ՝ որ 'ի քեզն բնակի. անդր մտից՝ և տեսից զտեսութիւնն զայն մեծարգի։ Զի՞նչ է որ զիս յետս 'ի բաց ընկրկէ. վա՛յ ինձ զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ. մինչև ցե՞րբ ասասցեն ցիս՝ ո՞ւր է աստուածն քո. մինչև ցե՞րբ ասասցեն ցիս թէ կա՛ մնա. և ահա զի՞նչ ակնկալութիւն է իմ. ո՞չ ապաքէն ակն ունիմք փրկչիդ մերոյ տեառն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, որ նորոգեաց զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ փառաց մարմնոյ իւրոյ։ Մնամք դարձի տեառն մերոյ 'ի հարսանեաց՝ մուծանել և զմեզ յիւրոյին հարսանիս։ Եկ տէր և մի յապաղեր. եկ տէր Յիսուս Քրիստոս, եկ

և յայց էլ մեզ 'ի խաղաղութիւն. եկ
և հան զկապեալս 'ի բանտէ՝ զի ուրախ
լիցուք առաջի քո լիապատար սրտիւ.
եկ փրկիչդ մեր՝ փափաքելիդ ամենայն
ազանց, ցոյց զերեսս քոյ՝ և անդէն փրկ-
կութիւն է մեզ. եկ լոյս և փրկիչ իմ.
հան 'ի բանտէ զանձն իմ՝ և խոստովան
եղէց զանուն սուրբ քո։

Դ. Մինչև ցե՞րբ տէր մնացից 'ի թը-
շուառութեան 'ի ծուփս մահկանացու
կենցաղոյս. աղաղակեմ առ քեզ՝ և դու
ոչ լսես. լուր ձայնի իմում Տէր՝ որ
կարդամս առ քեզ յայսմ մեծի ծովու,
և հան զիս 'ի նաւահանգիստ երանու-
թեան յաւիտենից. երանի՛ որոց 'ի վը-
տանգաց ծովուս առ քեզ տէր առաջ-
նորդեցան, և յապահով նաւահան-
գիստդ հասանել արժանաւորեցան։
Ո՛վ երանելեացն՝ որ 'ի ծովէս յափունս
հասին, յաքսորանացս 'ի հայրենիս, 'ի
բանտէ յապարանս՝ 'ի ցանկացեալն
հանգիստ երանաւէտ անդորրութեան.
որք յաղթանակաւ մշանջենաւոր փա-
ռաց՝ զոր ընդ բազում փորձութիւնս
խնդրեցին յաստուս՝ արդ ստացեալ է-

ղանութեամբ ցնծան յաւիտեան։ Ո՛վ Ճշմարիտ երանելեացն, և երիցս և չո-
րիցս երանի՛, որոց անցեալ ընդ ամե-
նայն չարիս, առ յապահովութիւն ան-
կորուստ փառացն՝ գտան արժանաւոր
հասանել առ թագաւորդ փառաց։ Ո՛վ
յաւիտենական թագաւորութիւն՝ որ
'ի վերայ համօրէն տիեզերաց. ուր լոյն
անշէջ, և խաղաղութիւնն սատուա-
ծային, որ 'ի վեր է քան զամենայն
միտս. յորում հանդչին սրբոցն ան-
ձինք, և ուրախութիւն է մշտնջենա-
ւոր 'ի վերայ գլխոց նոցա. սատացան
զցնծութիւն և զխնդութիւն, և տեղի
տացեն 'ի նոցանէ ցաւք և հեծութիւնք։

Ն. Զի՞նչդ հրաշափառ է թագաւո-
րութիւնն՝ յորում թագաւորեն տէր
ընդ քեզ ամենայն սուրբք. արկեալ
զանձամբ զլոյս որպէս զօթոց. և պսակ
եդեալ 'ի գլուխս իւրեանց 'ի քարանց
պատուականաց։ Ո՛վ թագաւորութե՛ն
մշտնջենաւոր երանութեան. ուր դու
տէր յոյսդ սրբոց՝ և պսակ փառաց դէմ
յանդիման երևիս սրբոց քոց, զուար-
ճացուցեալ զնոսա ամենայն ուստէք

խաղաղութեամբդ քով՝ որ 'ի վերջ է քան զամենայն միտս. անդ ուր խնդութիւնն է անվախճան, ուրախութիւն առանց տրտմութեան, փրկութիւն անցաւ, ընթացք անաշխատ, լոյս անմահան խաւարի, կեանք անմահ, և ամենայն բարիք՝ առանց ինչ չարեաց։ Ուր մանկութիւնն ծերանայ իսկ ոչ, կենաց չիք սահման, վայելչութեանն չիք թալկութիւն, սիրոյն չիք ցրտանալ, ուրախութեանն չիք նուազիլ, ցաւոց չիք յիշատակ, հեծութեան չիք ձայն, տրտմութեան չիք երևոյթ, ցնծութիւն միշտ, և ոչ ոք զանդիտէ 'ի չարեաց. զի ժառանգութիւն է անդ ծայրագոյն բարւոյն, որ է տեսանել հանապազ զերեսս տեառն զօրութեանց։

Զ. Երանի՛ որոց 'ի նաւաբեկութենէ ասոի կենացս 'ի մեծ ուրախութիւնդ ժամանել արժանաւոր եղեն. և եղուկ թշուառութեանս մերում՝ որ ընդ աչեսասոտ և ընդ մրրկայոյզ անդունդս ծովուս մեծի նաւարկեմք. անդիտացեալք զհասանելն 'ի նաւահանգիստ փրկութեան. թշուառս արդարև, զի

զի կեանք նոցա յաքսորս և՛ի վտանգս. կատարածն կեղակարծ՝ անծանօթ գո-
ղով ելից մերոց. քանզի ամենայն որ ինչ անասոյգն է՝ առ յաւիտեանս պա-
հեալ մնայ։ Ծփեալ կամք ընդ ալիս ծովուս՝ առ նաւահանգիստդ ակնկա-
ռոյց։ Ո՞վ հայրենիքդ մեր անվրդով, ՝ի հեռուստ տեսանեմք զքեզ, ՝ի ծովէ
աստի ողջունեմք զքեզ, ՝ի հովտէս առ քեզ ակնարկեմք. և դուն դարձեմք
արտասուօք՝ եթէ ի՞նչ մեզ ժամանել առ քեզ։

Է. Ակնկալութիւնդ ազգի մարդկան Քրիստոս Աստուած յԱստուծոյ՝ յոյս
մեր և զօրութիւն. որոյ Ճառագայթք լուսոյ՝ ՝ի հեռուստ անտի ՝ի մառախ-
լապատ ամպոց լոյս տայ աչաց մերոց՝ գոգ խբրև զաստղ ծովու, զի դէմ դի-
ցուք առ քեզ՝ առ նաւահանգիստդ։ Վարեա տէր զնաւս մեր ղեկաւ խաչի
աջոյդ քոյոյ. զի մի կորիցուք ընդ կո-
հակս ալեաց. մի ընկղմեացէ զմեզ պը-
տոյտ ջուրց, և մի կլցէ զմեզ անդունդ.
այլ խարսխաւ նաւուդ ձգեա զմեզ ՝ի
ծովէ աստի առ քեզ՝ որ միակ արդա-

հատդ ես մեր. զոր 'ի բացատ վայրացս նշմարեմք արտասուաթոր աչօք՝ իբրև զաստղ վաղորդայնի՝ և զարեգակն արդարութեան՝ 'ի ծովափունս այդր երկնային գաւառիդ մեզ մնալով։

Ը. Առ քեզ աղաղակեմք փրկեալքս քո՝ որ արդ յաքսորս կամք, զորս պատուական արեամբ քով գնեցեր։ Լուր մեզ Աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի և որ 'ի ծով հեռի։ Կամք 'ի խռովայոյզ ծովու՝ և դու կաս 'ի ծովեզերս՝ հայեցեալ 'ի վտանգս մեր, փրկեա զմեզ վասն անուան քո։ Տուր մեզ տէր՝ զմէջն ունելով զսկիւղայ և զքարիւղեայ՝ զերծանել և յերկուց ժայռից. ողջանգամ նաւաւ և լիաձեռն վարձուք յանքոյթ 'ի նաւահանգիստդ ժամանել։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս փառաց վերին հայրենեաց.

Ա. Ի ժամանն գտանել մեր առ քեզ առ աղբիւրդ խմաստութեան, և առ լոյսդ անսպառ՝ մինչև ոչ ևս ընդ հայելի օրինակաւ տեսանել զքեզ՝ այլ դէմ յանդիման, յայնժամ յաղեսցի 'ի բարութեան ցանկութիւն մեր, զի չեք ինչ փափաքելի արտաքոյ՝ բայց միայն դու տէր ծայրագոյն բարի, որ յաղթանակդ ես երանելեաց, պսակ վայելչութեան նոցա՝ և ուրախութիւն մշտնջենաւոր 'ի վերայ գլխոց նոցա, անդորրացուցեալ զնոսա ներքոյ և արտաքոյ խաղաղութեամբդ քով՝ որ 'ի վեր է քան զամենայն միտս. անդ տեսցուք, սիրեսցուք և բարեբանեսցուք: Տեսցուք լուսովդ քով զլոյս քո, զի առ քեզ է կենացն աղբիւր, և լուսովդ

քով տեսանեմք զլոյս. իսկ լոյս որ-
պիսի՞. անչափ, անմարմին, անապա-
կան, անըմբռնելի, անապառ, անշէջ,
անմատոյց, անատեղծ, ճշմարիտ և աս-
տուածային, որ լուսաւոր առնէ զաչս
հրեշտակաց, ուրախ առնէ զմանկու-
թիւն սրբոց, որ է լոյս լուսոյ և աղ-
բիւր կենաց՝ դու տէր Աստուած իմ։

Բ. Դու լոյս ես՝ զի լուսով քով տե-
սանեմք զլոյսդ. քև զքեզ՝ 'ի ճառա-
գայթս երեսաց քոց՝ 'ի տեսանել մեր
զքեզ դէմ յանդիման։ Զի՞նչ է դէմ
յանդիմանն տեսանել՝ բայց զոր ասէրն
առաքեալ ճանաչել՝ որպէս և նայն ծա-
նեաւ զիս, ճանաչել զճշմարտութիւն
և զփառս քո։ Այս է տեսանելն դէմ
յանդիման. իմանալն զհօր կարողու-
թիւն, զորդւոյն իմաստութիւն, զսըր-
բոյ հոգւոյն գթութիւն, զամենասուրբ
երրորդութեանն մի և անբաժանելի
էութիւն. քանզի տեսութիւն երեսաց
Աստուծոյ կենդանւոյ, զգերագոյն բար-
ւոյն, զհրեշտակացն և զամենայն սըր-
բոցն խնդութեան, զյաւիտենից կե-
նացն վարձուց, զվայելչութեան պատ-

կին, զերանութեան յաղթանակին, զարդասաւոր հանգստեանն, զգեղեցիկ խաղաղութեանն, զառ'ի ներքուստ և զարտաքուստ ուրախութեանն, զդըրախտին Աստուծոյ, զվերնոյն Երուսաղեմի, զերանեալ կենացն, զյաւիտենական բերկրանացն և զխաղաղութեանն Աստուծոյ՝ որ 'ի վեր է քան զամենայն միտս։

Գ. Այս է լիուլի երանութիւն և զեղուն փառաւորութիւն մարդկան. տեսանել զերեսս Աստուծոյ իւրոյ՝ որ ապրար զերկինս և զերկիր, որ ստեղծն զնա, որ փրկեացն զնա՝ և որ փառաւորեացն զնա։ Տեսցէ զնա Ճանաչելով. սիրել սիրեսցէ՝ և ստացութեամբն բարեբանեսցէ. քանզի նա ինքն բաժին ժառանգութեան ժողովրդեան իւրոյ սրբոյ՝ զոր փրկեաց. նա ինքն ժառանգութիւն երանութեան նոցա, յաղթանակ և վարձ ակնկալութեան. եղէց ասէ վարձ քո մեծ. քանզի և մեծաց՝ մեծամեծքն իսկ 'ի դէպ գան։ Արդարև տէր Աստուած իմ՝ մեծ ես յոյժ քան զամենայն աստուածս, և վարձք՝ առա-

ւելեալ։ քանզի ոչ եթէ մեծ ես դու և բաշխոյք առ՝ի քէն վարձուցն դուզ-նաքեայ, այլ ըստ մեծութեան քում մեծ են և պարգևքդ քո, զի ոչ այլ ինն ես դու, և այլ վարձք քո։ այլ դու մեծ ես, դու ես և ողորմութիւն քո մեծ։ դու ես որ պատկես՝ և դու ինքն պը-տակդ ես։ դու ես որ խոստանաս՝ և դու ինքն՝ զոր խոստանան։ դու ես պար-գևիչ և պարգև, յաղթական և յաղ-թանակ յաւիտենից երանութեան։

Դ։ Արդ դու ես որ պատկես՝ և ո-րով պատկես։ պատկ յուսոյ իմոյ՝ փա-ռօք պաճուճեալ, ճրագ զուարթա-ւոր, լոյս նորոգիչ, վայելչութիւն գե-ղազարդ։ յոյս իմ մեծ՝ և ցանկութիւն սրտից սրբոց։ Քոյդ տեսութիւն ամե-նայնիւ պարգև է, ամենայնիւ յաղթա-նակ է, և ամենայնիւ խնդութիւն է՝ ո-րում սպասեալ մնամք։ Քանզի այս իսկ է յաւիտենականն կենդանութիւն, այս է քո իմաստութիւն։ կեանք յա-ւիտենական՝ զի ծանիցուք զքեզ միայն ճշմարիտ Աստուած՝ և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։ Եւ՝ի տեսանել

անդ մեր զքեզ միայն Աստուած Ճշմա-
րիտ, կենդանի, ամենակալ, պարզ, ան-
տես, անպարագիր, անհաս, և զորդիդ
քո միածին՝ համագոյ և յաւիտենա-
կից քեզ զտէր մեր Յիսուս Քրիստոս,
զոր վասն մերոյ փրկութեան առաքե-
ցեր յաշխարհ՝ զօրութեամբ հոգւովդ
քով սրբով. երեքանձնեայ և միաբուն,
Աստուած սուրբ միայն՝ և բաց 'ի նմա-
նէ չկայ այլ Աստուած, յայնժամ 'ի
ձեռն ունկցիմք զոր խնդրէաքն՝ ըզ-
կեանս յաւիտենից, զփառան մշտնջե-
նաւոր՝ զոր պատրաստեցեր սիրելեաց
քոց, պահեցեր երկիւղածաց քոց, և
խոստացար տալ՝ որոց խնդրենն զերեսս
քո միշտ:

Ե. Եւ դու տէր Աստուած իմ՝ որ
ստեղծեր զիս յորովայնէ մօր իմոյ՝ որ
և յանձն արար զիս 'ի ձեռս քո, մի
թողուր զիս այլ ևս՝ 'ի միոյն 'ի բա-
զումս ձգիլ. և 'ի բաց հան զիս յորոց
արտաքոյ եցեն առ յինէն. զի ասասցէ
քեզ սիրտ իմ. Խնդրեաց զքեզ անձն
իմ. զերեսս քո տէր խնդրեցից՝ զտեսան
զօրութեանց, յորում են մշտնջենա-

ւոր փառք երանելեաց։ Ուրախ լիցի անձն իմ՝ զի երկիցէ յանուանէ քումմէ. ուրախ եղիցին որք խնդրեսցեն զտէրնա յաւէտ ևս՝ որք գտանեսցեն. զի թէ խնդութիւն լիցէ խնդրելն՝ իսկ քանիսո՞ն 'ի գտանելն։ Ապա խնդրեցիս հանապազ զերեսս քո փութով և անյապաղ. թերևս բացցի ինձ դուռն արդարութեան՝ 'ի մուտ ինձ յուրախութիւն տեսանն իմոյ։ Այս դուռն տեսանն է՝ և արդարք մտանեն ընդ սա։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Աղօթք առ երրորդութիւն սուրբ.

Ա. Ո՛վ երեք անձինք՝ հաւասարք և յաւիտենակիցք, մի Աստուած Ճշմարիտ՝ հայր և որդի և հոգի սուրբ՝ որ միայն բնակես յանմահութեան՝ և յանմատոյց 'ի լոյս. որ հիմնեցեր զերկիր զօրութեամբ քով, և վարես զաշխարհս իմաստութեամբ քով. սուրբ, սուրբ,

տուրբ տէր Աստուած զօրութեանց՝ ա-
հաւոր և հզօր, արդար և բարեգութ,
պքանչելի, բարեբանելի, սիրելի. մի
Աստուած երեքանձնեայ՝ մի էութիւն,
կարողութիւն, իմաստութիւն, բարու-
թիւն, մի և անբաժանելի երրորդու-
թիւն, բաց ինձ որ աղաղակեմն զդը-
ղունս արդարութեան՝ զի մոկց ընդ
այն և խոստովան եղէց քեզ տեառնդ։

Բ. Ահա զդղունս քո հարկանեմ
տնանկս՝ զմեծի տանուտեառնդ. հրա-
ման տուր բանալ խնդրողիս՝ որ ասա-
ցերդ, թէ որ բաղխէ բացցի նմա. բաղ-
խեն զդղունս քո փափաք ցանկութեան
աղաղակի խնդրուածաց իմոց, և հե-
ծութիւնք արտասուաց աչաց իմոց. ա-
ռաջի քո է ամենայն ցանկութիւն իմ։
և հեծութիւն իմ չէ թաղուն առ 'ի
քէն։ Տէր մի դարձուցաներ զերեսս
քո յինէն, և մի դառնար բարկութեամբ
'ի ծառայէ քումմէ։ Հայր ողորմու-
թեանց, լուր աղաղակի որբոց քոց, և
ձգեա զձեռն քո յօգնութիւն 'ի վեր
առնուլ զիս 'ի խորոց ջուրց, 'ի գերՍ
թշուառութեան և 'ի տղմոյ ապակա-

նութեան, զի մի կորեայց 'ի տեսանել անդ աչաց ողորմութեան քոյ՝ և 'ի հայել կամաց գթութեան քոյ. այլ մատեայց առ քեզ տէր Աստուած իմ, տեսանել զմեծութիւն թագաւորութեան քոյ, և հայեցեալ յերեսս քո հանապազ՝ բարեբանեցից զանուն քո սուրբ։ Տէր սքանչելագործ՝ որ ուրախս առնես զսիրտ իմ յիշատակաւ քո, և լուսաւոր առնես զմանկութիւն իմ՝ մի թողուր զիս յաւուր ծերութեան իմոյ. այլ ուրախացո զոսկերս իմ, և նորափեսուր զարդարեա ի բերև զարծուոյ։



ՆՈՐԻՆ

ՍՐԲՈՅՆ ԱՒԳՈՍՏԻՆՈՍԻ

ԱՌՁԵՌՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ

ՍՐԲՈՅՆ ԱՒԳՈՍՏԻՆՈՍԻ

ԱՌՁԵՌՆԱԿԱՆ

Քանզի յորոգայթից միջի կամք, դիւրաւ հովանամք յերկնաւոր տեն-
չանաց. սմին իրի հանապազորդ կարօ-
տիմք սատարութեան, որով արթնա-
ցեալ դիմեսցուք՝ ցորչափ վայրաբե-
րիմք, 'ի վերս կոյս առ Աստուած մեր՝
առ Ճշմարիտ և ծայրագոյն բարին։ Յա-
ղագս այսորիկ ոչ առ յանդուգն յանձ-
նապաստանութեան, այլ առ մեծի սի-
րելութեան Աստուծոյ մերոյ՝ բուռն
հարի 'ի սոյն պիտաւութիւն 'ի փառս
Աստուծոյ. որպէս զի 'ի պանծալի պան-
ծալի սասցուածոց հարցն սրբոց՝ զհա-
մառօտ և զառձեռն պատրաստ բան
զԱստուծոյ իմմէ լեցի ինձ ընդ իս ու-
նել միշտ. և ցորչափ հովանամ, 'ի հրոյ
սատի ընթերցուածոյս՝ 'ի նորուն վա-
ռեցայց սէր։ Եւ արդ մերձ լեր առ իս
Աստուած իմ, զոր խնդրեմ, զոր սի-

ըեմ, զոր սրտիս և բերանով, և յամենայն զօրութենէ փառաւորեմ և երկիրպագանեմ:

Սիրտ իմ եռացեալ 'ի քեզ, քոյին վառեալ սիրով, առ քեզ հառաչէ, առ քեզ հեծեծէ, զքեզ միայն ցանկայ տեսանել. չեք ինչ նմա առաւել քաղցր բայց միայն զքէն խօսել, զքէն լսել, զքէն գրել, զքէն ճառել, զփառս քո որոնել ստէպ 'ի խորհուրդս սրտի. որպէս զի քոյդ քաղցր յիշատակ լեցի 'ի մէջ մրրկացս դիւր ինչ և հանգիստ իմ:

Արդ զքեզ կարդամ ով տենչալիդ, առ քեզ աղաղակեմ մեծաւ գոչմամբ 'ի խորս սրտի իմոյ ողջոյն: Եւ յորժամ կարդամս առ քեզ, անշուշտ յանձին իմում կարդամ: Վասն զի ամենևին լինէի իսկ ոչ, եթէ դու չլինէիր յիս. և եթէ ոչ էի ես 'ի քեզ, ոչ էիր դու յիս: Յիս ես, վասն զի կաս միաս յուշ ի իմում. յայդմանէ ծանեայ զքեզ, և յայդմ գտանեմ զքեզ, յորժամ յուշ ածեմ զքեզ, և զուարճանամ 'ի քեզ. յորմէ ամենայն, որով ամենայն, յորում ամենայն:

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս աքանչելի խակոբեան և ներկայոբեանն Աստուծոյ.

Դու տէր զերկինս և զերկիր ընուս, որ զամենայն կրես առանց ծանրութեան, և լցուցիչ ես ամենայնի անպարագրութեամբ։ Մշտագործ՝ յաւերժահանգիստ. ժողովող՝ անկարօտ. խնդրող՝ ապենիազ. սիրող՝ անախտ, և նախանձաւոր՝ անհերկեան։ Զղջանաս՝ անցաւութեամբ, բարկանաս՝ անախտութեամբ. փոփոխես զգործս, այլ ոչ փոխես զխորհուրդս։ Ընդունիս՝ զոր գտանես. այլ ոչ երբէք կորուսեալ է քո զայն։ Ոչ երբէք չքաւորիս, և ուրախ լինիս 'ի շահելդ. ոչ երբէք ագահես, այլ պահանջես զտոկոսիս։ Հատուցանես՝ ուր չես պարտա-

կան. կամ միշտ պահանջի 'ի քէն որ-
պէս թէ պարտական իցես։

Եւ ո՞ոք ունի ինչ, որ ոչ քո իցէ։
Վ.Ճարեա զպարտս՝ անպարտդ ամե-
նայնի. թողուս զպարտիս՝ անկորուստ
ամենայնիւ։ Որ եսդ ամենուրեք, և ա-
մենայն ուրեք բովանդակ։ Որ ղդալի
մեզ լինիս, և անտեսանելի դտանիս։
Որ անպակասելիդ ես երբէք, և սա-
կայն հեռի ես 'ի խորհրդոցն անզգա-
մաց։ Որ և ոչ անդանօր պակասես, ու-
րանօր հեռի դտանիս. վասն զի ուր
չկաս շնորհօք, կաս վրէժինդրութեամբ։
Որ յամենայն տեղիս առաջնակայ ես, և
անդտանելի։ Ի կալ քո անշարժական՝
զհետ ընթանամք քո, և հասանել ան-
կարանամք։ Որ 'ի բոլոր ունիս զամե-
նայն, ընուս զամենայն, պարագրես զա-
մենայն, գերազանցես զամենայն, և
պահես զամենայն։

Որ ուսուցիչդ ես արտից հաւատա-
ցելոց առանց շինչման բանից։ Որ ոչ
տեղեօք անջրպետիս, ոչ ժամանակօք
յեղափոխիս, անմերձենալի և անհե-
ռանալի. որ բնակեսդ 'ի լոյս անմա-

տոյց. զոր ոչ ոք էտես 'ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է։ Ի քեզ կա-
ղով մնալով հանդարտեալ՝ ընդ ամ-
նայն տեղիս յածիս համօրէն. զի ան-
հնար է քեզ երկիւղիլ և բաժանիլ-
վասն զի ճշմարտապէս մի ես. և ոչ 'ի
մասունս տրոհիս, այլ բոլորդ զբոլորն
ունիս, զբովանդակն ընդուս, զամենայն-
զնեես և ժառանգես։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս անձառ գիտութեան, և տեսչութեանն Աստուծոյ.

Եթէ զաշխարհ ամենայն ընդունիս
մատեանք, քոյդ գիտութիւն անձա-
ռական՝ մնայ անպատմելի։ Եւ զի անա-
սելի ես, վասն որոյ և անգրելի, և ան-
պարագրելի։ Դու ես ակն լուսոյ աս-
տուածութեան, և արեգակն յաւիտե-
նական պայծառութեան։ Մեծ՝ ան-
քանակ, վասն որոյ և անչափ։ Բարի՝

անորակ. վասն որոյ Ճշմարիտ և ծայ-
րագոյն բարի. և ոչ որ բարի, բայց գու-
միայն: Որոյ կամքն է գործ, և կամելդ՝
կարել. որ զամենայնն՝ զոր յոչնչէ ա-
րարեր, միայն կամօք արարեր. որ զա-
մենայն արարած քո առանց բնաւին
կարօտութեան ստացեալ ունիս, և ա-
ռանց աշխատութեան ղեկավարես, և
առանց ճանձրութեան ուղղես, և չինք
ինչ՝ որ վրդովիցէ զկարգ ինքնակալու-
թեան քո, եթէ 'ի վեր և եթէ 'ի խա-
նարհ: Որ չունիս քեզ տեղի սեպհա-
կան, և ամենուրեք բնակես. որ զա-
մենայն պարագրես՝ անպարունակ. և
ամենայն ուրեք ես ներկայ առանց դրից
և շարժութեան: Որ և ոչ չարին ես
գտակ, զոր անհնար է քեզ առնել.
այնմ՝ որում ամենայն ինչ հնարաւոր
է. և ոչ երբեք զղջացար՝ ընդ որ արա-
ր: Որոյ բարութեամբ և բարերա-
րութեամբ եղեաք, և արդարութեամբ
վրէժս լուծանեմք, և գթութեամբ ա-
զատիմք: Որոյ ամենակարողութիւն
ղեկավարէ զամենայն, ուղղէ, և ընու-
զարարածս իւր: Եւ ոչ առ այս ասեմք՝

ընուլ քեզ զամենայն, որպէս այն թէ զքեզ բովանդակիցեն. այլ զի տիրապէս առ 'ի քէն բովանդակին։ Եւ ոչ մասն մասն ընուս զամենայն. և ոչ բընաւ երբէք այնպէս է կարծելի, որպէս թէ իւրաքանչիւր ինչ ըստ մեծութեան բաժնի իւրոյ ունիցին զքեզ, այս է մեծն զմեծ, և փոքրն զփոքր մասն. այլ առաւել՝ դու ինքնին գլխովին ես բոլոր յամենայնի, և ամենայն 'ի քեզ։ Քո ամենակալ զօրութիւն զամենայնն յինքն փակէ միանգամայն. և ոչ կարէ ոք գտանել ելս հնարից զերծ լինելոյ 'ի քումմէ կարողութենէ։ Զի որ ոչն ունի զքեզ հաշտ, ոչ զերծանիցի և 'ի ձեռաց ցասուցելոյդ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս տեսչական աստուածային հոգւոյ.

Եւ արդ զքեզ ամենագութդ Աստուած կարդամ 'ի սիրտ իմ, զոր պատրաստեցեր ընդունակ քեզ լինել՝ փափաքանօք, զոր շնչես և ազդես 'ի նա։ Աղէ մուտ 'ի նոյն, և բարեյարմարեա զայն քեզ, զի ժառանգեսցես զնա՝ զոր ստեղծեր և նորաստեղծեր. եղիցի ինձ ունել զքեզ իբրև կնիք 'ի վերայ սրտի իմոյ։ Աղաչեմ, մարդասէր, մի զիս անտես առներ՝ որ կարդամս առ քեզ. զի մինչ չև էր իմ կարդացեալ առ քեզ, դու կոչեցեր և խնդրեցեր զիս. որպէս զի ես ծառայ քո խնդրեցից զքեզ. 'ի խնդրելն գտից, և 'ի գտանելն սիրեցից։ Խնդրեցի և գտի զքեզ տէր. և տենչամ սիրել։ Ածեցո զտենչ իմ, և տուր զոր ժառեմն։ Զի թէ և տայցես

ինձ զամենայն՝ զոր արարեր, չէ բա-
ւական ծառայի քում, եթէ ոչ զքեզ
տայցես։ Հապա, տուր ինձ զքեզ ինքն
գլխովին. Աստուած իմ, առատաձեռ-
նեա ինձ զքեզ։ Ահաւասիկ սիրեմ զք-
քեզ. և եթէ սակաւ է, սիրեցից ևս
քան զևս։ Այլ արդ քո սիրովդ եմ
հարեալ, քո տարփանօք խորովեալ,
քո քաղցր յիշատակաւ զուարթա-
ցեալ։

Ահաւասիկ ցորչափ միտք իմ առ քեզ
հառաչեն, և զքոյդ խորհին անճառ
մարդասիրութիւն, բեռն մարմնոյս ան-
դամ ոչ այնչափ զիս ծանրէ, դադա-
րեն ամբոխմունք խորհրդոց, ծանրու-
թիւն աղցաւոր կենաց և թշուառու-
թեանց ոչ ըստ սովորութեան բթա-
ցուցանէ. լռէ ամենայն, խաղաղի ամե-
նայն ինչ։ Սիրտ բորբոքի, ոգին բեր-
կրի, ուշն արծարծանի, միտք լուսա-
ւորին. և հոգին գլխովին 'ի տենչմանէ
քումդ տեսլեան վառեալ՝ 'ի սիրոյ ան-
ակ անտեսից տեսանէ զանձն յափշտ-
ակեալ։ Առցէ հոգիս թեւս որպէս
զարծուոյ, թռիցէ, և ոչ վաստակես-

ցի, թափցէ և հասցէ մինչև 'ի վայել-
չութիւն տան քո, և յաթոռ փառաց
քոց. և անդ 'ի վերայ սեղանոյ կոչնոյ
վերին քաղաքացեաց պարարեսցի 'ի
գաղտնեաց քոց՝ 'ի տեղի արօտոյ առ-
լեալզեղուն վտակօք։ Դու լինիր ուրա-
խութիւն մեր, դու ես յոյս մեր, կեանք
և փրկութիւն։ Դու լինիր խնդութիւն
մեր, որ լինելոցդ ես վարձ և պսակ
մեր։ Զ.քեզ հանապազ խնդրեսցէ անձն
իմ. և դու տուր՝ զի մի լքայց 'ի խըն-
դրել անդ։

ԳԼՈՒԽ Դ.

Թէ ո՛րպէս պարտ է սիրել, և խնդրել զՏէր.

Վա՜յ անձին հիգացելոյ, որ ոչ խընդրէ և ոչ սիրէ զՔրիստոս. զի մնայ գօսացեալ և չուառացեալ: Կորուսանէ զիւր կենդանութիւն, այն՝ որ ըզքեզ ոչ սիրէ զԱստուած իւր: Որ հոգայ կեալ, և ոչ վասն քո՝ տէր, ոչ ինչ է և յոչինչ համարեսցի: Որ ոչ առնու յանձն կենդանի լինել՝ի քեզ, մեռեալ է: Որ ոչն իմաստնանայ, անմըտանայ: Ով ամենագութ, քեզ յանձն առնեմ զանձն իմ, հատուցանեմ և անձնատուր լինիմ. որով եմ, որով կենդանի եմ, և իմացական: Առ քեզ ապաւինիմ, քեզ ակն ունիմ, և՝ի քեզ դնեմ զամենայն յոյս իմ. որով ունիմ յառնել, կենդանի լինել, և հանգչել: Քեզ փափաքեմ, զքեզ սիրեմ, քեզ

ենրկիրպատանեմ. ընդ որում լիցի ինձ կալ ճնալ, թագաւորել, և երանելի լինել։ Անձն՝ որ ոչ խնդրէ զքեզ և ոչ սիրէ, այլ՝ սիրող է աշխարհի, ծառայ մեղաց, և գերի ախտից, ոչ երբէք հանդիստ գտանէ և ոչ ապահովութիւն։ Ծառայասցի քեզ միշտ անձն իմ, մարդասէր. յոգւոց ելանիցէ միշտ առ քեզ ազանդիստութիւն իմ. բորբոքեսցի սիրով քո սիրտ իմ։ Ի քեզ հանգիցէ անձն իմ Աստուած իմ. քո լիցի նկատող 'ի խորս սրտի. երդեցից զօրհնութիւնս քո 'ի ձայն ցնծութեան. և այս եղիցի միխիթարութիւն իմ յայս աքսորանս։ Ապաստան լիցին միտք իմ ընդ հովանեաւ թևոց քոց՝ 'ի յարկաց խորհրդոց աշխարհիս այսորիկ։ Դլասցէ դադարեսցէ 'ի քեզ սիրտ իմ, սիրտ՝ ծով մեծ դիզացեալ աւէօք։ Ո՛վ Ճոխդ ամենայն խորտիկք բարութեանց՝ որ զվերինն տաս յապուրդ՝ ամենահարուստ առատաձեռնողդ Աստուած, տուր յոգնելոյս կերակուր, ժողովեա զիս զցրուեալս, ազատեա զգերիս, և նոր նորոգեա զպատառեալս։ Ահաւա-

սիկ կայ անձն իմ առ դուրս քո, և բա-
խէ։ Աղաչեմ վասն գթոյ ողորմութեան
քո, որով այց արարեր մեզ ծագումնդ
'ի բարձանց. հրաման տուր բանալ
հէգ բախողիս, զի ազատաքայլ մտից
առաջի քո, և հանգեայց 'ի քեզ, և հաս-
տատեսցի սիրտ իմ 'ի քէն յերկնաւոր
հացէդ։ Զի դու ես հաց կենաց, և աղ-
բիւր կենաց. դու լոյս յաւիտենական
պայծառութեան. դու ամենայն ինչ,
որով կեան՝ ոչք սիրեն զքեզ՝ ուղիղք։

ԳԼՈՒԽ Ե.

Յեղեղ հոգւոյ.

Աստուած, լոյս սրտից զքեզ տեսո-
ղաց, և կեանք հոգւոց զքեզ սիրողաց,
և զօրութիւն խորհրդոց զքեզ խնդրո-
ղաց, տուր ինձ յարիլ 'ի սէր քո սուրբ։
Եկ, աղաչեմ, 'ի սիրտ իմ, և արբեցո
զնա 'ի պարարտութենէ փափկութեան
քո, զի մոռացայց զժամանակաւորքս։

Ամաչեմ և հարթչիմ կրել յանձին զայնպիսիս, որպիսիս ներգործէ յաշխարհս այս։ Տրտմալի է ինձ՝ զոր տեսանեմս. ծանր է ամենայնն, զոր լսեմ զանցաւորաց։ Օգնական իմ լեր տէր Աստուած իմ, և տուր ուրախութիւն 'ի սիրտ իմ. եկ առ իս, զի տեսից զՔեզ։ Այլ անձուկ է ինձ տուն հոգւոյ իմոյ, մինչև եկաւորեսցիս անդր, և ընդարձակեսցի առ 'ի քէն։ Աւերակ է, նորակերտեա զնա. ունել ունի բազում ինչ իրս, որք դառնացուցիչք են աչաց քոց, խոստովանիմ զայդ և գիտեմ. այլ ո՞ սրբեսցէ զնա, կամ ո՞ւմ այլում բողոքեցից բաց 'ի քէն։ Ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս տէր, և յօտարէն պահեա զծառայս քո։

Տուր ինձ քաղցր և բարերար փրկիչ Յիսուս Քրիստոս, տուր ինձ աղաչեմ, սիրով և տենչմամբ քո 'ի բաց դնել զծանրութիւն մարմնաւորցանկութեանց, և երկրաքարշ յօժարութեանց։ Իշխեսցէ մարմնոյս՝ հոգիս, հոգւոյս՝ բանն բանականիս՝ շնորհք քո. և ներքոյ և արտաքոյ՝ քոյոց ներքոյ արկջիր զիս

կամաց։ Ընդրհեա ինձ, զի օրհնեալ
զքեզ սիրա իմ և լեզու իմ և ամենայն
ոսկերք իմ։ Ընդարձակեցո զմիտս իմ,
և վերացո զտեսութիւն սրտիս, զի յան-
կարծ և սրընթաց մտօք ժամանս լեցի
առ քեզ հոգիս՝ առ յաւիտենականդ
ճշմարտութիւն որ է գեր 'ի վերոյ քան
զամենայն։ Արձակեա զիս, աղաչեմ,
'ի կապանաց, որովք կաշկանդեալ կամ-
զի թողեալ զայս ամենայն՝ քեզ ծա-
ռայեցից, 'ի քեզ միայն յարեցայց,
քեզ միայնոյ ուշ կալայց։

ԳԼՈՒԽ Զ.

Երջանիկ վիճակ հոգւոյ արձակելոյ յերկրաւոր բանտէս.

Ո՜վ բարեմասնութեան հոգւոյ, որոյ լուծեալ 'ի կապանաց երկրաւոր բանտիս՝ արձակ արձակ յերկինս դիմէ. որ զամենաքաղցր տէրդ դէմ յանդիման տեսանէ. որ աներկիւղ դադարէ յամենայն 'ի մահուանէ, և ցնծայ ընդ անեղծութիւն փառացն յաւիտենից: Խաղաղ է և անքոյթ. ոչ ևս է նմա զանգիտել յերեսաց թշնամւոյ կամ մահու: Զ.քեզ ունի զմարդասէր տէրդ, զոր յերկար խնդրեաց և միշտ սիրեաց: Դասակցեալ ընդ պարս փառաբանչաց՝ միաձայնութեամբ նուագեսցէ յաւիտեան 'ի պատիւ փառաց քոց զմեղեդիս անոյշս յաւերժական տօնախմբութեան, փառաց թագաւոր Քրիստոս Յիսուս: Վասն զի արբեսցի 'ի

պարարտութենէ տան քո, և յուղեցից փափկութեան քո տացես ըմպել նմա։ Ո՛վ երջանիկ միաբանութեան վերնաքաղաքակցաց, և հրաշափառ հանդիսի հասարակաց բոլորեցուն, առ քեզ դարձելոց՝ 'ի տխուր վաստակոց այսր մերոյ պանդխտութեանս՝ առ զուարճութիւն վայելչութեան, առ գեղեցկութիւն համօրէն պայծառութեան, և 'ի շքեղութիւն գերապանծ փառաւորութեան։ Անդանօր հանապազ, տէր, 'ի քեզ են աչք քոց քաղաքակցաց։ Զի՞նչ ինչ անդ յունկն հնչեցեալ, որ խառվեցէ զմիտս։

Բա՞ն, որպիսի՞ նուագք, որպիսի՞ նուագարանք, որպիսի՞ ձայնք երաժշտականաց, որպիսի՞ քաղցր հնչմունք երգաբանեալ լինին անդանօր յաւէժաբար։ Անդ հնչեցուցանեն հանապազ զանուշակ մեղեդեաց երգեհոնս քաղցրաբարբառ երգաձայնութիւնք հրեշտակաց, երգս երգոց սիրելիս զորս նուագեն 'ի պատիւ կենաց և փառաց քոց վերնաքաղաքացիք։ Ոչ ունին տեղի յայնմ աշխարհի դառնութիւն և

դժնէութիւն ամենայն լեզուոյ. զի չկայ անդ չար, և ոչ չարութիւն. չկայ հակառակորդ և դիմամարտ, և ոչ հրապոյրք ինչ մեղաց։ Չկայ անդ կարօտութիւն և ոչ մի, ոչ ինչ դժպատեհութիւն, ոչ կաց և ոչ կռիւ, ոչ նախատինք, ոչ պատճառադրութիւն, ոչ երկիւղ և ոչ անհանգստութիւն, ոչ պատիժ, ոչ երկբայութիւն, ոչ բըռնութիւն, և ոչ երկպառակութիւն. այլ անդ է խաղաղութիւն ծայրացեալ, սէր լիապատար, ձայն ցնծութեան և փառաբանութիւն Աստուծոյ յաւէժական. հանդիստ աներկեան յանվախճան յաւիտեանս, և խնդութիւն միշտ 'ի Հոգի սուրբ։

Ո՛վ, որպէս բարեբախտ գտայց, եթէ եղեցի ինձ լսել զամենազուարճ նուագերգութիւնս քաղաքակցաց քոց, զքաղցր քաղցր հնչմունս, որովք վերառաքին փառք բարձրելոյդ Երրորդութեան արժանաւոր պատուով։ Այլ ևս քան զևս բարերջանիկ գտայց, եթէ և ես ինքնին արժանի եղէց երգել զերգս տեառնդ իմոյ Յիսուսի Քրիստոսի՝ 'ի քաղցր երգոց անտի Սիոնի։

ԳԼՈՒԽ Է.

Բերկրապատար վիճակ երկնից արքայութեան.

Ո՛վ կեանք կենդանական, կենդանութիւն մշանջենաւոր, և մշանջենաւորապէս երանական: Ուր ուրախութիւն անտրտում, հանգիստ անաշխատ, պատիւ անկասկած, մեծութիւն անկորուստ, առողջութիւն անախտ, առատութիւն անպակասելի, կեանք անմահական, յաւերժականութիւն անեղծական, երանութիւն անախեղծ. ուր ամենայն բարիք՝ի սէր կատարեալ. ուր տեսիլ և տեսութիւն երես առ երես. ուր գիտութիւն լիակատար յամենայնի և յաղագս ամենայնի. ուր ծայրագոյն բարութիւնն Աստուծոյ տեսանի, և ըստ՝ որ լուսաւոր առնէ և փառաբանի՝ի սրբոց. ուր մեծվայելչութիւնն Աստուծոյ գէմ յանդիման

նկատի: Եւ սովին անապատ կենաց կերակրով միտք ակնարկողաց յագին միշտ տեսանեն, և տեսանել ցանկան առանց նեղութեան ցանկանան, և առանց յափրութեան յագենան:

Ուր անդանօր Ճշմարիտ արեգակն արդարութեան աքանչելահրաշ տեսութեամբ գեղոյ իւրոյ կազդուրեցուցանէ զամենեսեան. և այնպէս լուսածագէ'ի համօրէն բնակիչս երկնաւոր հայրենեաց, զի լուսափայլեսցեն և ինքեանք, իբրև լոյս լուսաւորեալ յաստուածեղէն լուսոյ, որ է լուսահրաշ'ի վերք քան զամենայն պայծառութիւն մերումն արեգական և քան զփայլումն աստեղաց առհասարակ: Միացեալք ընդ անմահ աստուածութեան, որով և անմահացեալք և անապականացեալք ըստ խոստման տեառն և փրկչի. Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ, զի ուր եմն եմ, և նոքա ընդ իս լցեն, զի տեսանիցեն զփառս իմ. և զի ամենեքին մի լցեն, որպէս դու Հայր յիս, և ես 'ի քեզ և նոքա 'ի մեզ լցեն մի:

ԳԼՈՒԽ Ը.

Դարձեալ վասն արքայութեան.

Արքայութիւն երկնից՝ արքայութիւն երանաւէտ, թագաւորութիւն անմահ և անվախճան. զոր ոչ ինչ ժամանակ փոխանակէ 'ի յաւիտեան: Ուր անընդհատ տիւ անդիշեր և անամանակ: Ուր զօրական յաղթող յեռ վաստակոց վարձատրի անպատում պարգևօք, 'ի պատուականն ընկալեալ 'ի գլուխ զպսակ յաւերժական:

Իցէ թէ յեռանեալս 'ի ծառայս Քրիստոսի՝ թողութիւն առեալ մեղացս բեռանց, հրաման առնուի յաստուածային մարդասիրութենէ 'ի բաց դնել զմարմնոյս ծանրութիւն, առ 'ի անցանել ինձ հանդչել 'ի յաւիտենից ուրախութիւն քաղաքացեաց իւրոց, դասակից լինել սրբափայլ հանդիսի վերնոց. մերձ կալ փառաց հաստչին ընդ

հոգւոցն երջանկաց. նկատել զյանդիմանակաց զերեսս Աստուծոյ։ Այնուհետև ոչ երկիւղ մահու յիս մերձենայր. այլ՝ աներկեան ընդ յաւերժական անեղծութիւն անմահութեանն բերկրէի. և ընդ ամենագէտն միացեալ՝ զամենայն կուրութիւն տգիտութեան 'ի բաց փարատէի. զերկրաւորս ամենայն յոչ ինչ գրէի, յայս արտասուաց հովիտս և նայել անգամ կամ յիշել այլ ևս ոչ արժան համարէի. ուր կեանք աղցաւոր, կեանք ապականացու, կեանք լի ամենայն դառնութեամբ, կեանք խշխեցող չարաց և սպասահարկու սանդարամետականաց։

Զոր հիւթք փքացուցանեն, ցաւք նիհարացուցանեն, ջերմութիւնք ցամաքեցուցանեն, օդք թուլացուցանեն, կերակուրք ուռուցանեն, պահք հիւծեցուցանեն, ծաղր մեղկացուցանէ, արամութիւն հաշեցուցանէ, հոգ նեղէ, անհոգութիւն բթէ. մեծութիւն հպարտացուցանէ, աղքատութիւն լքուցանէ. երիտասարդութիւն վերացուցանէ, ծերութիւն կորացուցանէ.

հիւանդութիւն բեկանէ, արտմութիւն ջնջէ. բանասարկու դարանակալ լինի, աշխարհ քծնի, մարմին խայտայ, հոգին կուրանայ. մարդն ողջոյն վեր 'ի վայր լինի: Եւ այսքանեաց և այսպիսեաց չարեաց մահ գազանացեալ բարկութեամբ 'ի վերայ հասանէ, և անոտի բերկրութեանց այնպէս վախճանածէ 'ի վերայ, զի ուր դադարեն 'ի գոլոյ՝ և ոչ խակ ընդ եղեալս համարին:

ԳԼՈՒԽ Թ.

Աստուածային միխիթարութիւնք յետ բախծութեանց ոգւոյ ազատորի.

ԱՅԼ զոր գովութիւնս, կամ զոր գոհութիւնս քեզ հատուցանել բաւականք լցեմք, Աստուած մեր, որ զմեզ և 'ի մէջ այսչափ և այսքան թըշուառութեանց աղցաւոր կենացս ոչ դանդաղիս 'ի միխիթարելոյ սքանչելի այցելութեամբ շնորհի քո: Ահաւասիկ զիս զհէգս զբազմապատիկ տխրու-

թեամբ վարակեալ, ուր 'ի կատարածէ
զանգիտեմ կենացս. ուր զմեզս իմ ա-
ծեմ զմոռաւ, ուր 'ի դատապտանաց
քոց զարհուրիմ, ուր զժամ մահուանս
խոկամ, ուր 'ի տանջանաց տարտարոսին
զընդամ, ուր զգործս իմ անգիտանամ,
որք անվրէպ ճշդութեամբ և զինուութ-
կշռեսցին 'ի քէն, ուր խոպառ տգիտա-
նամ թէ յորպիսի՞ վախճան ունիմ կընդ-
քեալ զնոսա. ուր զայս ամենայն և զայլ
ինչ բազում 'ի սրտի իմում որոճամ
ես ինձէն, մերձ ես 'ի մխիթարել ընդ-
աբոյս մարդասիրութեամբ տէր Աստուած: Եւ 'ի մէջ այսց գանգատանաց, և ազիողորմ լալեացս, և 'ի խորոց սրտէ հառաչանացս, 'ի վերս ամբառնաս զտրտում և զծանրաթախիծ միտս վերագոյն քան զբարձրաբերձ դագաթս լերանց՝ մինչև 'ի բուրաստանս խնկենեաց, և հանդուցանես զիս 'ի տեղի արօտոյ՝ յանդիման վտակաց ջուրց քաղցրութեան. ուր պատրաստ առնես առաջի իմ սեղան բարեբանց ամենայն պատրաստութեամբ, 'ի սփոփել զիսոնչ ոգիս, և ուրախ առնել զսիրտ

իմ՝ տրամադին. մինչև զօրացեալ 'ի փափկութեանց անտի, և 'ի մոռացօնս արկեալ զբազմութիւն թշուառութեց իմոց, և ամբարձեալ 'ի վեր քան զերկրիս բարձրութիւն՝ հանդչիմ 'ի քեզ, որ եսդ Ճշմարիտ խաղաղութիւն:

ԳԼՈՒԽ Ժ.

Քաղցրութիւն սիրոյն Աստուծոյ.

Սիրեմ զքեզ Աստուած իմ, սիրել սիրեմ, և ես քան զիս սիրել կամիմ: Տուր ինձ տեր Աստուած իմ, գեղեցիկդ տեսանելով քան զորդիս մարդկան՝ տենչալ առ քեզ, և սիրել զքեզ՝ որչափ և կամիմ, և որչափ պարտիմ: Անչափ ես, և յանչափս ես սիրելի. առաւելապէս առ 'ի մէնջ, զորս այսչափ սիրեցեր, և այսպէս փրկեցեր. որոց վասն այսքանիս և այսպիսիս արարեր:

Ո՛վ տէր մշտաբորբոք և անշինջանելի, քաղցր և բարերար տէր Յիսուս Քրիս-

տոս, Աստուած իմ սէր. բորբոքեա զիս ողջոյն՝ հրով քով, սիրով քով, քաղցրութեամբ քով, անուշութեամբ քով, ցանկութեամբ քով, տարփանօք քով, ուրախութեամբ և խրախութիւն քով, մարգասիրութեամբ և խանդակաթութեամբ քով, փափկութեամբ և տենչանօք քո, որ է սուրբ և բարի, մաքուր և անախտ: Որպէս զի առ ցեալ բոլորովին քաղցրութեամբ սիրոյ քո, և բովանդակ բոցով աստուածային սիրոյդ փայլակնացեալ՝ սիրեցից զքեզ ամենանուշակ և ամենագեղ տէր իմ յամենայն սրտէ իմմէ, յամենայն անձնէ իմմէ, յամենայն զօրութենէ իմմէ, և յամենայն մտաց իմոց, հանդերձ սաստիկ զղջութեամբ սրտի, և աղբերահոս արտասուօք, հանդերձ բազում պատկառանօք և դողութեամբ. ունելով զքեզ 'ի սրտի և 'ի բերանի, և առաջի աչաց իմոց յամենայն ժամ և ամենայն ուրեք. մինչ զի և ոչ մի տեղի յիս գտանիցի օտար սիրոյ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս խորհրդոյ փրկագործութեան, և հաղորդութեան.

Գեղեցիկդ և ամենագեղեցիկ փըրկիչ, ապաչեմ զքեզ վասն այնր նուիրական հեղման պատուական արեանդ քո՝ որով փրկանաւորեցաք, տուր ինձ զեղջ սրտի և աղբիւր արտասուաց, առաւել 'ի կալ խմեալ յաղօթս և 'ի մատուցանել քեզ աղերս. 'ի նուագել խմեալ սաղմոսերգութիւնս 'ի փառս քո. 'ի յիշել խմեալ կամ 'ի բարբառել զխորհուրդ փրկագործութեան մերոյ, որ է յայտապատում դատաստան ողորմութեան քո. 'ի կալ խմեալ՝ թէպէտև անարժանութեամբ՝ առաջի սրբոյ սեղանոյ, փափաքելով մատուցանել քեզ զհրաշափառ և զերկնային խորհուրդ պատարագի՝ զարժանին ամենայն պատկառանաց և ջերմագին երանգեան. զոր դու տէր Աստուած իմ

անարատ քահանայդ սահմանեցեր, և
եռուր հրաման մատուցանել 'ի յիշա-
տակ սիրոյ քո, մահուանդ ասեմ և չար-
չարանաց, վասն մերոյ փրկութեան, և
'ի դեղ հանապազորդեան տկարութեան
մերոյ:

Հաստատեացի սիրտ իմ յայսչափ
խորհրդոց միջի՝ քաղցրութեամբ ա-
ռաջնիկայութեան քո, իմասցի զանձն
իւր մերձ լինել քեզ, և ցնծասցէ յան-
դիման քո՝ հուրդ մշտալոյս, սէրդ մըշ-
տաբորբոք, քաղցր և բարերար տէր
Յիսուս Քրիստոս, լոյս յաւիտենա-
կան և աննուազելի, հաց կենաց՝ որ
հաստատես զսիրտ մեր, և ես անծա-
խելի. հանապազօր Ճաշակիս, և հա-
նապազ ամբողջ կաս մնաս: Փայլա-
տակեա յանձն իմ, վառեա զիս, լու-
սաւորեա և սրբեա զամանդ քո, դա-
տարկացո 'ի չարութենէ, լցո շնորհօք,
և պահեա լիուլի. որպէս զի 'ի փրկու-
թիւն անձին իմոյ Ճաշակեցից զկերա-
կուր մարմնոյ քո. և զի Ճաշակելով
զքեզ՝ կեցից քեզ և վասն քո. ժամանե-
ցից առ քեզ, և հանդեայց 'ի քեզ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Հոգեզուարձ խնդրութիւն.

Ո՞վ քաղցրութիւն սիրոյ, և սէր քաղցրութե՛ն, ճաշակեսցէ զքեզ սիրտ իմ, և ազնիւ գինեաւ սիրոյ քո լցցի անձն իմ, և բոլխեսցեն միտք իմ զբան բարի: Ատուած իմ սէր, մեղր անոյշ, ճիւնափայլ կաթն, կերակուր և խրախութիւն, տուր ինձ աճել 'ի քեզ. որպէս զի մարթացայց ճաշակել զքեզ կիրթ և առողջ քմօք: Դու ես կեանք իմ, որով կեամ. յոյս՝ յոր յենում պանծանօք, և ցանկամ ստանալ: Դու կալ ինձ զսիրտ իմ, կառավարեա ըզկամն իմ, ուղղեա զմիտս իմ, վերուղղեա զսէր իմ, 'ի վեր առ զոգիս, և 'ի վերին ուղիս ձգեա զբերան հոգւոյս պասքելոյ առ քեզ:

Լռեսցեն, աղաչեմ, յոյզք մարմնոյ. լռեսցեն երևոյթք հողոյ և ջրոյ, օդոյ և

եթերաց։ Լուսացեն երաշք, և երևու-
թական յայտնութիւնք. ամենայն լե-
զու, ամենայն նշանակ, և ամենայն ինչ
անցողական։ Լուսացէ առաջի քո և հո-
գիս գլխովին, և զանց արասցէ զիւրև,
ոչ ևս խորհելով զանձն իւր, այլ զքեզ
միայն Աստուած իմ. զի դու ես իսկա-
պէս բովանդակ յոյս իմ և ապաւէն
իմ։ Վասն զի 'ի քեզ է յԱստուածդ և
'ի տէրդ մեր 'ի Յիսուս Քրիստոս՝ յա-
մենաքաղցրդ, յամենաբարիդ և յամե-
նագութդ, միոյ միոյ 'ի մէնջ և մասն և
բաժին և մարմին և արիւն։ Արդ ուր
թագաւորէ բաժին իմ, անդ հաւատամ
և ես թագաւորել։ Ուր արիւն իմ տի-
րէ, անդ և ես վստահանամ տիրել։
Ուր մարմին իմ փառաւորի, անդ և զիս
գիտեմ փառաւորելի։ Թէպէտ և մե-
ղաւոր եցեմ, սակայն ընդ այս հաղոր-
դութիւն չնորհի ոչ թերեհաւատեմ։
Եւ եթէ մեղք իմ արգելուն, գոյացու-
թիւն իմ պահանջէ։ Եւ եթէ յանցանք
անձինս զիս 'ի դուրս փակեն, ընու-
թենակցութիւնն ոչ արտաքսէ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Մարդեղութիւն քանիւն խարիսխ յուսոյ մերոյ.

Զի ոչ եթէ այնպէս թշնամի գտանի տէր, մինչև չսիրել զմարմին իւր, զանդամս իւր, և զաղիս իւր: Ապաքէն մարթ էր ինձ յուսահատիլ առ բազմութեան մեղաց և ախտից իմոց, յանցաւորութեանց և զանցառութեանց անբաւից, զոր արարի, և զոր առնեմ զօրհանապազ անդադար՝ սրտիւ, բերանով, և գործով, և ամենայն մեղօք և յեղանակօք՝ զոր մարթ է մեղանչել մարդկեղէնն տկարութեան. եթէ ոչ բանդ քո՝ Աստուած իմ, մարմին լինէր, և բնակէր 'ի մեզ:

Այլ այժմ ոչ ևս է ինձ մարթ յուսահատել, վասն զի հնազանդ լեալ նորա քեզ մահու չափ և մահու խաչի, եբարձ զձեռագիր մեղաց մերոց, և

բևեռեալ զայն ընդ խաչափայտին՝ 'ի խաչ եհան զմեղս և զմահ։ Արդ նովաւ յապահովեալ ոգի առնում՝, որ նախ ընդ աջմէ քումմէ, և բարեխօս իսկ է վասն մեր։ Ի նա ապաստանեալ՝ ցանկամ ժամանն լինել առ քեզ. որով արդէն իսկ յարեաք և կենդանացաք, արդէն իսկ յերկինս համբարձաք, և նըստաք յերկնաւորս։ Քեզ գովութիւն, քեզ փառք, քեզ պատիւ, քեզ գոհութիւն։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Քաղցր յիշատակ Աստուծոյ.

Մարդասէր տէր, որ այսպէս սիրեցեր զմեզ և փրկեցեր, այսպէս կենդանացուցեր և բարձրացուցեր։ Քաղցրագութ տէր, իբրև զի քաղցր է յիշատակ քո։ Որչափ առաւել խորհիմ ըզքէն, այնչափ ևս քան զևս քաղցր ես ինձ և սիրելի։ Վասն այսորիկ ուրախ առնեն զիս յոյժ բարութիւնք քո՝ լուկ

մոաց հայեցիւք, և անուշակ բաղձանօք բարեգուութ սիրոյդ, 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ, ըստ իմումս փանաքի տեսութեան: Առ այժմ՝ ցորչափ ներքոյ դնիմ տկար այս անդամոցս, անդադար փափաքեմ 'ի ցանկալ և 'ի խորհրդածել զսիրելութիւնքո և զդեղեցկութիւն. զի նեաիւք սիրոյ քո խոցեալ եմ. քոյդ տենչանօք մեծապէս խորովիմ. առ քեզ հասանել փափաքեմ, զքեզ տեսանել ցանկամ: Վասն այսորիկ 'ի պահու իմում կացից, և անքուն աչօք՝ սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից և մտօք. և յամենայն զօրութենէ իմմէ գովաբանեցից զստեղծիչդ իմ և զնորաստեղծիչ: Թափ անցեալ մտից յերկինս մըտօք, և տենչանօք ընդ քեզ եղէց. զի յառաջիկայս ողորմ վիճակի մարմնով ևեթ գտայց. այլ մտածութեամբ և անյաղ փափաքմամբ և ամենայն տենչանօք իմովք ընդ քեզ եղէց հանապազ. որպէս զի անդ լիցի սիրտ իմ, ուր դու ես գանձ իմ ցանկալի, անհամեմատ, և մեծապէս սիրելի:

Այլ աւասիկ Աստուած իմ բազմապութիւն և բազումողորմ, ուր կամիմս խորհրդածել զքո անչափ բարութեան և բարեգթութեան զփառս, անբաւական գտանի սիրտ իմ. վասն զի անցանէ զամենայն հասողութեամբ մարդկեղէն մտաց վայելչութիւն քո, գեղեցկութիւն քո, զօրութիւն քո, փառք քո, մեծագործութիւն քո, մեծվայելչութիւն քո, և սէր քո։ Զոր օրինակ անքննին և անհաս է ճառագայթ փառաց քոց, սոյնպէս և անճառելի մարդասիրութիւն յաւիտենական սիրոյ քո. որով զորս յոչնչէ արարեր, վերածես յորդեգրութիւն, և ընդ քեզ զոգիս։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Լոգ կրելոյ զևեղոբիւրևս վասն Քրիստոսի.

Քեզ ասեմ անձն իմ, եթէ զօր ամենայն առաջի կայր քեզ զամենայն չարչարանս յանձին բերել, եթէ զեհենոյ գլխովին տանել ընդ ժամանակս ձիգս, որպէս զի մարթասցուք տեսանել զՔրիստոս 'ի փառս իւր, և դասակից լինել սրբոց նորա, ոչ ապաքէն արժան էր կրել զամենայն դժնդակս, առ 'ի հաղորդս լինել այնպիսում բարութեան և այնպիսում փառաց: Եւ արդ թող դարանեսցին դեք, թող լաբեսցեն զփորձութիւնս իւրեանց. թող պահք ճնշեսցեն զմարմինն, հանգերձք նեղեսցեն, աշխատութիւնք ճգնեսցեն, տքնութիւնք ցամաքեցուսցեն: Թող բողոքեսցէ այս ոք զինէն, անհանգիստ առնիցէ այս ոք կամ այն. ցուրան կը-

քեսցէ, խիղճմտաց քրիստնչեսցէ, տօնի տոչորեսցէ. գլուխ ցաւեսցի, կուրծք այրեսցին, ստամոքս ճմլեսցի, դէմք դեղնեսցին, տկարասցի մարմինն ողջոյն. պակասեսցին'ի ցաւոց ամենայն կեանք իմ, և ամք իմ յոգւոց եւանելոյ. մացէ ցեց յոսկերս իմ, և մեղք'ի ներքոյ իմ տարածեսցին. որպէս զի հանգեայց յաւուր նեղութեան, և'ի վեր ելից առ ժողովուրդ՝ որ շուրջ եղիցի զմեօք:

Վասն զի, բաբէ որպիսի՛ ինչ լինիցին փառք սրբոց. քանի՛ մեծ ուրախութիւն սրբոց, յորժամ երեսք իւրաքանչիւր փայլեսցեն որպէս զարեգակն. յորժամ զանազանեալ կարգօք՝ սկսանիցի տէր'ի համար բերել զժողովուրդ իւր յարքայութեան հօր իւրոյ. և հատուսցէ զնոստացեալ վարձս ըստ արդեանց և ըստ գործոց իւրաքանչիւր. փոխանակ երկրաւորաց զերկնաւորս, փոխան ժամանակեայց զյաւերժականս, ընդ փոքունց զմեծամեծս: Արդարեւ լուսն երանութեան եղիցի, յորժամ տէրն առեալ ածիցէ զսուրբս իւր'ի տեսութիւն հայ-

ական փառաց, և տացէ նստել յերկնաւորս. զի եղեցի Աստուած ամենայն յամենայնի,

ԳԼՈՒԽ ԺԶ.

Զիարդ լինի առաւելապ զարքայութիւն

Ո՞վ երջանիկ զուարճութիւն, և զբուարճալի երջանկութիւն, տեսանել զսուրբս, ընդ սուրբս լինել, և սուրբ լինել: Զ Աստուած տեսանել, և ունել զԱստուած յաւիտեան և ևս: Զայսոսիկ զմտաւ ածցուք ուշի ուշով. այսոցիկ փափաքեսցուք ամենայն փափաքանօք, զի առ նոսին մարթասցուք փոյթ հասանել: Եթէ խնդրեցես, զիարդ մարթ է այդմ լինել, կամ որովք արդեամբք, և որովք օժանդակութեամբք, լուր և 'ի միտ առ: Բանդ այդ եղեալ կայ 'ի ձեռս նորա, որ ճգնի. վասն զի արքայութիւն երկնից բռնաբարի:

Արքայութիւն երկնից, ո՛վ մարդ,

ոչ զայլ պահանջէ գին, բայց միայն զանձն քո. այնքանոյ է, որքանոյ էս դու. տուր զքեզ, և ստացիս զայն: Զի խառվիս ընդ գինդ. Քրիստոս զանձն իւր մատնեաց, զի ստացի զքեզ իբրև արքայութիւն հօր իւրում: Այնպէս տուր և դու զանձն քո, որպէս թէ ի ցեռ արքայութիւն նորա. և մի թագաւորեսցեն մեղք 'ի մահկանացու մարմնի դ քո, այլ՝ հոգիդ շահեկանութեամբ կենայց:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Վիճակ արքայութեան.

Ո՛վ հոգի իմ, դարձցուք անդրէն 'ի քաղաքն երկնաւոր, յոր գրեցաքն, և քաղաքացիք եղաք սահմանեալ: Զի իբրև քաղաքակիցք սրբոց, և ընտանիք Աստուծոյ, և իբրև ժառանգք Աստուծոյ՝ և ժառանգակիցք Քրիստոսի, խորհրդածեսցուք զգերապանծ բարե-

վայելչութիւն քաղաքիս մերոյ, որչափ և հնար է ածել զմտաւ։ Օն առեալ զմարգարէին երկրորդեսցուք. Իբրև զի փառաւորեալ բանք ասացան զքէն քաղաքդ Աստուծոյ. իբրև ուրախ եղե-լոց առ հասարակ բնակութիւն է 'ի քեզ. վասն զի հիմունք արկեալ են քեզ ցնծութեամբ ամենայն տիեզե-րաց։ Զնք 'ի քեզ ծերութիւն, և ոչ աղէաք ծերութեան։ Զնք 'ի քեզ խե-ղանդամ, ոչ կաղ, ոչ սապատողն, ոչ ոգեղաղէմ. ուր ամենեքին հասանեն յայր կատարեալ՝ 'ի չափ հասակի գե-ղոյն Քրիստոսի։

Զինչ այլ երանաւէտ քան զայն կեանս, ուր չնք չքաւորութեան երկիւղ, ոչ հիւանդութեան տկարու-թիւն. ոչ ոք վնասի, ոչ ոք բարկանայ, ոչ ոք նախանձի. ոչ ինչ ցանկութիւն բորբոքի։ Զնք ինչ ցանկութիւն կերակրոյ. ոչ փառասիրութիւն բախէ, և ոչ իշխանասիրութիւն։ Զնք և ոչ մի երկիւղ յերեսաց բանսարկուին. ոչ ինչ դաւադրութիւնք դիւաց. հեռի է ահ գեհենոյն։ Մահ ոչ մարմնոյ, և ոչ

հոգւոյ · այլ կեանք զուարճացեալ պարգևօք անմահութեան : Ոչ լեցին անդանօր և ոչ մի չարիք, երկպառակութիւն ոչ երբէք, այլ ամենայնն միաբան · վասն զի ամենայն սրբոց լինիցի մի սիրտ : Խաղաղութիւն և խընդութիւն ունի զամենայն · ամենայն ինչ խաղաղիկ և անդորր : Մշտապայծառ լուսաւորութիւն, ոչ որ զարդիս, այլ այնչափ հրաշափայլ, որչափ և երջանկաւէտ · վասն զի ըստ գրեցելումն՝ չէն պէտք քաղաքին այնմիկ արեգական կամ լուսնի · այլ տէր ամենակալ լուսաւորեսցէ զնա, և Ճրագ նորա է դառնն : Ուրանօր սուրբք փայլեսցեն որպէս զաստեղս 'ի մշանջենաւոր յաւիտենականութիւնս, և որպէս զծագումն հաստատութեան, որք ուսուցանեն զբազումս : Վասն որոյ չիք անդ գիշեր և ոչ մի, ոչ ինչ խաւար, ոչ գումարումն ամպոց, ոչ փայլատականց և շանթից ահագնութիւնք, այլ այնպիսի եղիցի բարեխառնութիւն ամենայնի, զոր ակն ոչ եսես, և ունկն ոչ լուաս, և 'ի սիրտ մարդոյ ոչ ան-

կաւ, բայց որոց արժանի գտանին վա-
յելել 'ի նոսին. որոց անուանք գրեալ
կան 'ի գիրն կենաց։ Այլ 'ի վերս է քան
զայս ամենայն՝ դասակից լինել պա-
րուց հրեշտակաց և հրեշտակապետաց,
և ամենայն երկնային զօրաց. ակնկա-
ռոյց լինել 'ի նահապետս և 'ի մարգա-
րէս. տեսանել զառաքեալս և զսուրբս
ամենայն. տեսանել և զծնօղս մեր գըլ-
խովին։ Փառաւոր են այսոքիկ. այլ
հրաշափառագոյն է դէմ յանդիման զե-
րեսս Աստուծոյ նկատել, և զանպա-
տոգրելին զլոյս տեսանել։ Գերահրաշ
փառք եղեցին, յորժամ զԱստուած
տեսանիցեմք յինքեան. զոր լեցի մեզ
տեսանել և ունել 'ի մեզ. և տեսու-
թեան նորուն ոչ եղեցի վախճան։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Թէ չուսիմք ինչ փոխարինել Աստուծոյ բաց 'ի սիրոյ.

Հոգին Ճոխացեալ պատկերաւ Աստուծոյ, և զարդարեալ նմանութեամբ նորին, ունի յինքեան առ յԱստուծոյ այնպիսի ինչ, որով խրատի միշտ կամ ընդ Աստուծոյ կալ, կամ դառնալ առ Աստուած՝ եթէ 'ի բաց խոտորեալ իցէ իւրովք կրիւք, մանաւանդ թէ կարեօք պակասաւորութեան: Եւ ոչ միայն ունի, որով մարթի ոգի առնուլ 'ի յոյս թողութեան և գթութեան, այլ և որով համարձակեսցի իղձ լինել 'ի հարսանիս բանին. և դաշինս կռել միաբանութեան ընդ Աստուծոյ, և ընդ թագաւորին հրեշտակաց ամոլակից լինել 'ի քաղցր լուծ սիրոյն:

Զայս ամենայն առնէ սէր, եթէ հոգին 'ի ձեռն կամաց ընծայեցուսցէ

զինքն նման Աստուծոյ, որում նման է 'ի ձեռն բնութեան, սիրելով զԱստուած՝ որպէս և սիրեցաւն 'ի նմանէ։ Վասն զի մի միայն սէրն է 'ի մէջ ամենայն շարժութեանց հոգւոյ և ըմբռնմանց և յօժարութեանց, որով կարող գոհանի արարածն՝ թէպէտև ոչ զուգահաւասարութեամբ՝ փոխարինել արարչին, կամ հատուցանել ինչ տրիտուր նմին։ Ուր 'ի մէջ գայ սէր, զայլն ամենայն 'ի յօժարութեանց յինքն ժողովէ և գերէ ընդ իւրեաւ։ Սէր ինքն ինքեամբ է բաւական, ինքեամբ հաճոյանայ, և վասն ինքեան։ Նա ինքն է արդիւնք, նոյն ինքն վարձ. նոյն ինքն պատճառ, նոյն ինքն գործ կամ պտուղ, և նոյն ինքն վայելումն։ Վասն զի սիրով միանամք ընդ Աստուծոյ։

Սէրն առնէ յերկուց ոգի մի. սէրն տայ զնոյն կամիլ և զնոյն չկամիլ. սէրն տայ նախ զվարս յարդարել. երկրորդ՝ զամենայն որ կանս՝ իբրև զոչ գոյս նըկատել. և երրորդ՝ տուրբ բբօք սրտի 'ի վերնականս և 'ի նեղքսագոյնս յառիլ։ Սիրով լինի յաշխարհի նախ բարեկամ

առնել զվայելչականս. ապա և զաշ-
խարհի վայելչականն արհամարհել.
և հուսկ յետոյ նկատող լինել խորոցն
Աստուծոյ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Աստուած պահանջէ 'ի մեզ զիւր նր-
մանուէրիւն ըստ սիրոյ.

Աստուած հայր սէր է. որդին Աս-
տուծոյ սէր է 'ի սիրոյ. հոգին սուրբ
սէր է հօր և որդւոյ։ Այս սէր և սիրե-
լութիւն պահանջէ 'ի մեզ զնմանու-
թիւն ինչ, այսինքն զաստուածսիրու-
թիւն. որով խբրու մերձաւորութեամբ
աղգակցութեան զօդեացուք և միաս-
ցուք ընդ նմա։ Սէրն անգէտ գտանի
մեծութեան, և ըստ նմին անպատկառ
երևի։ Որ սիրէն՝ ինքնին համարձակու-
թեամբ մատչի առ Աստուած, և ըն-
տանեբար խօսի ընդ նմա՝ աներկիւղ
և անկասկած։ Որ ոչն սիրէ, կորուսա-

նէ զկեալ իւր։ Իսկ աստուածասէրն հանապազ վերակնէ առ Աստուած, զոր սիրէ, որում փափաքէ, զորմէ խորհի, յորում զուարճանայ, որով կերակրի, և նովին իսկ պարարի։

Այսպիսի եռանդոտն աստուածասէր՝ այնպէս երգէ, այնպէս ընթեռնու, և յամենայն 'ի գործս իւր այնպէս է նախատես և լուրջ զգաստութեամբ, որպէս այն թէ Աստուած է առ նմա՝ առաջի աչաց նորա. որպէս և էն ճշմարտապէս։ Այնպէս կայ յաղօթս, որպէս թէ ելցէ վերառեալ և յանդիման եղեալ երեսաց մեծվայելչութեան վերանատելոյ յաթոռ բարձրութեան, ուր հազարք հազարաց պաշտեն զնա, և բիւրք բիւրուց կան առաջի նորա։ Նա ինքն զհոգին՝ որում այց առնէ սիրով, զարթուցանէ 'ի թըմբրութենէ քնոյ. ազդէ և կակղէ զնա, և խոցէ զսիրտ նորա։ Զխաւարինս լուսաւոր առնէ, զփակեալսն բանայ, զպաղեալսն հրազինէ. մեղմէ և հեզացուցանէ զսիրտ դժնեայ և զայրագին և անհամբեր. հալածական առնէ զախ-

տրս. նկուն առնէ զմարմնաւոր յօժարութիւնս. մաքրազարդէ զվարս, նարոգէ և զարդարէ զոգին. խափանէ և անձէ զդիւրաստահ հասակին զթեթև շարժութիւնս և զներգործութիւնս: Զայս ամենայն առնէ սէր, յորժամ մերձ իցէ. իսկ յորժամ հեռացի, այնպէս սկսանի հոգին թուլանալ և ընդարմանալ, որպէս եթէ բարձցես ըզկրակ 'ի ներքոյ եռացեալ կաթսայի:

ԳԼՈՒԽ Ի.

Վիճակ հոգւոյ աստուածասիրի.

Մեծ ինն է սէր, որով հոգին անձամբ անձին համարձակ մերձենայ առ Աստուած, սնդապէս յարի յԱստուած, ընտանեբար հարցանէ զԱստուած, և խորհուրդ առնու 'ի նմանէ վասն ամենայն բանի: Հոգի աստուածասէր ոչ ինչ այլ կարէ խորհել կամ խօսել. քամահէ զայլ իրօք, տաղտկա-

նայ յամենայնէ։ Զոր ինչ խորհի, որ զինչ և խօսի, համ՝ տայ զսիրոյ, բուրէ զսէր. այսչափ գրաւեալ է զնա խապառ սէր Աստուծոյ։ Որ ոք կամի աստուա՝ ծածանօթ լինել՝ աստուածասէր լիցի։ Որ ոչն սիրէ, 'ի զուր բերի յընթեռ՝ նուլ, 'ի մտածել, 'ի քարոզել, և յա՝ ղօթել։ Աստուածսիրութիւնն ծնանի զհոգեսիրութիւն, և տայ հոգւոյն միտ դնել ինքեան։ Սիրէ Աստուած, զի սի՝ րեսցի. 'ի սիրել անդ իւրում՝ ոչ այլ ինչ խնդրէ, բայց սիրել, գիտելով՝ թէ սիրով երանելի լինին սիրելիք նորա։

Հոգի աստուածասէր հրաժեշտ տայ յամենայն յօժարութեանց իւրոց, և մի՝ այն անձնատուր լինի 'ի սէր. որպէս զի մարթասցի փոխարէնս առնել սի՝ րոյ՝ սիրահատոյց լինելով։ Եւ յորժամ աներկեան տացէ զանձն բոլորովին 'ի սէր, քանիսն են մշտնջենաբուղխ հո՝ սանք աղբերն սիրոյ։ Ոչ հաւասարա՝ զօր զուգընթաց լինին յայսմ վայրի սէրն և սիրողն, Աստուած և հոգի աս՝ տուածասէր, արարիչն և արարածն։ Բայց թէ ոք բոլորովին է անձնասէր,

ոչ ինչ է գլխովին. զի բոլորն պակաս է։ Մի երկիցէ հոգի՝ որ սիրէ. զարհուրեսցի՝ որ ոչն սիրէ։

Հոգի աստուածասէր բերի տենչանօք, ձգի փափաքանօք. անտես առնէ զարդիւնս. կափուցանէ զաչս առ մեծութիւնն Աստուծոյ, և բանայ առ գրգանս նորա, եղեալ զանձն 'ի գիրկս կենաստուին, և համարձակագոյնս վարելով ընդ նմա։ Սիրով հոգին մերկանայ և մերկնի 'ի մարմնեղէն զգայութեանց. զի ոչ զգայ անձին, որ յանձին զգայ զԱստուած։ Եւ այս լինի, յորժամ միտքն զմայլեալ յանճառ քաղցրութենէն Աստուծոյ՝ իւրք օրինակաւ կապտէ զինքն յինքենէ, մանաւանդ թէ յափշտակի և 'ի դուրս կորզի յիւրմէ, որպէս զի յԱստուած վայելեսցէ զիսպառ զմայլումն։ Զնք ինչ այնպէս զմայլելի, եթէ չէր և այնչափ հակիրճ։

Սէրն տայ զառ Աստուած ընտանութիւն. ընտանութիւնն զհամարձակութիւն. համարձակութիւնն զհամեղ ճաշակ. համեղաճաշակն զքաղց։ Հո-

գին՝ որ հարեալ է 'ի սէր Աստուծոյ, չկարէ այլ ինչ զմտաւ ածել, այլում իմիք բաղձալ, այլ անդադար յոգւոց ելանէ՝ ասելով։ Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած իմ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Մարդասիրութիւնն Աստուծոյ.

Աստուած սիրով եկն առ մարդիկ, եկն 'ի մարդիկ, մարդացաւ գլխովին։ Սիրով անտեսանելին Աստուած եղև 'ի նմանութիւն ծառայից իւրոց։ Սիրով վերաւորեցաւ վասն մերոց յանցանաց։ Անքոյթ և ամուր հանգստարան է տկարաց և մեղաւորաց՝ 'ի վերս փրկչին։ Անկասկած բնականամ անդանօր. բացերև տեսանի սիրտ նորա ընդ վերս նորա։ Որ ինչ ինձէն ինձ պակասէ, առնում ինձ 'ի սրտէ անսի տեսուն իմոյ։ Քանզի յորդահոսան խա-

ղան գուրթք մարդասիրին, և ոչ պակաս-
սեն ծակտիք՝ ընդ որ խաղայցեն. ընդ
ծակս մարմնոյն՝ բացեալ գտանին ինձ
գաղտնիք սրտին։ Բացեալ կայ մեծ
խորհուրդ գթասիրութեան, բացեալ
կան գուրթք ողորմութեանց Աստուծոյ
մերոյ, որովք այց արար մեզ ծագումն
'ի բարձանց։

Վերք Քրիստոսի Յիսուսի լի են գը-
թութեամբ, լի մարդասիրութեամբ,
լի քաղցրութեամբ և սիրով։ Ծակե-
ցին զձեռս և զոտս նորա, և գեղար-
դեամբ խոցեցին զկողս նորա։ Ընդ այս
պատառուածս ճահ է ինձ ճաշակել,
թէ քանի՞ քաղցր է տէր Աստուած իմ.
վասն զի ճշմարտապէս քաղցր է և հեզ
և բազումողորմ առ ամենեսեան, որք
կարդան առ նա ճշմարտութեամբ, առ
ամենեսեան՝ ոյք խնդրեն զնա, և առա-
ւելապէս սիրեն զնա։ Բազմատատ փերբ-
կութիւն տուաւ մեզ վերոք Քրիստո-
սի փրկչին մերոյ, յորդառատ բազմու-
թիւն քաղցրութեան, լիութիւն շնոր-
հաց, և կատարումն առաքինութեանց։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յիշատակ վիրաց փրկչին.

Ընդ բախել անձին իմոյ յանարժան խորհրդոց ուսուցեալ՝ դիմեմ 'ի վերս Քրիստոսի։ Ընդ նուաճել մարմնոյս ըզհոգիս՝ յիշատակաւ վիրաց տեառն իմոյ 'ի վեր յառնեմ։ Ընդ դարանակալ լինել ինձ բանսարկուին, անկանիմ 'ի ծերպս կողին'ի բնակարան գթոյ տեառն իմոյ, և 'ի բաց հեռանայ թշնամին յինէն։ Եթէ եռացումն ցանկութեան խլրտէ զանդամս իմ, յիշատակաւ խոցուածոց տեառն իմոյ որդւոյն Աստուծոյ շնչանի։ Յամենայն ընդդիմամարտութիւնս ոչ գոլ դեղ այնպէս ազդու՝ որպէս զվերս Քրիստոսի։ Ի սոյնս ննջեմ անեղկեան, և հանդչիմ անսասան։

Քրիստոս մեռաւ վասն մեր։ Զկնք ինչ 'ի մահու այնպէս դառն, որ ոչ

բուժեցի մահուամբն Քրիստոսի։ Ա-
մենայն յոյս ակնկալութեան իմոյ է՝ի
մահու անդ տեառն իմոյ։ Մահ նորա
արդիւնք իմ և ապաւէն իմ, փրկու-
թիւն, և կեանք, և յարութիւն իմ։
Արդիւնք իմ՝ ողորմութիւն տեառն։
Զեմ չքաւոր յարդեանց, ցորչափ ոչ
պակասէ այն տէր ողորմութեանց։ Եւ
եթէ գթութիւնք տեառն բազում են,
բազմարդիւն ես գտանիմ։ Որչափ ա-
ռաւել կարող է նա՝ի փրկել, այնչափ
առաւել յապահովի եմ ես։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Զօրութիւնք աբանչելի վիրաց փրկչին.

Մեղայ մեղս մեծամեծս, և զբազմութիւն յանցուածոց իմոց ես ինձէն գիտեմ: Սակայն և ոչ այնպէս յուսահատ լինիմ. զի ուր առաւել եղեն յանցանք, առաւել ևս յաճախեցին շնորհք: Որ միանգամ յուսահատի վասն թողութեան մեղաց իւրոց, ուրանայ զԱստուած և զգթութիւն նորա և զողորմութիւն. մեծապէս անիրաւի առ Աստուած, որ ոք թերահաւատէ ընդ գթութիւն նորա: Իւրովանն ուրատ լինի, թէ Աստուած ունիցի զսէր և զճշմարտութիւն և զկարողութիւն. յորս հաստատեալ է ամենայն յոյս իմ. այսինքն'ի սէր որդեգրութեան, 'ի ճշմարտութեան խոստմանց, և 'ի կարողութենէ փրկութեան: Թող քրիստոնեայ

ջեսցէ՝ որչափ և կամի՝ տիտար խոր-
հուրդ իմ, ասելով. Ո՞ ես դու, և ո՞ր
այն փառք մեծամեծք. և որովք ակն ու-
նիս արդեամբք ստանալ զայն։ Եւ ես
համարձակ վստահութեամբ տաց պա-
տասխանի. գիտեմ յո՛ հաւատացեալն
եմ. զի անպատուում սիրով ընկալաւ
զիս յորդեգրութիւն. զի անսուտ է 'ի
խոստմունս, կարող 'ի կատարումն, և
իշխան է առնել՝ զոր կամի։

Անհնար է ինձ ահաբեկ լինել յերե-
ասց բաղմութեան մեղացս, եթէ մահ
տեառն իմոյ եկեսցէ 'ի միտս իմ. զի
մեղք իմ ոչ կարեն յաղթել նմա։
Բեռքն և գեղարդն գոչեն առ իս, թէ
ստուգապէս հաշտ ես ընդ Քրիստոսի.
միայն թէ ես սիրեցիս զնա։ Ղուսնկիա-
նոս եբաց ինձ զկողս Քրիստոսի գե-
ղարդեամբ, և ես մտի 'ի նեղքս, և անդ
հանդչիմ աներկեան։ Որ երկնչի, սի-
րեսցէ. վասն զի սէր 'ի բաց մերժէ
զերկիւղ։ Զեք դեղ այնպէս զօրաւոր և
ազդու ընդդէմ բորբոքման ցանկու-
թեան՝ իբրև զմահ փրկչին իմոյ։ Բաղ-
կատարած և ձեռնիբաց կայ 'ի խաչին՝

պատրաստ 'ի գրկել զմեղաւորս։ Ի մէջ բազկաց փրկչիս և կեալ և մեռանիլ կամիմ և փափաքեմ։ Անդ անկասկած նուագեցից. Բարձր առնեմ զքեզ տէր, զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ 'ի վերայ իմ։ Փրկիչն մեր խոնարհեցոյց զգլուխն 'ի մահուն, զի տացէ համբոյր սիրելեաց իւրոց։ Այն չափ համբոյր սիրոյ տամք Աստուծոյ, քանիցս և 'ի զեղջ հարկանիմք սիրով նորա։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Խորհրդածութիւն սիրոյն Քրիստոսի

Ո՛վ հոգի իմ տպաւորեալ գրոշմեալ և կնքեալ պատկերաւն Աստուծոյ, փրկանաւորեալ արեամբն Քրիստոսի, հարսնացեալ հաւատով, օժտաւորեալ հոգւով, զարդարեալ առաքինութիւնք, և դասաւորեալ ընդ հրեշտակս, սիրեա զնա՝ յորմէ այսչափ սիրեցար։ Մեր

դէր նմա, որ միտ եդ քեզ։ Խնդրեա զնդրեալն քո. սիրեա զսիրողդ քո, յորմէ սիրիս. որ կանխեաց 'ի սիրել զքեզ, և է պատճառ սիրոյ քո։ Նա ինքն է արդիւնք, նա ինքն վարձք, նա ինքն պտուղ, նա ինքն վայելք պտղոյ, և նոյն ինքն վախճան։ Լեր փոյթ ընդ փուլթոյն, պարապեալ ընդ պարապելոյն, անբիծ ընդ անբծի, սուրբ ընդ սրբոյն։ Որպիսի երևեսցիս Աստուծոյ, հարկ է զի այնպէս երևեսցի քեզ Աստուած, այն՝ որ քաղցր է և հեզ և բազումողորմ, խնդրէ զքաղցունս, զհեզս, զխոնարհս, և զողորմածս։ Սիրեա զնա, որ էհան զքեզ 'ի գբոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ։

Ընտրեա զնա քեզ 'ի բարեկամ առաւել քան զամենայն բարեկամս, որ 'ի բառնիլ ամենայնի մնայ միայն հաւատարիմ առ քեզ։ Յաւուր անդ թաղման քո, ուր ամենայն բարեկամք մեկնին 'ի քէն, նա ոչ թողուցու զքեզ. այլ պահեսցէ զքեզ յերեսաց այնոցիկ՝ որք մնանչեն յափշտակել զքեզ 'ի կերակուր, և առաջնորդեսցէ քեզ ընդ

աշխարհ անծանօթ, և տարեալ հասուցէ 'ի հրապարակս վերնոյն Սիոնի, և անդ զետեղեցուսցէ զքեզ ընդ հրեշտակս յանդիման երեսաց մեծ-վայելչութեանն իւրոյ. ուր լուիցես զհրեշտակականն զմեղեդի. Սուրբ սուրբ սուրբ, և որ 'ի կարգին: Անդ է երգ ցնծութեան, ձայն ուրախութեան և փրկութեան և գոհութեան, և ձայն օրհնութեան և գովութեան, և ալէլուք յաւերժական: Անդ է լրումն երջանկութեան, գերապանծութիւն փառաց, զեղումն ուրախութեան, և բարութիւնք ամենայն:

Ո՛վ հոգի իմ, հառաչեա եռանդագին, փափաքեա ուժգին, զի մարթասցիս հասանել 'ի քաղաք անդր վերին, զորմէ այնչափ փառաւորեալ ասացան բանք. յորում բնակութիւն է որպէս ցնծացելոց առ հասարակ: Սիրով կարող ես եկանել անդր:

Սիրողին ոչ ինչ է դժուարին, ոչ ինչ անհնարին: Հոգի ասառուածասէր ստէպ ստէպ 'ի վեր եկանէ և յածի ընտանեբար ընդ հրապարակս երկնա-

ուրն Երուսաղեմի, այլ առնելով նա-
հապետաց և մարգարէից, ողջունելով
զառաքեալս, յակՃիռս կալով ընդ դաս-
վկայից և խոստովանողաց, և դէտ ակն
ունելով 'ի պարս կուսանաց։ Երկինք
և երկիր, և ամենայն՝ որ 'ի նոսա, մի
դադարեսցեն ասել ցիս. սիրեա զտէր
Աստուած քո։

ԳԼՈՒԽ ԻԵ.

*Բաղձանք սրտից մերոց առ ծայ-
րագոյն բարին, և զօրութիւն կարաց.*

Սիրա մարդոյ ցորչափ չէ հաստա-
տեալ 'ի ցանկութեան յաւիտենական-
նութեան, ոչ երբէք կարէ հաստա-
տուն կալ. այլ քան զամենայն յեղա-
փոփոխս դիւրափոփոխ՝ 'ի միոյ 'ի միւսն
անցանէ, խնդրելով զհանգիստ՝ ուր
ոչն է։ Իսկ 'ի դիւրակործան և յանցա-
ւոր երս յայսոսիկ՝ յորս գերեալ կան
յօժարութիւնք նորա, ոչ ունի դաս-

նել զՀշմարիտն հանգիստ. վասն զի այնչափ է գերապատիւ, զի ոչ ինչ այլ բարի կարող է բաւական լինել նմա, բայց միայն ծայրագոյն բարին: Այնչափ ազատութեամբ է Հոխացեալ, զի անհնար է բռնադատել զնա առ վատթարութիւն ինչ: Սորին ազագաւ իւրաքանչիւր ումեք իւրոյին կամքն է պատճառ իւրումն դատապարտութեան կամ փրկութեան. և վասն այսորիկ ոչ ինչ այնպէս Հոխ ընծայ հնար է մատուցանել Աստուծոյ՝ որպէս զկամս բարիս: Կամք բարի զԱստուած 'ի մեզ բերէ, և տանի զմեզ առ Աստուած: Բարի կամօք սիրեմք զԱստուած, ընդունիմք զԱստուած, դիմեմք առ Աստուած, հաստատեմք առ Աստուած, և ժառանգեմք զԱստուած:

Ո՞վ կամք բարի, որով կերպարանիմք անդրէն 'ի նմանութիւն Աստուծոյ, և նման նմա եղանիմք: Այնպէս սիրելի է Աստուծոյ կամք բարի, մինչ զի ոչ կամի նա բնակել 'ի սրտի անդ՝ յորում չկայցէ կամք բարի: Կամք բարի զնա ինքն զմեծվայելչութիւն սուրբ

երրորդութիւն յինքն խոնարհէ։ Վասն զի իմաստութիւնն լուսաւորէ զնա 'ի ճանաչումն Աշմարտութեան։ Սէր հրաշինէ զնա 'ի փափաքումն բարութեան։ Հայրութիւնն պահէ և պահպանէ 'ի նմա՝ զոր ինչ ստեղծն, զի մի կորիցէ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Ճանաչումն ճշմարտութեան.

Զինչ ճանաչումն լցէ Աշմարտութեան։ Նախ՝ ճանաչել զանձն քո. և զի՝ որ ինչ պարտիս լինել, լինել ջանասցիս. և զոր արժան է ուղղել, ուղղեսցես։ Դարձեալ՝ ճանաչել և սիրել զարարիչն քո. զի այս է ամենայն բարին մարդոյ։ Արդ տես թէ որպէս անպատմելի է խնկութիւն սիրոյն Աստուծոյ, որով սիրեացն զմեզ։ Արար զմեզ յոչնչէ, և զոր ունիմքս՝ նա պարգևեաց։ Այլ քանզի առաւել սիրեցաք զտուրսն՝ քան զտուիչն, զարարածն քան

զարարիչն, անկաք յորոգայթ սատա-
նայի, և ծառայք եղաք նորա։ Այլ Աս-
տուած գթասիրեալ առաքեաց զորդի
իւր 'ի փրկել զծառայս, առաքեաց
և զսուրբ զՀոգին գրել զծառայս յոր-
դեգիրս։ Զորդին եւ 'ի գին փրկանաց.
զՀոգին սուրբ 'ի գրաւական սիրոյ. և
զինքն գլխովին պահէ 'ի ժառանգու-
թիւն որդեգրութեան։

Ահա այսպէս Աստուած մարդասէր
և բարեգութ առ փափաքանաց կամ
առ սիրոյ մարդոյն՝ ոչ միայն զիւրան,
այլ և զինքն գլխովին ծախեաց, զի
վերստին ստասցի զմարդն, ոչ այնչափ
ինքեան՝ քան որչափ նմին իսկ մար-
դոյ։ Առ 'ի կարող լինելոյ մարդկան
ծնանիլ յԱստուծոյ, նախ ինքն Աս-
տուած ծնաւ 'ի մարդոյ։ Ո՞ է այնչափ
խստասիրտ, զոր ոչ կակղեցէ սէր Աս-
տուծոյ այսպէս կանխեալ առ մարդս.
սէր ասեմ այնչափ ստատիկ, զի ար-
ժան համարեցաւ մարդ լինել յաղագս
մարդոյն։ Ո՞ կարէ այսուհետև ատել
զմարդ, զորոյ զբնութիւն և զնմանու-
թիւն տեսանէ 'ի մարդկութեանն Աս-

ուծոյ։ Ապաքէն որ զնա ասէայ, զԱստուած ասէայ. և այնպէս կորուսանէ՝ զոր միանգամ գործէ։

Քանզի և Աստուած վասն մարդոյ մարդացաւ, զի արարիչն լինիցի և ազատիչ, և զի 'ի ձեռն իւր ազատեսցի մարդն։ Եւ որպէս զի ընտանեգոյնս սիրեսցի Աստուած 'ի մարդոյ, 'ի նմանութիւն մարդոյ յայտնեցաւ. միանգամայն զի և կրկին տեսարան մարդոյս նովաւ երանասցի և զմայլեսցի. ակն սրտի տեսութեամբ աստուածութեան նորա, և ակն մարմնոյ տեսութեամբ մարմնոյ նորա. զի թէ 'ի մտանել, և եթէ յելանել՝ նովաւ Ճարակ գտցէ բնութիւնս մարդկային, որ նովաւ հաստատեցաւ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Ներգործութիւնք Հոգւոյն սրբոյ.

Վասն զի փրկիչ մեր ծնաւ մեզ, խաչեցաւ և մեռաւ վասն մեր. զի մահուամբ իւրով աւերեսցէ զմահ մեր: Եւ քանզի ողկոյզ մարմնոյն արկեալ էր 'ի հնձան խաչին, ուր և ճմլեալ՝ սկսեալ էր հոսել քաղցու աստուածութեանն, Հոգին սուրբ առաքեցաւ պատրաստել զամենայն սրտից, և դնել զգինի նոր 'ի տիկս նորս: Նախ՝ զի սիրտք սրբեսցին. զի մի արկեալն պղծեսցի. և դարձեալ՝ զի և կապեսցին, զի մի արկեալն կորուսանիցի: Սրբեսցին ասեմ յուրախութենէ անօրէնութեան, և կապեսցին ընդդէմ ուրախութեան ունայնութեան: Վասն զի անմարթ էր գալ բարւոյն՝ մինչ չև մեկնեալ էր չարին: Ուրախութիւն անօրէնութեան պղծէ, և ուրախութիւն

ունայնութեան 'ի դուրս զեղու. ուրախութիւն անօրէնութեան աղտեղէ զամանն, և ուրախութիւն ունայնութե ծակոտէ զնոյն։ Ուրախութիւն անօրէնութեան է մեղսասիրութիւն. և ուրախութիւն ունայնութեան՝ սէր անցաւորաց։ Հա՛պա արտաքսեա զչարն, զի մարթասցիս 'ի ներքս ընդունել ըզբարին։ Թափեա զդառնութիւն, զի մարթասցիս ընուլ անուշութեամբ։ Հոգին սուրբ խնդութիւն է և սէր։ Ի բաց հան զհոգի դիւական և զհոգի աշխարհիս այսորիկ, որպէս զի առնուցուս զհոգին Աստուծոյ։ Ոգին դիւական գործէ զխնդութիւն անօրէնութեան, և հոգի աշխարհիս զխնդութիւն ունայնութեան։ Ահա այս խնդութիւք են չարք. վասն զի մին յինքեան բերէ զյանցանս, և միւսն զառիթ յանցանաց։ Արդ գալով գայցէ հոգին սուրբ, յորժամ 'ի բաց հանցին ոգիք չարութեան. և մտցէ 'ի տաղաւար սրտի, և ներդործեսցէ զխնդութիւն բարի և ըզսէր բարի. որով վանեալ լինի սէր աշխարհի և սէր մեղաց։ Սէր աշխարհի

հրապուրէ և խաբէ. սէր մեղաց պըղծէ և 'ի մահ տանի: Սէր Աստուծոյ լուսաւորէ զմիտս, սրբէ զխիղճ մտաց, ուրախ առնէ զհոգի, և ցուցանէ զԱստուած:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Աստուածասիրութիւն.

Աստուածասէրն միշտ զայն խորհի, երբ ելցէ՝ զի առ Աստուած հասանիցէ. երբ ելցէ՝ զի զաշխարհ թողուցու. երբ ելցէ՝ զի զերծանիցի յապականութենէ մարմնոյ, որպէս զի մոցէ 'ի ճշմարիտն խաղաղութիւն. հանապազ սիրտ նորա և փափաքումն 'ի վերինս անդր է: Թէպէտ և նստիցի, թէպէտ և գնայցէ, թէպէտ և հանգիցէ, և յամենայնի զինչ և առնիցէ, սիրտ նորա ոչ մեկնի յԱստուծոյ: Զամենեսեան յորդորէ սէրն Աստուծոյ, ամենեցուն գովելի ընծայեցուցանէ զսէր Աստուծոյ. և

թէ քանի՞ քաղցր է սէր Աստուծոյ, և քանի՞ չար և քանի՞ դառն սէր աշխարխիս, սրտիւ և բերանով և գործով յայտնի ցուցանէ ամենեցուն։

Ծիծաղն ընդ փառս աշխարհի՝ յանդիմանէ զհոգս՝ և ցուցանէ թէ որքան է յիմարութիւն ապաստան լինել յիրս անցաւորս։ Զարմանայ ընդ կուրութիւն մարդկան, որ սիրեն զնոսին։ Զարմանայ և թէ որպէս ոչ թողուն ամենեքին զայս ամենայն անցաւոր և զդիւրաասահ իրսդ։ Ամենեցուն անոյշ կարծէ զայն՝ որ ինքեան համեղանայ՝ ամենեցուն հաճոյական՝ զոր ինքն սիրէ՝ և ամենեցուն խակ յայտնի, զոր ինքն ճանաչէ։ Ստէպ նկատող լինի Աստուծոյ իւրոյ, և 'ի նորուն մտածութեան իբրև 'ի տեսութեան՝ անուշակ սիրոփանօք կազդուրի՝ և այնչափ առաւել զմայլմամբ, որչափ առաւել յաճախութեամբ։ Վասն զի քաղցր է 'ի խորհիլ, որ միշտ անոյշն է 'ի սիրել և 'ի գովել։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Խաղաղութիւն սրտի յԱստուած՝ աստուածամերձութեամբ.

Ճշմարտապէս այս է Ճշմարիտ հանգիստ սրտի, յորժամ բոլորովին 'ի սէրն Աստուծոյ բևեռի տենչանօք: Եւ ոչ այլում իմիք ցանկայ, այլ 'ի նմա՝ զոր պինդ ունի, երջանիկ լինն անուշութեամբ քաղցրանայ, և քաղցրութեամբ զուարճանայ: Ապա եթէ մնասի իւիք մտածութեամբ, կամ զբաղանօք իրաց առ փոքր մի քեցեսցի անտի, անհնարին Ճեպով անդր դառնալ աճապարէ, աքսորանս անձին համարեալ այլուր երբէք դեգերիլ արտաքոյ նորա: Վասն զի որպէս չիք վայրկեան, յորում ոչ վայելեսցէ կամ զմայլեսցի մարդ 'ի մարդասիրութեանն Աստուծոյ, սոյնպէս չպարտի լինել վայրկեան՝ յորում չուն ինցի զնա ներկայ յուշի իւրում:

Սորին աղագաւ ոչ ընդ թեթեւ յանցանօք է այն, որ միանգամ 'ի խօսելն ընդ Աստուած յաղօթս՝ փոյթ ընդ փոյթ վայրավանի 'ի նորուն ներկայութենէ, իբր մեկնելով յաչաց նորա՝ որպէս թէ ոչ տեսանիցէ կամ ոչ լուիցէ: Եւ այս լինի, յորժամ զհետ երթայ վատթար և տարադէպ խորհրդոց իւրոց, և նախապատիւ քան զնա առնէ զնչին արարած՝ յոր դիւրաւ ցնդին հայեցուածք մտաց, այս է՝ շատ ևս ուրոՀելով զայն 'ի միտս կամ խորհելով՝ քան զԱստուած, զոր պարտի անդադար յուշ ածել իբրև Արարիչ, երկիրպագանել որպէս Փրկիչ, յուսալ որպէս Կենագործիչ, և երկնչիլ որպէս 'ի Դատաւորէ:

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս օտարանալոյ յաշխարհէ, և մերձենալոյ առ Աստուած.

Որ միանգամ՝ սիրես զաշխարհ,
Տես թէ ինչքն գնացքդ անվրթար.
Եւ որ երթասդ ընդ այդ ուղի,
Ի մահառիթ և զարտուղի։

Արդ այսուհետև խոյս տուր ով մարդ առ փոքր մի 'ի զբաղմանց քոց այսի, և թաքո զանձն քո յաղմկայոյզ խորհրդոցդ։ Ի բաց թօթափեա արդ ըզծանրաբեռն հոգս, 'ի բաց դիր զտարժանաւոր երկպառակութիւնս. պարապեա առ ժամանակ մի Աստուծոյ, և սակաւ մի հանգիջիր 'ի նմա։ Մուտ 'ի սենեակ սրտի քո, արտաքսեա զամենայն բաց յԱստուծոյ՝ և յորոց օգտեն 'ի խնդրել զնա, և դրօք փակելովք խնդրեա զնա։ Արդ ասասցէ Ա-

տուծոյ սիրտ քո բոլոր։ Խնդրեմ զե-
ռեաս քո, զերեաս քո տէր խնդրեմ։

Եւ արդ աղէ տէր Աստուած իմ, դու-
ուսո զիմ սիրտ, թէ ո՞ւր և որո՞վ օրի-
նակաւ խնդրիցէ զքեզ, ո՞ւր և ո՞ր պէս
գտանիցէ զքեզ։ Տէր, եթէ չէս աստա-
նօր, ուրանօր 'ի բացականութեան ըզ-
քեզ խնդրեցից։ Ապա եթէ ամենայն
ուրեք ես, զի՞ է զի ոչ տեսանեմ զքեզ
առաջիկայ։ Բայց ստուգապէս քնակես
'ի լոյս անմատոյց։ այլ զիարդ մա-
տեայց 'ի լոյս անմատոյց։ Կամ ո՞ ա-
ռաջնորդեսցէ ինձ և տարեալ կացու-
ցէ առընթեր լուսոյդ, զի տեսից զքեզ
'ի նմա։ Եւ դարձեալ՝ որո՞վք նշանօք,
և ո՞ր դիմօք զքեզ խնդրեցից։ Ոչ տեսի
զքեզ երբէք տէր Աստուած, ոչ եր-
բէք ծանեայ զերեսս քո։ Զի՞նչ ա-
լասցէ ո՞ բարձրեալդ տէր, զի՞նչ առ-
նիցէ տարաշխարհիկ այս քո վտարան-
դի։ Զի՞նչ գործեսցէ ծառայ քո՝ անձ-
կացեալ 'ի սէր քո, և հեռագոյն ընկե-
ցիկ յերեսաց քոց։ Ահաւասիկ յոգւոց
եղանէ տեսանել զքեզ, և երեսք քո
հեռի են յոյժ առ 'ի նմանէ։ Մերձե-

նալ առ քեզ փափաքէ, և անմերձէ-
նալի է բնակութիւն քո։ Գտանել ըզ-
քեզ ցանկայ, և անգիտանայ խնդրել
զտեղի քո։ Առ քեզ է տարփացեալ,
և ոգիտանայ զդէմն քո։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Զիաւրդ եղև մարդոյ կորուսանել զԱստուած, և որպէս պարտ է խրա-
դրել.

Տէր տէր, Աստուած իմ էս դու և տէր իմ, և էս ոչ տեսի զքեզ երբէք. դու ստեղծեր զիս, և նորաստեղծեր. և զամենայն զքո բարիս շնորհեցեր ինձ. և էս տակաւին ոչ տեսի զքեզ, և ոչ ծանեայ։ Եւ պարզաբար՝ եղեալ եմ էս առ'ի զքեզ տեսանել. և ոչ էս ա-
ւարի ինչ, որ վասն արարայ։ Ո՞վ ա-
ւաղելի վիճակի մարդոյս. երբ կորոյս զայն ինչ, որ վասն եղև։ Աւաղ դառն և դժնդակ պատահիցս. բաբէ, զինչ

կորոյս, և զինչ եգիտ։ Զինչ գնաց, և զինչ մնաց։ Կորոյս զերանութիւն, առ որ արարաւ. և եգիտ զթշուառութիւն, յոր ոչն արարաւ։ Տեղի ետ գնաց այն, առանց որոյ ոչ ոք երջանկանայ. և եկաց մնաց, որ ինքնին սոսկ չուառական է։ Յայնժամ ուտէր մարդն զհաց հրեշտակաց, յորմէ սովեալ է այժմիկ. այժմ ուտէ զհաց ցաւոց, զոր յայնժամ անգիտանայր։

Ո՛վ դու տէր, մինչև յերբ մոռանաս խապառ. մինչև յերբ դարձուցանես զերեսս քո 'ի մէնջ։ Երբ հայեսցես 'ի մեզ, և լուիցես։ Երբ լոյս տացես աչաց մերոց, և ցուցցես մեզ զերեսս քո. Երբ տացես մեզ անդրէն ըզքեզ։ Նայեաց տէր և լուր. և լոյս տուր մեզ, և ցոյց մեզ զանձն քո։ Տուր մեզ անդրէն զքեզ, զի բարի լինիցի մեզ, առանց որոյ այսչափ չարիք անցանեն ընդ մեզ։ Հրաւիրեա զմեզ, օգնեա մեզ, աղաչեմ, տէր։ Դառնացաւ սիրտ իմ 'ի լքման իւրում։ Քաղցրացո զնա մըխիթարութեամբ քով, աղաչեմ տէր։ Սովեալ անձամբ եղի 'ի խնդիր քո. մի

արձակեր զիս նքթեալ առ 'ի քէն։ Քաղցեալ ոգւով մատեայ, մի մեկնեցայց նօթի։ Աղքատս առ Հոգի եկի, ողորմելիս առ ողորմածդ. մի դարձայց յեռս ունայն և ամաչեցեալ։

Կարկամեալ եմ տէր, և ոչ կարեմ այլուր հայել, բայց 'ի վայր. ուղղեա զիս, զի կարող եղէց 'ի վեր հայել կամ միտ դնել։ Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, ծածկեցին զիս, և որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։ Շրջեա զիս, և թեթևացո 'ի բեռանցս, զի մի կափուսցէ 'ի վերայ իմ գուբն զբերան իւր։ Ուստ ինձ խնդրել զքեզ, և ցոյց զքեզ խնդրողին. վասն զի ոչ խնդրել կարող եմ, եթէ ոչ դու ուսուցես. և ոչ գտանել, եթէ ոչ դու ցուցցես։ Խնդրեցիկ զքեզ փափաքելով, փափաքեցիկ քեզ խնդրելով, գտիցս սիրելով, սիրեցիկ զքեզ տանելով։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Բարոյախրատ Աստուծոյ.

Խոստովան լինիմ տէր և գոհանամ, որ արարեր զիս 'ի այն պատկեր քո, զի յիշատակաւ քոմ խորհեցայց զքէն, և սիրեցից զքեզ: Այլ այնպէս շաղախեալ է ապականութեամբ ախտից, և այնպէս թխացեալ ծխով մեղաց, մինչև անկարանալ առնել՝ վասն որոյ արարաւ, եթէ ոչ դու նորոգեսցես զնա 'ի նոր կերպարանս: Աղաչեմ տէր, որ տաս զգիտութիւն հաւատոց, տուր ինձ՝ որչափ և կարևոր դատիս, գիտել հաւատովք, զի դու ես՝ որպէս հաւատամք, և այն ինչ ես՝ զոր հաւատամք: Ապաքէն հաւատամք զքեզ գոլ այնպիսի ինչ, քան զոր ոչ ինչ առաւելագոյն կամ լաւագոյն մարթ է զմտաւ ածել: Արդ զի՞նչ իցես տէր Աստուած, քան զոր ինչ մի մեծագոյն կամ լաւա-

գոյն անհնար է երբէք ածել զմտաւ, եթէ ոչ այն ինչ, որ գոլով ծայրագոյն բարի ամենեցուն, և միայն ինքնագոյակ անեղական, զայլսն ամենայն աբար յոչնչէ։ Արդ ո՞ր բարի պակասէ ծայրագոյն բարւոյն, որով է ամենայն բարի։ Վասն որոյ դու ես արդար, Ճշմարիտ, երանելի, և որ ինչ այլ ելցէ, որոյ գոլն լաւ ևս է քան զոչն գոլ։

Բայց ո՞րպէս է, զի խնայես 'ի չարս, եթէ ես բոլորովիմբ ծայրագոյնս արդար։ Թերևս զի անհասանելի՞ է բարութիւն քո։ Ծածկեալ է այդ 'ի լոյս անմատոյց, յորում բնակես։ Սատուգապէս 'ի խորագոյն և 'ի գաղտնագոյն խորս բարութեան քո ծածկեալ կայ աղբիւր, ուստի բղխեն հոսանք գթութեան քո։ Վասն զի ուր բոլորովին և ծայրագոյն արդար ես, այլ տակաւին յայն տակս բարերար առ չարս գտանիս, վասն զի բոլորովին և ծայրագոյն բարի ես։ Քանզի նուազ բարի լինէիր, եթէ ոչ ումեք 'ի չարաց բարերար գտանէիր։ Վասն զի բարեգոյն ևս է՝ որ բարեաց միանգամայն և չարաց է բա-

լի, քան որ բարեաց ևեթ է բարի։ Եւ բարեգոյն է՝ որ բարին է չարաց ինա-յելով միանգամայն և պատժելով, քան որ պատժելով ևեթ։ Ապա ուրեմն վասն այն ողորմած ես, վասն զի բոլո-րովին և ծայրագոյն բարի ես։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Յաղագս զմայլեցուցիչ վայելիցն Աստուծոյ.

Ո՜վ անսահման բարութեանդ, որ այսպէս 'ի վեր ես քան զամենայն տե-սութիւն մտաց. եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութիւն քո, որ յայդպիսի հա-լուստ ճոխութենէ յառաջագայի։ Հեղ-ցի յանձն իմ, որ զեղու յորդութեամբ առ 'ի քէն։ Խնայեա գթութեամբ, զի մի վրէժ խնդրիցես արդարութեամբ։ Արդ՝ զարթիր անձն իմ, և ուղղեա ըղ-միտս քո ողջոյն, և խորհեաց ըստ քում կարի, թէ որչափ և որպիսի՞ ի՞նչ բա-րին այն, որ է Աստուած։

Զի եթէ մի մի 'ի բարեաց ախորժելիք են, քանի՞ ախորժ իցէ բարին այն, որ բովանդակէ զզուարճութիւն ամենայն բարեաց: Եւ այն՝ ոչ որպիսի առաք զփորձ յեղականս, այլ այնչափ անզուգական, որչափ խտիր է ընդ արարիչն և ընդ արարածս: Վասն զի եթէ բարի է կեանք արարածական, քանի՞ ևս բարի՝ կեանքն արարչական: Եթէ ցանկալի է փրկագործութիւն, քանի՞ ևս ցանկալի փրկութիւն՝ որ արարողն է ամենայն փրկութեան: Եթէ սիրելի է իմաստութիւն 'ի խորհրդեան իրացն ծանուցելոց, քանի՞օն սիրելի է իմաստութիւնն՝ որ զամենայնն արար և հաստատեաց յոչնչէ: Մինչ բանիս, եթէ բազմապատիկ և մեծամեծ են ախորժակք յիրս ախորժելիս, որպիսի՞ և ո՞րչափ ախորժ իցէ 'ի նմա, որ արար զնոյն ախորժելիս: ԲաՀբէ, որ միանգամ վայելեսցէ 'ի բարիս յայս, զի՞նչ լինիցի նմա. զի՞նչ ոչ լինիցի ընդ նա: Յայտ է, թէ զոր ինչ ոչ կամի, ոչ լինիցի: Վասն զի անդ եղիցին նմա բարիք հոգւոյ և մարմնոյ, զոր ակն ոչ է

տես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Տեսչ ծայրագոյն բարւոյ.

Այդ ով մարդ անոտի, հիմ ընդ բազումս յածիս վարանիս՝ խնդրելով ըզբարիս հոգւոյ քո և զմարմնոյ։ Սիրեա զմի բարի, յորում են ամենայն բարիք. և շատ է։ Տեսչա առ պարզապէս բարի, որ է ամենայն բարի. և շատ է։ Զի զինչ է, զոր սիրես մարմին իմ. զինչ է, որում փափաքես հոգի իմ։ Անդ է՝ զոր ինչ և սիրես. անդ է՝ իմ իմիք և փափաքես։ Եթէ գեղ զուարճացուցանէ, ծագեսցեն արդարք իբրև զարեգակն։ Եթէ արագութիւն կամ կորովութիւն կամ ազատութիւն մարմնոյ՝ որում ոչ կարիցէ զդէմ ունել և ոչ ինչ, եղիցին նման հրեշտակաց. վասն զի սերմանի մարմին շնչաւոր, և

յառնէ մարմին հոգևոր, յայտ է թէ ըստ կարողութեան, և ոչ եթէ ըստ բնութեան։

Եթէ ցանկալի է յերկարութիւն քա-ջառողջ կենաց, անդ եղիցի ողջ յաւի-տենականութիւն, և յաւիտենական ողջութիւն. զի արդարք յաւիտեան կեցցեն, և փրկութիւն արդարոց 'ի տեառնէ. եթէ յագուրդ, յագեսցին յերևիլ փառաց տեառն։ Եթէ արբե-ցութիւն, արբեսցին 'ի պարարտու-թենէ տանն Աստուծոյ։ Եթէ քաղցրա-ձայնութիւն, անդ զուարթունք միա-բան երգեսցեն երգս անլռելիս Աստու-ծոյ։ Եթէ որ և է փափկութիւն սուրբ, և ոչ անսուրբ, զուղխս փափկութեան տացէ նոցա տէր ըմպել։ Եթէ իմաս-տութիւն, նա ինքն Աստուծոյ իմաս-տութիւնն ցուցցէ նոցա զինքն գլխո-վին զիսկն իմաստութեան։ Եթէ բա-րեկամութիւն, սիրեսցեն զԱստուած առաւել քան զանձինս, և զմիմեանս որպէս զանձինս. և Աստուած զնոսա, քան թէ նոքա զանձինս. զի նոքա զնա և զմիմեանս նովաւ. իսկ նա զինքն և

զնոսա իւրեաւ։ Եթէ միաբանութիւն, ամենեցուն նոցա եղիցի կամք մի. զի ոչ այլ կամք եղիցի նոցա, եթէ ոչ ծայրագոյն կամքն Աստուծոյ։

Եթէ կարողութիւն, ամենակարող եղիցին 'ի խնդիրս կամաց իւրեանց, որպէս Աստուած իւրումն։ Վասն զի որպէս Աստուած կարող է՝ զոր կամի, իւրև, նոյնպէս կարողք եղիցին նոքա՝ զոր կամիցին, նովաւ։ Վասն զի որպէս նոքա ոչ այլ ինչ կամին, բայց զոր նա կամի, սոյնպէս նա կամիցի՝ որ զինչ նոքա կամիցին. և զոր ինչ կամիցին նոքա՝ անհնար է թէ ոչ լինիցի։ Եթէ պատիւ և մեծութիւն, Աստուած զիւր ծառայս բարիս և հաւատարիմս կացուցցէ 'ի վերայ բազում բարութեանց, զի և որդիք Աստուծոյ և աստուածք անուանեսցին. և եղիցին ժառանգք գլխովին Աստուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի։ Ապա եթէ աներկեան ապահովութիւն, այնպէս անքոյթ եղիցին հաւաստեօք՝ թէ ոչ երբէք իւրք իրօք պակասիլ ունի յինքեանց բարին այն, որչափ հաւաստի են՝ թէ ինքեանք

կամաւ իւրեանց ոչ ունին կորուսա-
նել զայն, և ոչ Աստուած՝ որ սիրեացն
զնոսա, ընդդէմ կամաց նոցա բառնալ
ունի զայն 'ի սիրողաց իւրոց, և ոչ իսկ
է ոք զօրագոյն քան զԱստուած, որ ո-
րոշեսցէ ընդ Աստուած և ընդ նոսա։
Իսկ խնդութիւն որպիսի՞ և ո՞րքան ա-
սիցես, ուր է այսպիսի և այսչափ բա-
րի։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Սէր սրբոց առ միմեանս յերկիրս.

Թեզ ասեմ սիրտ մարդկային, սիրտ
կարօտեալ, սիրտ փորձառու աղէտից
և թշուառութեանց, մանաւանդ թէ
ընկղմեալ 'ի թշուառութիւն, քանի՞ խըն-
դութիւն խնդայիր, եթէ սոքիմբք առհա-
սարակ Հոխանայիր։ Հարցջիր ցիսորշս
սրտի քո ցնեբբինս, եթէ կարող էին տա-
նել ուրախութիւն իւրեանց ընդ այսչափ
երանութիւն իւրեանց։ Այլ անշուշտ,

եթէ այլ ոք քո սիրական յամենայն սրտէ որպէս անձն քո՝ ունէր զայն ե-ղանութիւն, կրկնապատիկ լինէր քո ուրախութիւն. վասն զի ոչ նուազ ու-րախ լինէիր ընդ նա՝ որպէս ընդ անձն քո։ Ապա եթէ երկուք, կամ երեք, կամ ևս բազումք ունէին զնոյն, այն-չափ յաճախութեամբ ընդ մի մի 'ի նո-ցանէ խնդայիր, որպէս ընդ անձն քո, եթէ զմի մի ըստ անձին սիրէիր։ Եւ արդ զի՞նչ լինիցի յայն կատարեալ սէր անհամար հրեշտակաց և մարդկան, ուր ոք ոչ նուազ սիրէ զոք քան զանձն իւր։ Զի ոչ այլազգ խնդասցէ իւրա-քանչիւր ոք վասն այլոց իւրաքանչիւր՝ որպէս վասն անձին իւրոյ։

Արդ եթէ սիրտ մարդոյ դժուարաւ բաւական լինի տանել զխնդութիւն իւր ընդ մեծութիւն այնչափ բարու-թեանց անձինն, ի՞նչ բաւական լինիցի տանել զխնդութիւն անչափից զայն-չափ։ Եւ արդարև՝ որովհետև որչափ ոք զոք սիրէ, այնչափ խնդայ ընդ բա-րին նորա, զոր օրինակ յայնմ երա-նաւէտ երջանկութեան իւրաքանչիւր

ոք անհամեմատ օրինակաւ առաւել ունի սիրել զԱստուած քան զանձն իւր և քան զայլն առհասարակ ընդ իւր, սոյնպէս և՝ առաւել խնդասցէ անզուգական օրինակաւ ընդ երջանկութիւնն Աստուծոյ, քան ընդ երջանկութիւն իւր և այլոցն ամենեցուն ընդ իւր։ Եւ եթէ զԱստուած այնպէս սիրեսցեն յամենայն սրտէ, յամենայն մտաց և յամենայն անձնէ, զի տակաւին սիրոն ամենայն և միտքն ամենայն՝ և անձն ամենայն անբաւական գտանիցի առ չափ արժանեաց սիրելւոյն, ապա անշուշտ այնպէս խնդասցեն յամենայն սրտէ, յամենայն մտաց և յամենայն անձնէ, զի տակաւին սիրոն ամենայն և միտքն ամենայն՝ և անձն ամենայն, անբաւական գտանիցին առ լիութիւն խնդութեանն։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Անպատուհամ խնդրութիւն կենաց յաշխարհէ, և ընտանութիւն սիրոյ ընդ Աստուծոյ.

Աստուած իմ և տէր իմ, յոյս իմ և ուրախութիւն սրտի իմոյ, ասա ցանձն իմ եթէ այս է ուրախութիւնն այն, զորմէ ասացեր մեզ 'ի ձեռն միածնի քո. Խնդրեցէք և առնուցուք, զի ուրախութիւն ձեր լցեալ եղիցի: Վասն զի գոյ աւասիկ ուրախութիւն ինչ լիուլի և ծայրալիր: Լի սրտիւ, լի մտօք, լի անձամբ, լի լրութեամբ մարդոյն. և տակաւին 'ի վերայ այսր ուրախութեան կայ մնայ գերածայրեալ ուրախութիւն: Ապա ուրեմն ոչ բովանդակին այնր ուրախութեան ընդմտանիցէ յուրախացեալս անդր, այլ բովանդակապէս ուրախացեալքն մտանիցեն յուրախութիւն քո՝ տեառն իւրեանց:

Ասա տէր, ասա ծառայի քում՝ ներ-
քուստ 'ի սրտի իմում, եթէ այս է ու-
րախութիւնն, յոր մտանիցեն ծառայք
քո, որք մտանեսցեն յուրախութիւն
տեառն իւրեանց։ Այլ գիտեմք, զու-
րախութիւնն զայն՝ որով ուրախ լինի-
ցին ընտրեալք քո, ակն ոչ եռեալ,
ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ
անկաւ։ Ապա ուրեմն չև ևս ածի զմը-
տաւ կամ ասացի. Տէր, որչափ ուրախ
լինիցին ընտրեալք քո։ Ապաքէն այն-
չափ խնդասցեն, որչափ սիրեսցեն. և
այնչափ սիրեսցեն, որչափ զքեզ ծա-
նիցեն, տէր։ Եւ որչափ արդեօք սի-
րեսցեն։ Արդարև ակն ոչ եռեալ, և ոչ
ունկն լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ
անկաւ յասասի կեանս, թէ որչափ ծա-
նիցեն և սիրեսցեն զքեզ յանտի կեանս։

Արդ խնդրեմ 'ի քէն Աստուած իմ,
զի ծանեայց զքեզ, սիրեցից զքեզ, որ-
պէս զի խնդացից ընդ քեզ։ Եւ եթէ
չկարեմ 'ի կեանս յայս լիովին, գէթ
յառաջադէմ եղէց օր քան զօր, մինչև
եկեսցէ լրումն այն։ Յառաջադէմ լեցի
յիս աստանօր Ճանաչումն քո, զի անդ

եղեցի լեակատար։ Ասեցէ յիս ասանելոյ սէր քո, զի անդ եղեցի լեակատար։ Որպէս զի ասա ուրախութիւն իմ եցէ յինքեան մեծ, և անդ 'ի քեզ լցեալ։ Ասուած անսուտ, ժառեմ առնուլ՝ զոր խոստանասդ, զի ուրախութիւնն իմ լցեալ եղեցի։ Աւ այժմ զայնմանէ խորհեացին միտք իմ, զայնմանէ խօսեացի լեզու իմ, զնոյն սիրեացէ սիրտ իմ, և բարբառեացի բերան իմ։ Ի նոյն քաղցեցէ հոգի իմ, 'ի նոյն ծարաւեացի մարմին իմ. նմին փափաքեացէ բովանդակ գոյացութիւն իմ, մինչև մոկոյ յուրախութիւն տեառն իմոյ, ուր կայ մնայ ինձ կալ մնալ յաւիտեանս։



ՑԱՆԿ

Ա. Յաղագս անպատում քաղցրութեանն Աստուծոյ . . 1
Բ. Յաղագս թշուառութեան և տկարութեան մարդկան . 8
Գ. Յաղագս սքանչելի աստուածեղէն լուսոյ 14
Դ. Յաղագս մահկանացու բնութեան մարդկան 16
Ե. Զի՞նչ է յոչէութիւն դառնալ 19
Զ. Յաղագս գայթագղելոյ հոգւոյն 'ի մեղս 23
Է. Յաղագս բաղմագէմ բարերարութեանցն Աստուծոյ . 26
Ը. Յաղագս արժանաւորութենն մարդոյ հանդերձելոյ . . 30

Թ. Յաղագս ամենիշխան զօրութեանն Աստուծոյ . . . 35
Ժ. Յաղագս գովութենն Աստուծոյ որ'ի վերս է քան զվիտս. 37
ԺԱ. Յաղագս վստահութեան առ Աստուած 41
ԺԲ. Յաղագս որոգայթից ցանկութեանց 43
ԺԳ. Յաղագս մարդկային թշուառութեան, և բարերարութեանցն Աստուծոյ . . . 47
ԺԴ. Նայի Աստուած յամենայն ժամ'ի գործս և'ի խորհուրդս մարդկան . . . 52
ԺԵ. Զի մարդ չէ իմիք բաւական առանց աստուածատուր շնորհաց 57
ԺԶ. Յաղագս դիւին և բազմադէմ փորձութեանց նորա . . 62
ԺԷ. Թէ Աստուած լոյս է արդարոց. 66
ԺԸ. Յաղագս բարերարութեանցն Աստուծոյ 71
ԺԹ. Յաղագս եռանդեան սիրոյ . 77
Ի. Յաղագս նուաճելոյ Աստու-

ծոյ զամենայն ինչ ընդ ծա-
ռայութեամբ մարդկան . 79
ԻԵ. Յաղագս յուշ ածելոյ զա-
ռաւելութիւն երկնաւոր խոր-
հրդոց՝'ի քննութեան ժա-
մանակաւոր բարեացս . . 82
ԻԲ. Յաղագս 'ի բաց բառնալոյ աս-
տուածային քաղցրութեան
զամենայն զդառնութիւն աս-
տի կենցաղոյս 85
ԻԳ. Յաղագս զի յԱստուած հաս-
տատել արժան է զամենայն
ակնկալութիւն մեր եւ զկրճս
սրտի 89
ԻԴ. Թէ յԱստուծոյ է փրկու-
թիւն մեր 91
ԻԵ. Յաղագս տկարութիւն մարդ-
կային կամաց առ'ի բարին՝
առանց աստուածային շնոր-
հաց 94
ԻԶ. Յաղագս նախնի բարերարու-
թեանց Աստուծոյ . . . 96
ԻԷ. Յաղագս հրեշտակաց՝'ի պահ-
պանութիւն մարդկան կար-
դելոց 98

ԻԸ. Յաղագս խորին նախասահմանութեան և նախագիտութեան Աստուծոյ . . . 103
ԻԹ. Յաղագս որոց յառաջնումն արդարք գոլով դառնան յամբարշտութիւն, և որոց ընդ հակառակն 107
Լ. Թէ տաճար է Աստուծոյ հոգի հաւատացեալ . . . 110
ԼԱ. Թէ չէ մարթ գտանել զԱստուած զգայութիւնք ներքնովք կամ արտաքնովք . 112
ԼԲ. Յաղագս խոստովանութեան ճշմարիտ հաւատոյ . . . 124
ԼԳ. Խոստովանութեն անձին թըշուառութեան 132
ԼԴ. Խոկումն աստուածային մեծվայելչութեան 135
ԼԵ. Յաղագս ցանկութեան և ծարաւոյ հոգւոյն առ Աստ . . 139
ԼԶ. Յաղագս փառաց վերին հայրենեաց 147
ԼԷ. Աղօթք առ երրորդութիւն սուրբ 152

ՆՈՐԻՆ

ՍՐԲՈՅՆ ԱՒԳՈՍՏԻՆՈՍԻ

ԱՌՁԵՌՆԱԿԱՆ

Ա. Յաղագս սքանչելի խսկութեանն և ներկայութեանն Աստուծոյ 159
Բ. Յաղագս անձառ գիտութեանն, և տեսչութեանն Աստուծոյ . 161
Գ. Յաղագս տենչանաց աստուածիմաց հոգւոյ 164
Դ. Թէ որպէս պարտ է սիրել և խնդրել զՏէր 167
Ե. Տենչ հոգւոյ 169
Զ. Երջանիկ վիճակ հոգւոյ արձակելոյ յերկրաւոր բանտէս 172
Է. Բերկրապատարագ վիճակ երկնից արքայութեան . . . 175
Ը. Դարձեալ վասն արքայութեան 177
Թ. Աստուածային մխիթարու-

թիւնք յետ թախծութեաց
ոգւոյ սգաւորի 179
ԺԹ. Քաղցրութիւն սիրոյն Աստուծոյ 181
ԺԱ. Յաղագս խորհրդոյ փրկագործութեան, և հաղորդութեան 183
ԺԲ. Հոգեզուարճ խնդութիւն . 185
ԺԳ. Մարդեղութիւն բանին խաչիսկս յուսոյ մերոյ . . . 187
ԺԴ. Քաղցր յիշատակ Աստուծոյ. 188
ԺԵ. Իղձ կրելոյ զնեղութիւս վասն Քրիստոսի 191
ԺԶ. Զի՞արդ լինի ստանալ զարքայութիւն 193
ԺԷ. Վիճակ արքայութեան . . 194
ԺԸ. Թէ չունիմք ինչ փոխարինել Աստուծոյ բաց 'ի սիրոյ . 198
ԺԹ. Աստուած պահանջէ 'ի մեզ զիւր նմանութիւն ըստ սիրոյ 200
Ի. Վիճակ հոգւոյ աստուածասիրի 202
ԻԱ. Մարդասիրութիւնն Աստուծոյ 205

ԻԲ. Յիշատակ վերայ փրկչին . 207
ԻԳ. Զօրութիւնք սքանչելի վերայ փրկչին 209
ԻԴ. Խորհրդածութիւն սիրոյն Քրիստոսի 211
ԻԵ. Բաղձանք սրտից մերոց առ ծայրագոյն բարին, և զօրութիւն կամաց 214
ԻԶ. Ճանաչումն Հշմարտութեան . 216
ԻԷ. Ներգործութիւնք Հոգւոյն սրբոյ 219
ԻԸ. Աստուածսիրութիւն . . 221
ԻԹ. Խաղաղութիւն սրտի յԱստուած՝ աստուածամերձութեամբ 223
Լ. Յաղագս օտարանալոյ յաշխարհէ, և մերձենալոյ առ Աստուած 225
ԼԱ. Զի՞արդ եղև մարդոյ կորուսանել զԱստուած, և որպէս պարտ է խնդրել . . 227
ԼԲ. Բարութիւնն Աստուծոյ . 230
ԼԳ. Յաղագս զմայլեցուցիչ վայելչին Աստուծոյ 232
ԼԴ. Տէնչ ծայրագոյն բարւոյ . 234

ԼԵ. Սէր սրբոց առ միմեանս յերկինս 237
ԼԶ. Անպատում խնդութիւն կենացն յաւիտենից, և ընտանութիւն սիրոյ ընդ Աստուծոյ 240

ՀՀ Ազգային գրադարան
NL0694604